2023

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(ԱՆ)ԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ, ՀԱՅԱՍՏԱՆ

FRIEDRICH EBERT STIFTUNG

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրատարակիչ
Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Հայաստան
Երևան 0002, Մոսկովյան փող. 31.76/1

Հրատարակչի ներկայացուցիչներ
Մարսել Ոյոթիգ, ՖԷՀ
Լիանա Բաղալյան, ՖԷՀ

Հեղինակներ
Հարություն Վերմիշյան
Սոնա Բալասանյան
Տատյանա Դարբինյան

Թարգմանիչ
Լիանա Ամիրաղյան

Խմբագիր
Աստղիկ Վարդանյան

Տպագրություն
«Տպարան» հրատարակչություն, տպաքանակ՝ 1000 օրինակ

Ձևավորում: GOLDLAND MEDIA GmbH

ISBN: 978-9939-1-1626-6

Սույն հրատարակության մեջ ներկայացված տեսակետները, կարծիքները և եզրակացությունները կարող են չարտացոլել Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի տեսակետները: Գրքում տեղ գտած տվյալների ճշգրտության համար պատասխանատու են հեղինակները:

© Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Հայաստան, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԱՌԱՋԱԲԱՆ 4

2 ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6

3 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10

4 ՄԱՍ ԱՌԱՋԻՆ: ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ 14

5 ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 20

6 ՄԱՍ ԵՐՐՈՐԴ: ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 28

7 ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ 44

8 ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ: ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԿՐՈՆ 60

9 ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ. ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԳՏՈՒՄՆԵՐ. ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ ԵՎ ԱՊԱԳԱ 82

10 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 104

11 ՀՂՈՒՄՆԵՐ 108

12 ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՈՒ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 112

13 ՖԷՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 120

1

ԱՌԱՋԱԲԱՆ

Որո՞նք են Հայաստանի երիտասարդության մտահոգությունները, ձգտումներն ու արժեքները 2018 թվականի թավշյա հեղափոխությունից, 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից և, իհարկե, Covid-19 համաճարակից հետո:

Վերջին հինգ տարիները կարևոր նշանակություն ունեցան Հայաստանի Հանրապետության համար: Երիտասարդները վճռորոշ դեր խաղացին 2018 թվականի թավշյա հեղափոխության մեջ, որը հայտնի է նաև որպես երիտասարդական հեղափոխություն: Այս նույն երիտասարդները ստիպված էին դիմակայել Արցախյան 44-օրյա պատերազմի բոլոր ծանր հետևանքներին և համաճարակի դժվարություններին:

Բարեբախտաբար, այս վայրիվերումներից հետո Հայաստանում երիտասարդության պահանջներն ու ակնկալիքները դեռ բարձր են: Այնուամենայնիվ, հանրային դիսկուրսը հաճախ ընկնում է ծայրահեղությունների մեջ. մենք կամ գերազանց երիտասարդություն ունենք, կամ ամբողջ սերունդը կորած է: Իրականությունն ավելի բարդ է: Հետազոտության արդյունքները հետաքրքիր պատկեր են ուրվագծում Հայաստանում երիտասարդների մասին՝ ցույց տալով այն մարտահրավերները, որոնց հետ նրանք առերեսվում են տնտեսական, քաղաքական և անձնական կյանքի առումով՝ հիմնականում այդ խնդիրները ծնողների հետ կիսելով: Հայ երիտասարդների համար ընտանիքը կարևորագույն սոցիալական միավորներից և ինստիտուտներից է:

Ուսումնասիրությունը բացահայտում է Հայաստանի երիտասարդների հոգսերը, ձգտումները, արժեքները և ապրելակերպը: Երիտասարդները, ովքեր այսօր 14-29 տարեկան են և մեծացել են անկախ Հայաստանում, կոչվում են «Անկախության սերունդ»: Նրանք բախվում են տնտեսական, քաղաքական և ֆիզիկական անապահովության, որը պայմանավորված է անբավարար կրթական համակարգով, գործազրկության բարձր մակարդակով, կիսաժողովրդավարական քաղաքական կառուցվածքով և տարածաշրջանային հակամարտությունների շարունակական սպառնալիքով:

Հետազոտությունը հիմնված է համապետական ներկայացուցչական հարցման վրա, որն անցկացվել է Հայաստանում 2022 թվականի մայիսից մինչև հունիս՝ 14-ից 29 տարեկան երիտասարդների շրջանում: Այն հիմնված է Shell Youth ուսումնասիրության վրա, որը պարբերաբար անցկացվում է Գերմանիայում և ապացուցվել է, որ այն արժեքավոր ցուցանիշ է հասարակության միջնաժամկետ զարգացման համար: **Ֆրիդրիխ-Էբերտ Հիմնադրամը** մի շարք նմանատիպ ուսումնասիրություններ է իրականացրել Արևմտյան Բալկանյան երկրներում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում: Այս ուսումնասիրությունը կազմում է Արևելյան գործընկերության երկրներում (ներառյալ՝ Վրաստանն ու Ադրբեջանը) կատարված ուսումնասիրությունների շարքի մի մասը: Բոլոր ուսումնասիրություններն իրականացվել են երկրների միջև համեմատություն կատարելու համար:

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, Հայաստան

2

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«(Ան)կախության սերունդ-Հայաստան-2023» հետազոտությունը բացահայտում է երկրի երիտասարդության տրամադրությունների, կարծիքների, ընկալումների և ակնկալիքների կարևոր կողմերը: Արդյունքները ցույց են տալիս, որ հայ երիտասարդության ներկայիս կենսակերպն ու դիրքորոշումները քաղաքական ճգնաժամերից և պատերազմից հետո վկայում են հակասական արժեքների և սոցիալական հակասությունների մասին: Այս հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել Հայաստանում երիտասարդների կրթության, զբաղվածության, քաղաքական մասնակցության, մտահոգությունների, ինքնության ձգտումների, կրոնի, հանդուրժողականության, ընտանեկան կյանքի, ժամանցի և ապրելակերպի խնդիրներին: Հետազոտության հիմնական արդյունքները հետևյալն են.

- Հայ երիտասարդները հակված են իրենց սոցիալ-տնտեսական վիճակը գնահատելու լավ՝ մյուսների համեմատ թե՛ իրենց համայնքում, թե՛ երկրում:
- Միևնույն ժամանակ իգական սեռի ներկայացուցիչներն իրենց սոցիալ-տնտեսական վիճակն ավելի ծանր են գնահատել, քան արական սեռի ներկայացուցիչները:
- Երիտասարդների միայն 1/3-ն ունի անձնական եկամուտ: 1/4-ը կախված է ծնողներից, և նույնիսկ աշխատողների 1/4-ը ֆինանսապես կախված է մեկ այլ անձից (սովորաբար ամուսնու ծնողներից):
- Երիտասարդների շրջանում իգական սեռի ներկայացուցիչները և գյուղաբնակները ֆինանսապես ամենակախվածն են:
- Քաղաքի երիտասարդներն ավելի հաճախ են ընդունվում ուսումնական հաստատություններ, քան գյուղական բնակավայրերում:
- Հարցված երիտասարդների գրեթե կեսը զբաղված է, իսկ արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ են ներգրավված աշխատաշուկայում:
- Ուսումնական հաստատություններ չհաճախողների (չսովորողների) և չաշխատող երիտասարդների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներ են, ովքեր գյուղական բնակավայրերից են և ամուսնացած:
- Երիտասարդների միայն 16%-ն է որևէ տեսակի կամավորական աշխատանք կատարել վերջին տարվա ընթացքում:
- Հայ երիտասարդության կեսից ավելին հիմնականում չի հետաքրքրվում քաղաքականությամբ: Ընդ որում, քաղաքականությամբ ընդհանրապես չհետաքրքրվողները 18-25 տարեկան միջնակարգ կրթությամբ իգական սեռի ներկայացուցիչներ են Երևանից:
- Երկրի առջև ծառացած խնդիրներից երիտասարդներն առավել կարևոր են համարում հարևան երկրների հետ հակամարտությունը, տարածքային ինտեգրումը և արտաքին քաղաքական լարվածությունները: Նրանք երկրորդային են համարում այնպիսի սոցիալ-տնտեսական հարցերը, ինչպիսիք են գործազրկությունն ու աճող գները:
- Երիտասարդների մեծամասնությունը նախընտրում է, որ Հայաստանը մոտ և համերաշխ լինի Արևմուտքի հետ, իսկ Ռուսաստանի նկատմամբ նման դիրքորոշում ոչ ոք միանշանակ չի ընդգծել:

- Երիտասարդների ծնշող մեծամասնությունը Հայաստանը համարում է եվրոպական երկիր՝ Եվրոպան ավելի շատ ընկալելով որպես դրական և/կամ վերացական, քան բացասական երևույթ:
- Երիտասարդների ընկալումներում Եվրոպայի բացասական ենթատեքստը հիմնականում կապված է եվրոպականացման և ավանդական արժեքների բախման հետ:
- Հայաստանի ազգային անվտանգության և Հայաստանի տնտեսական զարգացման տեսակետից երիտասարդները կարծում են, որ համա-գործակցությունը պետք է առաջին հերթին լինի Ռուսաստանի, իսկ երկրորդ հերթին՝ ԱՄՆ-ի հետ:
- Հայ երիտասարդները հակված են կարծելու, որ ռազմական կառույցները, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն և ՀԱՊԿ-ը, ավելի շատ բացասական դեր ունեն Հայաստանի համար, իսկ միջազգային ֆինանսական և քաղաքացիական կառույցները՝ ավելի դրական:
- Ավելի երիտասարդ և իգական սեռի մասնակիցները հակված են ընդգծելու Եվրոպական միության և միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՀԱՊԿ-ը և ՆԱՏՕ-ն, ավելի դրական դերը Հայաստանի համար:
- Հայաստանի երիտասարդության ծնշող մեծամասնությունը շեշտում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ որպես իր ինքնության կարևոր բաղադրիչ:
- Հայաստանի երիտասարդների ծնշող մեծամասնությունը հակված չէ ինքնորոշվելու որպես եվրոպացի: Միևնույն ժամանակ՝ բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները և ավելի բարձր տարիքի մարդիկ հակված են իրենց համարելու ՀՀ քաղաքացիներ և, հետևաբար, իրենց ընդհանրապես եվրոպացի չեն համարում:
- Հայ երիտասարդության հիերարխիկ արժեքային համակարգում առաջին տեղում են անհատական հատկանիշներն ու առաքինություններն ընդգծող արժեքները, երկրորդ տեղում՝ ընտանեկան արժեքները: Միևնույն ժամանակ քաղաքացիական մասնակցության և/կամ ներգրավվածության արժեքները գրեթե չեն ընդգծվում:
- Երիտասարդների արժեքներից ամենամեծ արժեքն է համարվում անձնական արժանապատվությունը, հարգանքը, հավատարմությունը, մարտական ոգին և ամենաքիչը՝ նորարարական ոգին: Ավելի քիչ կարևորություն տրվող արժեքներից են ալտրուիզմը, հումորի զգացումը և պարկեշտությունը:
- Երիտասարդությունը բանակը, եկեղեցին և ոստիկանությունը համա-րում է ամենավստահելի ինստիտուցիոնալ կառույցները, մինչդեռ ամենաանվստա-հելինե-ը քաղաքական կուսակցություններն են, ՀԼՄ-ները և գործող նախագահը:
- Հինվորականներին, եկեղեցուն, ոստիկանությանը, դատարաններին և արհմիություններին ավելի շատ վստահում են քիչ կրթված արական սեռի ներկայացուցիչները, ավելի երիտասարդները, գյուղաբնակ երիտասարդները:

- Հայ երիտասարդները հիմնականում ապրում են իրենց ծնողների կամ ամուսնու/կնոջ հետ և հիմնականում լավ հարաբերություններ են ունենում ծնողների հետ:
- Տղամարդիկ, հատկապես ավելի երիտասարդները լավ հարաբերություններ ունեն իրենց ծնողների հետ, մինչդեռ կանայք հաճախ տարաձայնություններ են ունենում ծնողների հետ, չնայած որ կոնկրետ խնդիրներ չունեն:
- Երիտասարդների գրեթե կեսը Խորհրդային Միության փլուզումը դիտարկում է որպես վատ երևույթ:
- Ավելի երիտասարդ արական սեռի ներկայացուցիչները հաճախ են մեկնում արտերկիր կրթություն ստանալու և/կամ աշխատելու:
- Երիտասարդ երևանաբնակ կանայք նախընտրում են մեկնել ԱՄՆ, մինչդեռ համեմատաբար ավելի բարձր տարիքի երիտասարդ տղամարդիկ նախընտրում են գնալ Ռուսաստան:
- Հայ երիտասարդները հիմնականում միտված են կարծելու, որ կլիմայական փոփոխությունը գլոբալ սպառնալիք է, և, լսելով կլիմայի փոփոխության և դրա նվազեցմանն ուղղված ջանքերի մասին, նրանք հիմնականում զայրույթ, անօգնականություն, անտարբերություն և վախ են զգում, քչերն են հույս և վստահություն հայտնում:
- Հայ երիտասարդների մեծամասնությունը ավելի հակված է մտածելու, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում Արցախյան պատերազմը կվերսկսի: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի հետ մերձեցման կարևորությունն առավել ընդգծված է այն երիտասարդների շրջանում, ովքեր կարծում են, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում Արցախյան նոր պատերազմի հավանակությունը մեծ է:
- Չնայած դրան, երիտասարդների մեծամասնությունն ավելի լավատես է ապագայի նկատմամբ՝ հավատալով, որ հինգ տարի հետո իրենց ընտանիքի կենսապայմաններն ավելի լավն են լինելու:

3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եթե 2016 թվականին ակտուալ էր հայաստանյան երիտասարդությանը դիտարկել հետխորհրդային վերափոխումների համատեքստում՝ բնորոշելով որպես անկախության սերունդ (Mkrtichyan et al., 2016), ապա 2020 թվականից հետո մենք գործ ունենք հասարակական նոր որակ/ների հետ, ուր երիտասարդի կերպարը կառուցվածքայնացվում է ռազմաքաղաքական (Արցախյան 44-օրյա պատերազմ) և առողջապահական (Covid19) ճգնաժամերի ֆոնին: Հատկապես վերջին երկու տարիներին Հայաստանն անցել է լուրջ ցնցումների միջով, որոնց ազդեցությունը շոշափելի է կենսագործունեության բոլոր ոլորտներում: Այս ամենին այսօր ավելանում են համաշխարհային մարտահրավերները՝ պայմանավորված գերտերությունների շահերի և ազդեցության շրջանակների վերափոխմամբ, սոցիալական արդարության և ուժի ֆենոմենների վերաիմաստավորմամբ: Առկա սոցիալական լարվածությունը դիտարկելի է թե անձնային/ներանձնային, թե խմբային և թե ինստիտուցիոնալ մակարդակներում:

Սոցիալական ճգնաժամերը, պատերազմով պայմանավորված սոցիալ-հոգեբանական տրավման, այդ ֆոնին սոցիալ-քաղաքական տրամադրությունների փոփոխություններն անդրադառնում են հատկապես երիտասարդների վրա՝ հանգեցնելով նրանց էմոցիաների, հավատալիքների և գործելակերպի վերափոխմանը: Այսօր հրատապ են երիտասարդների վերա/սոցիալականացման, նրանց խնդիրներին ժամանակին լուծումներ տալու, երիտասարդների հանդեպ ճիշտ քաղաքականություն վարելու հրամայականները:

Սույն հետազոտությունը լավագույն հնարավորություններից է ըմբռնելու այսօրվա երիտասարդին, նրա խնդիրները հասցնելու քաղաքական և սոցիալական որոշում կայացնողներին:

Սույն հետազոտության շրջանակներում, երիտասարդության սահմանման դասական մոտեցումների կողքին (Hurrelmann & Quenzel, 2015; Scott & Marshall, 2005, p. 813; Woodman, 2012), այն կդիտարկվի որպես անձի զարգացման և կայացման նշանակալի փուլ, սոցիալապես կառուցված կարգավիճակ և կենսակերպ: Համաձայն այս մոտեցման, **երիտասարդը** անհատ է՝ ընդգրկված անձնային զարգացման, հասարակության մեջ տեղ զբաղեցնելու և հասարակական պատասխանատվություն ստանձնելու գործընթացներում, իսկ **երիտասարդությունը** հասարակության զարգացման հիմնական սոցիալական ռեսուրսն է և զարգացման հիմնահարցերի լուծման սոցիալական մոդելը (Cote, 2018):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է Միացյալ Թագավորության R-Research Limited-ի կողմից Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի (ՖԷՀ) Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի խնդրանքով և Հիմնադրամի հետ խորհրդակցելով: Ուսումնասիրությունն օգտագործում է ինչպես քանակական, այնպես էլ որակական մոտեցումներ՝ ուսումնասիրելու Հայաստանում 14-29 տարեկան երիտասարդների դիրքորոշումները, ընկալումները և կարծիքները:

Ընտրանքը և տվյալների հավաքագրման ընթացակարգը մշակվել են R-Research-ի կողմից՝ Բեռլինի, արևելյան Եվրոպայի և միջազգային հետազոտությունների կենտրոնի (ZOiS) դոկտոր Ֆելիքս Կրավացեկի օգնությամբ և հաստատվել ՖԷՀ-ի կողմից: Հարցաթերթը պատրաստվել է անգլերենով՝ խորհրդակցելով Երևանի և Բեռլինի ՖԷՀ գրասենյակների հետ: Քանակական ուսումնասիրության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի մայիսի 30-ից մինչև 2022 թվականի հունիսի 16-ն ընկած ժամանակահատվածում: 14-29 տարեկան 1200 հարցվողների ազգային ներկայացուցչական ընտրանք է հավաքվել Երևանում գործող «R-Insights» ընկերության կողմից: Հարցվողներն ընտրվել են բազմաստիճան շերտավորված կլաստերային ընտրանքով: Տնային տնտեսությունների հարցվողներն ընտրվել են՝ օգտագործելով տարիքային և սեռային քվոտան: Միջին հաշվով, իրականացված հարցազրույցները տևել են մոտ 45 րոպե՝ 14.38 րոպե ստանդարտ շեղումով:

Ստորև բերված վերլուծությունն օգտագործում է հետախուզական և հաստատող վիճակագրական վերլուծության տարրեր: Եթե այլ բան նշված չէ՝ տարբերությունները վիճակագրականորեն նշանակալի են և բացահայտված են համապատասխան ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ՝ հիմնական ժողովրդագրական տվյալների վերահսկմամբ: Հարմարության համար խմբերի միջև եղած տարբերությունները ներկայացված են որպես խաչաձև աղյուսակներ: Որոշ դեպքերում կլորացման սխալների պատճառով համամասնությունները կարող են չավելանալ մինչև 100 կամ ունենալ 1% անհամապատասխանություն իրական և հաղորդված տվյալների հետ:

Ինչ վերաբերում է հետազոտության որակական մասին, ապա Երևանում 14-29 տարեկան երիտասարդների շրջանում չորս ֆոկուս-խմբային քննարկումներ են անցկացվել: Ֆոկուս խմբերը կազմակերպվել և անցկացվել են “R-Insights”-ի կողմից՝ R-Research -ի անմիջական ղեկավարությամբ: Հետազոտական գործիքները, ներառյալ քննարկման ուղեցույցը, մշակվել են ՖԵՀ-ի դոկտոր Ֆելիքս Կրավացեկի և R-Research-ի հետ: Քննարկվել են բազմաթիվ թեմաներ, ինչպիսիք են անձնական կյանքն ու COVID-19 համաճարակը, քաղաքականության և ժողովրդավարության ընկալումները, այսօրվա մարտահրավերները ողջ աշխարհի հասարակությունների համար, Խորհրդային Միության փլուզման վերաբերյալ տեսակետները և Եվրոպային պատկանելու զգացումներն ու արտագաղթը: Ֆոկուս խմբերն առցանց դիտարկվել են R-Research-ի և ՖԷՀ-ի հետազոտողների կողմից: Ֆոկուս խմբային քննարկումները ձայնագրվել և պահպանվել են: Ֆոկուս խմբերի քննարկումների ընթացքում մասնակիցները պատասխանել են կարճ առցանց հարցման, որը լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրել որակական տվյալների վերլուծության համար: Այս զեկույցում որակական ուսումնասիրություններից ստացված ընդհանրացումները թեմատիկորեն ներկայացված են հետազոտության քանակական մասի արդյունքներին զուգահեռ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Հետազոտությունն իրականացվել է 2022-ի ամռանը, որի արդյունքները պետք է դիտարկել այս կոնկրետ ժամանակաշրջանի համատեքստում՝ հաշվի առնելով այն փաստը, որ հարցումն անցկացվել է ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակ՝ նախքան ադրբեջանական ագրեսիան, սահմանային լարվածության աճը և 2022 թվականի սեպտեմբերյան ռազմական գործողությունները: Հատկապես սեպտեմբերյան դեպքերից հետո ՀԱՊԿ միջամտության և ԱՄՆ ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսիի այցի մասին հանրային չիրականացված ակնկալիքներն իրենց առանձնահատուկ ազդեցությունն են թողել հայ երիտասարդների ներկա ընկալումների վրա, ինչը չի արտացոլվում այս վերլուծության մեջ: Սոցիալապես և քաղաքականապես զգայուն թեմաները և Ռուսաստանի իմիջի հակասական ընկալումները պետք է դիտարկել այս համատեքստում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ.
տվյալները ներկայացված են կլորացման կանոններին համապատասխան: Եթե որոշ դեպքերում արժեքների հանրագումարը 100% չէ, դա կամայական որոշման արդյունք չէ. նախնական արժեքները պահպանված են և ներկայացված տվյալներում որոշ տարբերությունները տասնորդական արժեքների չներկայացման արդյունք են: Սրանով են պայմանավորված գրաֆիկներում արտահայտված որոշ (ոչ նշանակալի) շեղումները:

4

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ: ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեև հայ երիտասարդների ապրելակերպը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է պատկերացում կազմել մակրո-սոցիալական միջավայրի և այն երկրի մշակույթի մասին, որտեղ նրանք ապրում են, սակայն այս առումով կարևոր է նաև տարբեր հարցերի վերաբերյալ նրանց սուբյեկտիվ տեսակետների (կարծիքների) մասին տեղեկատվության ստացումը:

Ընդհանուր սոցիալական համատեքստում երիտասարդների ապրելակերպն ընդհանուր առմամբ ավելի դինամիկ է (Furlong & Cartmel, 2006), քան ավագ սերնդինը, ինչպես նաև այսօրվա երիտասարդներն ունեն ավելի շատ հնարավորություններ այս ճկունության համար (թվային, տեխնոլոգիական, գլոբալ և այլն): Մյուս կողմից, հայ երիտասարդների վերաբերյալ նախորդ ուսումնասիրությունները ցույց են տվել նրանց հուզական և սոցիալ-տնտեսական կախվածությունն իրենց ընտանիքներից, ավելի կոնկրետ՝ ծնողներից (Մանուկյան, 2011; Մկրտիչյան և այլոք, 2016): Սա ցույց է տալիս, որ կարևոր է անդրադառնալ ընտանեկան կապերին և սուբյեկտիվ կախվածություններին՝ հասկանալու համար, թե ինչպես են ապրում հայ երիտասարդները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- Հայ երիտասարդներն իրենց սոցիալ-տնտեսական բարեկեցությունը գնահատում են միջինից լավ:
- Շատ կանայք իրենց սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարում են ավելի վատ, քան տղամարդիկ, 25-29 տարեկան շատ երիտասարդներ գնահատում են իրենց սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ավելի վատ, քան 14-17 տարեկանները:
- Երիտասարդներն ընդհանուր առմամբ կարծում են, որ իրենք սոցիալ-տնտեսական առումով ավելի ապահովված են, քան իրենց երկրում և համայնքում այլ մարդիկ:
- Չափահաս երիտասարդների միայն 1/3-ն ունի անձնական եկամտի աղբյուր, մինչդեռ 1/4-ը կախված է հայրերից:
- Նույնիսկ 1/4-ն այն երիտասարդների, ովքեր ունեն անձնական եկամտի աղբյուր, կախված են որևէ այլ անձից:
- Չափահաս կին երիտասարդների միայն 1/4-ն է ֆինանսապես անկախ:
- Գյուղաբնակ երիտասարդները քաղաքաբնակ երիտասարդների համեմատ ավելի շատ կախվածություն ունեն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հայ երիտասարդների՝ իրենց սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատականը բացահայտելու համար չափվել է նրանց սուբյեկտիվ բարեկեցությունը՝ գնահատելով հարցվողների նյութական բարեկեցության մասին սեփական ընկալումը: Մասնակիցներին հարցրել են, թե ինչպես կգնահատեն իրենց տնային տնտեսությունների վիճակն առաջնային ռեսուրսների ու ծառայությունների հասանելիության տեսանկյունից:

Սուբյեկտիվ բարեկեցությունը չափողփոփոխականը փոխակերպվել է կարգային սանդղակի՝ մեկը համապատասխանում է ամենացածր սոցիալ-տնտեսական վիճակին (սննդի անապահովություն, այսինքն՝ ոչ բավարար գումար սննդի համար) և յոթը՝ ամենաբարձրին (մենք նյութական դժվարություններ չենք զգում): Հաշվարկվել են ընկալվող տնտեսական իրավիճակի միջին արժեքները: Ինչպես ցույց է տրված գծապատկեր 1-ում, հարցվողի սեռը, տարիքը և կրթությունը փոխկապակցված են նրա սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատման հետ: Սուբյեկտիվ ընկալման տարբերությունը հատկապես նկատելի է սեռերի միջև: Այստեղ մենք տեսնում ենք, որ արական սեռի դեպքում միջին արժեքն ավելի բարձր է (5.1) քան իգական սեռի ներկայացուցիչների դեպքում (4.4): Բացի այդ, 25-29 տարեկան հարցվողները հակված են գնահատելու իրենց սոցիալ-տնտեսական կարգավիճակը մի փոքր ավելի ցածր (4.5), քան 24 տարեկանից ցածր տարիքի հարցվողները (4.8 և 4.9).

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. **ԸՆԿԱԼՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԻՋԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ, ԲԱՑԻ ՆՐԱՆՑԻՑ, ՈՎՔԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԵՆ «ՉԳԻՏԵՄ» ԿԱՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԻՆ)[1]**



1 Այստեղ և մնացած դեպքերում ներկայացված երկչափ կապերը վիճակագրորեն նշանակալի են:

Այնուհետև հարցվողներին խնդրել են համեմատել իրենց նյութական վիճակը նախ՝ նույն համայնքում (մեծ ու փոքր քաղաքներ, գյուղ) բնակվողների հետ, այնուհետև հայաստանցիների հետ: Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ Հայաստանում երիտասարդների մեծ մասը կարծում է, որ իրենք նյութական նույն վիճակում են իրենց նույն համայնքի մյուս անդամների նման (65.4%) և ինչպես մյուս հայերը (61.2%): Երիտասարդների մոտավորապես 13%-ը կարծում է, որ իրենք ավելի վատ վիճակում են, քան մյուսներն իրենց երկրում, և միայն 5.7% -ն է նույնը կարծում՝ իրենց համայնքի այլ մարդկանց հետ համեմատությամբ: Հարցվածների մեկ քառորդից ավելին կարծում է, որ իրենք տնտեսապես ավելի լավ վիճակում են, քան մյուսները՝ կամ իրենց համայնքներում(26.0%) կամ Հայաստանում, կամ երկուսն էլ (28.8%)

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել երիտասարդների վերաբերմունքին տնտեսական տարբերությունների նկատմամբ: Մասնավորապես մասնակիցներին հարցրել են տնտեսական անհավասարության մասին: Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ տնտեսական անհավասարությունը բացասական երևույթ է, և նրանք հակված են մտածելու, որ երկրում այն պետք է ավելի ցածր լինի: Մասնակիցները հիմնականում այն կարծիքին էին, որ Հայաստանում անհավասարությունը միջին կամ բարձր է: Քննարկումների ընթացքում նշվեց, որ Խորհրդային Միության փլուզումից հետո անհավասարությունն ավելի բարձրացավ:

Նկատի ունեմ, որ ... մեր օրերում կան մարդիկ, ովքեր կամ հարուստ են, կամ աղքատ: Մնացածները կամ անտեսում են նրանց, կամ... [Իգական, 15 տարեկան]

Մասնակիցների մեծամասնությունը տնտեսական անհավասարությունը համարում է սոցիալական անհավասարության կամ անարդարության ձև: Մասնակիցներից մեկը նշել է մարդկանց միջև առկա տարբերությունները տարբեր գներով ապրանքների հասանելիության առումով:Մասնակիցների մեծամասնությունը դրական է վերաբերվում իր կարծիքով «արդար» անհավասարությանը, սակայն դրա մասին չունի հստակ կարծիք կամ պատկերացում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. **«ԵԹԵ ՄՏԱԾԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՊՐՈՒՄ ԵՆ ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ/ԵՐԿՐՈՒՄ, ԻՆՉՊԵ՞Ս Է ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՄԵՄԱՏՎՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԵՏ (%)»**



ԱՊՐՈՒՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայ երիտասարդների կենսապայմաններն ավելի լավ հասկանալու համար հետազոտության ընթացքում մասնակիցներին հարցրել են իրենց եկամտի աղբյուրների մասին: Բազմակի ընտրության վերլուծության վրա հիմնված արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3-ում: Հարցվածների ամենամեծ խումբը (35.8%) ասում է, որ ունի անձնական եկամուտ: Բացի այդ, 25.6%-ը նշում է, որ իրենց լիովին աջակցում են ծնողները: 13.8%-ը ստանում է ֆինանսական օգնություն ծնողներից կամ հարազատներից, իսկ 10.7%-ը լիովին աջակցություն է ստանում ամուսնուց/կնոջից: Համեմատաբար, հարցվածների շատ փոքր մասն է նշել ընտանեկան կենսաթոշակ (6.5%), պետական աջակցությունը (3.5%), դրամաշնորհները կամ ուսանողական վարկերը (2.8%), կամ վարձակալությունը (1.3%)[2].

Այնուհետև, հայ երիտասարդների կախվածությունը կենսապահովման տարբեր աղբյուրներից մեկ այլ տեսանկյունից հասկանալու համար, վերը նկարագրված տարբերակները խմբավորվել են եկամտի 3 աղբյուրների մեջ. երիտասարդներն իրենք իրենց ապրուստն ապահովում են, կախված են ինչ-որ մեկից կամ պետական աջակցություն են ստանում:

Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ հարցվածների սեռը, տարիքը, աշխարհագրական դիրքը, կրթությունը և զբաղվածության կարգավիճակը խիստ կապված են ապրուստի տարբեր միջոցներից կախվածության հետ: Նրանք, ովքեր ունեն որոշակի զբաղվածություն, ավելի հավանական է, որ իրենք իրենց ապրուստն ապահովեն (67.3%), մինչդեռ նրանք, ովքեր գործազուրկ են, ավելի հավանական է, որ կախված լինեն ինչ-որ մեկից (75.2%): Ինչ վերաբերում է կրթական կարգավիճակին, ապա որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան մեծ է այդ անձի անձնական եկամուտ ունենալու հավանականությունը: Հակառակը նույնպես ճիշտ էր: Նույն պնդումը տեղին է տարբեր տարիքային խմբերի համար, քանի որ 14-17 տարեկան հարցվողներն ավելի հավանական է, որ կախվածություն ունենան ինչ-որ մեկից (77.3%), մինչդեռ 25-29 տարեկաններն ավելի հավանական է, որ ունենան սեփական եկամուտ (50.0%): Գծապատկերը նաև ցույց է տալիս, որ կին հարցվողներն ավելի հավանական է, որ կախվածության մեջ լինեն որևէ մեկից (65.0%), քան տղամարդ հարցվողները (39.1%): Համապատասխանաբար, տղամարդիկ ավելի հավանական է, որ ունենան սեփական եկամուտ (51.7%), քան կանայք (24.4%): Աշխարհագրական վայրերի տարբերություններն այնքան էլ ուշագրավ չեն: Այնուամենայնիվ, պետական աջակցությունն ամենաբարձրը գյուղաբնակների դեպքում է (13.6%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. **ՈՐՊԵՍ ԵՔԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)**



2 Արդյունքները ներկայացված են կշռված տվյալների հիման վրա: Այսուհետ, բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված չեն «Հրաժարվում եմ պատասխանել», «Չգիտեմ» կամ «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակները, նշանակում է, որ այդ տարբերակները ընդհանուր պատասխանների մեջ նշանակալի չեն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. **ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (%)**



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ երիտասարդները սուբյեկտիվորեն բարձր են գնահատում իրենց սոցիալ-տնտեսական բարեկեցությունը. նրանց ամենահրատապ տնտեսական կարիքները բավարարվում են: Իրենց համայնքներում/հարևանությամբ և Հայաստանում ապրող այլ մարդկանց համեմատ, երիտասարդներն իրենց համարում են սոցիալ-տնտեսական առումով ավելի լավ վիճակում: Մյուս կողմից, տնտեսական բարեկեցության սուբյեկտիվ գնահատումը հիմնված չէ նրանց անձնական կարողությունների և ինքնապահովման կարողությունների վրա, քանի որ երիտասարդների միայն 1/3-ն ունի անձնական եկամտի աղբյուր, և նրանցից 1/2-ը կախված է ծնողներից, հարազատներից և/կամ կնոջից կամ ամուսնուց: Ընդհանուր առմամբ, երիտասարդների 1/4-ն ունի ինչ-որ ֆինանսական կախվածություն մեկ այլ անձից, ընդ որում, կանայք այս առումով ավելի խոցելի են, նրանցից միայն 1/4-ն ունի անձնական եկամտի աղբյուր: Ֆինանսական կախվածությունը նաև ավելի բարձր է գյուղական բնակավայրերում բնակվողների շրջանում՝ համեմատած քաղաքաբնակների հետ:

5

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կրթական համակարգը հետխորհրդային շրջանում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, և ինչպես ոլորտի փորձագետներն են նշում՝ հետխորհրդային երկրներում կրթական բարեփոխումները գաղափարական հակամարտություններ ի մարտադաշտ են (Wiseman, 2010): Ընդհանրապես Հայաստանում կրթության ոլորտում բախվում են Խորհրդային, Ամերիկյան և Եվրոպական գաղափարախոսական մոտեցումները:

Թղթի վրա գրված քաղաքականությունից մինչև հայաստանյան երիտասարդների ամենօրյա կրթական իրականություն տանող ճանապարհը դեռևս հստակ տարորոշված չէ և քիչ է հետազոտված (Մկրտիչյան և այլոք, 2016, էջ. 21): Երիտասարդների զբաղվածության հարցերը նույնպես առանցքային են և անմիջականորեն առնչվում են կրթական համակարգի խնդիրներին: Երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները բազմաբնույթ են՝ փոխկապակցված կյանքի որակի և սոցիալական բարեկեցության խնդիրների հետ: 2019 թվականի վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում 15-24 տարեկան երիտասարդների գործազրկության մակարդակն ավելի քան երկու անգամ (27%) բարձր է Եվրոպական երկրների միջին մակարդակից (11%): Բացի այդ, գործազրկության մակարդակն էլ ավելի բարձր է եղել 15-29 տարեկան երիտասարդների շրջանում՝ 33%: Այդ թիվը հատկապես բարձր է եղել կանանց շրջանում (42%) (Քարամյան, 2020): Ավելին, 20-29 տարեկան երիտասարդների զբաղվածության մակարդակը նվազել է 2014-2019 թվականներին ընկած ժամանակահատվածում (Զբաղվածության կարգավորման պետական ծրագիր 2022, 2021): Երիտասարդների աշխատանքային պայմանների վերաբերյալ հետազոտությունն ընդգծում է երիտասարդության հետ կապված ոլորտի մարտահրավերները՝ հատկապես լուրջ խնդիրներով պրեկարային զբաղվածության ոլորտում (Վերմիշյան և այլոք, 2021):

Այս տվյալների հիման վրա կարևոր է նկարագրել այն սոցիալական միջավայրը, որտեղ հայ երիտասարդները կրթություն են ստանում, և որոշել, թե որոնք են այսօր կրթություն-աշխատաշուկա հարաբերությունների հիմնական առանձնահատկությունները: Ի լրումն ֆորմալ կրթական և աշխատանքային փորձի, կարևոր է ճանաչել կամավորական պրակտիկան՝ որպես աշխատանքի և կյանքի առավելապես ոչ ֆորմալ և արժեքային դրսևորում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- 25-29 տարեկանների միայն 7%-ն է հաճախում որևէ կրթական հաստատություն:
- Քաղաքաբնակ երիտասարդներն ավելի հաճախ են ընդունվում որևէ կրթական հաստատություն, քան գյուղաբնակ երիտասարդները:
- Ուսումնական հաստատություններում արական և իգական սեռի ներկայացուցիչների ներգրավվածությունը հավասար է:
- Հայաստանյան երիտասարդները հիմնականում գոհ են իրենց ստացած կրթությունից:
- Գյուղաբնակներն ավելի գոհ են իրենց ստացած կրթությունից, քան Երևանի բնակիչները:
- Հարցված երիտասարդների մոտ կեսն աշխատում է:
- Զբաղվածության ոլորտում ամենաշատը ներգրավված են չամուսնացած երիտասարդները , բարձրագույն կրթություն ունեցողները և արական սեռի ներկայացուցիչները:
- Հարցված երիտասարդների 1/3-ը չի սովորում և միևնույն ժամանակ չի աշխատում:
- Ոչ կրթության մեջ ներգրավված, ոչ էլ աշխատող երիտասարդների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներ են, գյուղաբնակ և ամուսնացած:
- Երիտասարդների միայն 16%-ն է վերջին տարում կատարել որևէ տեսակի կամավորական աշխատանք:
- Բարձրագույն կրթությամբ չամուսնացած տղամարդիկ ամենաշատն են ներգրավված կամավորական աշխատանքում:
- Կամավորական աշխատանքներում ներգրավված երիտասարդների մոտ կեսն այն կատարել է ուսումնական հաստատությունում կամ քաղաքացիական հասարակության որևէ կազմակերպությունում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ընդհանուր առմամբ, 14-29 տարեկան հայ երիտասարդների 38.4%-ը սովորում է որևէ ուսումնական հաստատությունում (Գծապատկեր 5): Այստեղ մենք կարող ենք տեսնել կրթության և տարիքի, սեռի, աշխատանքի, բնակավայրի տեսակի, և ամուսնական կարգավիճակի միջև կապը: Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը (94.4%), որոնց տարիքը համընկնում է միջնակարգ դպրոցի տարիքի հետ, հայտնում է, որ սովորում է ֆորմալ ուսումնական հաստատություններում: Ավելի քիչ թվով 18-24 տարեկան երիտասարդներ են սովորում (39.1%): Ավելի բարձր տարիքային խմբերում (25-29 տարեկան), միայն 7.1%-ն է հայտնում, որ հաճախում է ուսումնական հաստատություն: Արդյունքները ցույց են տալիս նաև, որ մայրաքաղաքի և այլ քաղաքային բնակավայրերի երիտասարդներն ավելի հաճախ են սովորում ուսումնական հաստատություններում (համապատասխանաբար 42.4% և 41.9%), քան գյուղական բնակավայրերում (33.6%): Սովորելու հավանականությունը գրեթե հավասար է տղամարդ և կին հարցվողների դեպքում: Ավելին, մենք կարող ենք տեսնել, որ ամուսնացածների համեմատ (4.5%) չամուսնացած հարցվածներից ավելի մեծ թվով երիտասարդներ են սովորում (40.5%) : Ինչ վերաբերում է զբաղվածության կարգավիճակին, ապա գործազուրկ հարցվողներն ավելի հավանական է, որ ներգրավված կլինեն կրթության մեջ (46.6%) քան նրանք, ովքեր որոշակի զբաղվածություն ս (27.1%):

Ընդհանուր կրթական միջավայրն այնուհետև ուսումնասիրվել է՝ ըստ տվյալ պահին ստացվող կրթության որակից հայ երիտասարդների բավարարվածության մակարդակի: Ընդհանուր առմամբ մեծամասնությունը գոհ է (84.2%): Գծապատկեր 6-ը նաև ցույց է տալիս, որ հարցվողներիի տարիքը, բնակավայրի տեսակը և կրթական մակարդակը կանխատեսում են, թե արդյոք նրանք գոհ են այն կրթությունից, որ ստացել են կամ ստանում են: 14-17 տարեկան հարցվողներն ավելի գոհ են իրենց կրթության որակից (91.7%), քան այլ տարիքային խմբերի երիտասարդները (83.6% և 80.8%): Նույն կերպով նախնական կամ թերի միջնակարգ կրթություն ստացած հարցվողները մի

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (%)**



փոքր ավելի բավարարված են (88.8%) քան նրանք, ովքեր ավարտել են միջնակարգ կրթությունը (84.9%) կամ ստացել են ամբողջական կամ թերի բարձրագույն կրթություն (77.8%): Մինչդեռ կան որոշ տարբերություններ՝ կախված հարցվողների աշխարհագրական դիրքից: Մայրաքաղաքում ապրող երիտասարդները պակաս գոհ են կրթության որակից (78.0%), քան այլ քաղաքային (83.9%) կամ գյուղական բնակավայրերում (88.3%):

Չնայած այս բոլոր տարբերություններին, որոնք վիճակագրորեն նշանակալի են, ուշագրավ է, որ բոլոր ժողովրդագրական խմբերում հարցվածների մեծ մասը գոհ է կրթության որակից:

Բացի այդ, նկատվում են որոշ աննշան տարբերություններ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք հարցվողները ներկայումս դպրոցական են, թե՞ ոչ: (Գծապատկեր 7):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. **ԳՈ՞Հ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՑ, ՈՐ ՍՏԱՆՈՒՄ ԵՔ/ՍՏԱՑԵԼ ԵՔ (% ՇԱՏ ԳՈՀ ԵՄ ԵՎ ԻՆՉ ՈՐ ԱՌՈՒՄՈՎ ԳՈՀ ԵՄ, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. **ԳՈ՞Հ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՑ, ՈՐ ՍՏԱՆՈՒՄ ԵՔ/ՍՏԱՑԵԼ ԵՔ (% ՇԱՏ ԳՈՀ ԵՄ ԵՎ ԻՆՉ ՈՐ ԱՌՈՒՄՈՎ ԳՈՀ ԵՄ, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)**



ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ և ԿԱՐԻԵՐԱՅԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Ընդհանուր առմամբ, Հայաստանում 14-29 տարեկան երիտասարդների գրեթե կեսը (47.8%) աշխատում է (Գծապատկեր 8): Գծապատկեր 8-ը ներկայացնում է հարցվողի սեռի, տարիքի, կրթական նվաճումների, ամուսնական կարգավիճակի, աշխարհագրական դիրքի և զբաղվածության կարգավիճակի միջև կապը: Տղամարդ հարցվողների կեսից ավելին աշխատում է (56.4%), մինչդեռ կանանց միայն մեկ երրորդ մասն է աշխատում (29.3%): Ավելի երիտասարդ հարցվողների ավելի փոքր հատվածը զբաղվածություն ունի (20.7%), նույնն է նաև տարրական և թերի միջնակարգ կրթություն ունեցողների դեպքում (31.7%): Քաղաքային բնակավայրերում և մայրաքաղաքում ապրող երիտասարդներն ավելի շատ հնարավորություն ունեն աշխատանք ունենալու (47.7% և 43.3%), քան գյուղական բնաավայրերում ապրողները (39.1%): Հետաքրքիր է, որ մայրաքաղաքի երիտասարդների դեպքում աշխատանք ունենալն ավելի քիչ հավանական է, քան այլ քաղաքների երիտասարդների դեպքում: Ինչ վերաբերում է ամուսնական կարգավիճակին, ապա միայնակ երիտասարդներն ավելի շատ են աշխատում (50.5%), քան ամուսնացածները (34.7%):

Հայաստանում երիտասարդների մեկ երրորդը ոչ սովորում է, ոչ էլ աշխատում (այսուհետ՝ «չի աշխատում, չի սովորում») ինչպես երևում է գծապատկեր 9-ում: Սեռը, աշխարհագրությունը, տարիքը և ամուսնական կարգավիճակը կանխատեսում են հարցվողների «չի աշխատում, չի սովորում» կարգավիճակը: Երիտասարդ տղամարդկանց հետ համեմատ (19.4%), երի-տասարդ կանանց շրջանում ավելի շատ են կրթություն չստացողները և չաշխատողները (19.4%): Ամուսնացած երիտասարդների կեսից ավելին (63.1%) «չի աշխատում, չի սովորում» կարգավիճակում են, մինչդեռ միայնակների՝ 27.5%-ը: 25-29 տարեկան ավելի բարձր տարիքային խմբերի հարցվածների 44.1%-ն ունի «չի աշխատում, չի սովորում» կարգավիճակ: Գյուղական բնակավայրերում հարցվածներից ավելի շատերն են «չի աշխատում, չի սովորում» կարգավիճակում գտնվում (35.9%) քան մայրաքաղաքաբնակները (26.9%) կամ այլ քաղաքների բնակիչները (25.9%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (%)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. **«ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ՉԻ ՍՈՎՈՐՈՒՄ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (%)**



ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՓՈՐՁ

Գծապատկեր 10-ը ցույց է տալիս հայ երիտասարդների կամավորական փորձը: Վերջին 12 ամիսների ընթացքում երիտասարդների միայն 15.9%-ն է կատարել չվճարվող կամավորական աշխատանք: Տղամարդ հարցվողներն ավելի հակված են ներգրավվելու կամավոր աշխատանքներում (17.3%), քան կանայք (14.5%), իսկ միայնակները մի փոքր ավելի շատ են չվճարվող կամավորական աշխատանք կատարել (18.1%), քան ամուսնացածները (10.2%): Լրիվ կամ թերի բարձրագույն կրթություն ունեցողների մոտ մեկ քառորդը զբաղվել է որոշակի կամավորական աշխատանքով, մինչդեռ նախնական թերի կամ ամբողջական միջնակարգ կրթություն ունեցողները մոտ երկու անգամ ավելի քիչ են ներգրավված եղել կամավորական աշխատանքներում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. **ՎԵՐՋԻՆ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉՎՃԱՐՎՈՂ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ Ե՞Ք (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)**



Տվյալները ցույց են տալիս, որ կամավորների մոտ մեկ քառորդը (26.1%) կամավորությամբ զբաղվել են դպրոցում կամ համալսարանում, և մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդը՝ հասարակական կազմակերպություններում (Գծապատկեր 11): Տասից մեկը կամավոր է եղել ասոցիացիաներում, ինքնակազմակերպվող նախագծերում կամ երիտասարդական կազմակերպություններում: Հարցվածների մոտ 5%-ը նշում է, որ կատարել է չվճարվող աշխատանք քաղաքացիական նախաձեռնություններում, փրկարար ծառայություններում կամ քաղաքական կուսակցություններում: Արհեստակցական միություններում կամավոր աշխատողների համամասնությունը գրեթե բացակայում է (0.3%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. **ՈՐՏԵ՞Ղ ԵՔ ԿԱՏԱՐԵԼ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՎԵՐՋԻՆ 12 ԱՄԻՍՆԵՐԻՆ (%, ԲԱԶՄԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կրթության մեջ հայ երիտասարդների ներգրավվածության ցուցանիշը եզակի ոլորտներից է, որտեղ նկատելի է գենդերային հավասարությունը: Դա պայմանավորված է մի կողմից հանրակրթության պարտադիր բնույթով, մյուս կողմից՝ բարձրագույն կրթության ոլորտում աղջիկների մրցունակությամբ: Այնուամենայնիվ, կրթություն-աշխատաշուկա կապը և կարիերա-կրթություն հարաբերությունը խեղաթյուրված են հետագա կյանքի ռազմավարությունների առումով: Կանայք հավասար չափով բարձրագույն կրթություն են ստանում, սակայն չեն շարունակում մասնագիտանալ և կարիերա չեն ստեղծում: Մասնավորապես հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներն ավելի շատ են ներգրավված աշխատաշուկայում, նրանց մեծամասնությունը տղամարդիկ են և/կամ չամուսնացած կին կամ տղամարդ: Ընտանեկան կարգավիճակի և կանանց զբաղվածության խնդիրները նույնպես արձանագրվել են երիտասարդության նախորդ հետազոտություններում (տե՛ս, օր.՝ Մկրտիչյան և այլոք, 2016): Ամենաէական ցուցանիշն այն է, որ հարցված երիտասարդների 1/3-ը չի աշխատում և չի սովորում միաժամանակ, նրանց մեծամասնությունը ամուսնացած գյուղաբնակ կանայք են:

Եթե աշխատուժում ներգրավվածությունը գենդերային առումով հեռու է հավասար լինելուց, ապա հետաքրքիր է տեսնել, թե ինչպիսին է պատկերը ոչ ֆորմալ և քաղաքացիական ներգրավվածության առումով: Ընդհանուր առմամբ, կամավորական աշխատանքը կամ կամավորությունը վկայում է քաղաքացիական հասարակության հիմնարար արժեքների վերարտադրության մասին, (Musick & Wilson, 2007, էջ. 459–485); որը սոցիալական համախմբվածության, մասնավորապես մասնակցության և ներառման կարևոր դրսևորում է (Strauß, 2008, էջ. 32):

Վերջին տասնամյակներում կամավորության՝ որպես գաղափարախոսության տարածումը և կամավորության՝ որպես քաղաքացիական պրակտիկայի ներդրումը հատկապես դրսևորվել է հետխորհրդային վերափոխումների համատեքստում: (Jukneviėius & Savicka, 2003; Վերմիշյան և Դարբինյան, 2021).

Չնայած դրան, Հայաստանում կամավոր գործունեության մեջ ներգրավված երիտասարդների մակարդակը բավականին ցածր է, ընդ որում, ներգրավվածության ամենաբարձր ցուցանիշը բարձրագույն կրթություն ունեցող / ստացողների, արական սեռի երիտասարդների ու չամուսնացածների շրջանում է: Կամավորական աշխատանքն առաջին հերթին իրականացվում է ուսումնական հաստատությունում կամ քաղաքացիական հասարակության որևէ կազմակերպությունում: Ավելին, վերջին ուսումնասիրություններից մեկը (Վերմիշյան և Դարբինյան, 2021) ցույց է տալիս, որ հայ երիտասարդների շրջանում կամավորական գործունեության գաղափարական հիմքերն ու մշակութային դրսևորումներն ունեն ռացիոնալ բնույթ՝ պայմանավորված առավելապես անձնական շահերի (սուբյեկտիվ նպատակներ և շահեր) գերակայությամբ, քան հասարակական/սոցիալական հետաքրքրությամբ:

6

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018-ին Հայաստանում զանգվածային քաղաքական բողոքի ցույցերը հանգեցրին իշխանափոխության, որը կոչվում էր «Թավշյա հեղափոխություն»: Հետխորհրդային շրջանում Հայաստանի որդեգրած ժողովրդավարացման ուղին կարծես թե հասել էր գագաթնակետին՝ ստեղծելով նոր հնարավորություններ ժողովրդավարական ինստիտուտների վերաակտիվացման համար: Այս իրադարձությունների համատեքստում հատկապես կենտրոնական էր երիտասարդության գործոնը: «Թավշյա հեղափոխությունը» բնորոշվեց որպես երիտասարդների հեղափոխություն, քանի որ երիտասարդությունը մասնակցում էր փողոցային ցույցերին և պետական քաղաքականությանը:

Պետական աշխատողների՝ հատկապես ղեկավարության երիտասարդացումը՝ ի դեմս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հակասության տեղիք տվեց «թարմության» և «փորձի» բախվող մեկնաբանություններով: Նորաստեղծ քաղաքական դիսկուրսը շատ արագ հնացավ երկու պատճառով: Նախ՝ հետհեղափոխական սոցիալական և քաղաքական ակնկալիքները արդյունքով չարդարացան: Երկրորդ՝ 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմը ստեղծեց հակասական հասարակական-քաղաքական միտումներ հասարակության և երիտասարդության շրջանում:

Այսօր հայ հասարակությունը, հատկապես երիտասարդությունը, զգայուն է ներքին և արտաքին պետական քաղաքականության նկատմամբ, և կարևոր է անդրադառնալ նրանց գաղափարական հայացքներին և քաղաքական մասնակցության ձևերին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- Հայ երիտասարդության կեսից ավելին ընդհանրապես չի հետաքրքրվում քաղաքականությամբ:
- Հայ երիտասարդները ավելի շատ նախընտրում են ներդրում կատարել հասարակական կամ քաղաքական կազմակերպություններում և մասնակցել համայնքային խնդիրների լուծմանը, քան ֆորմալ քաղաքական ներգրավվածություն ունենալ:
- Քաղաքականությամբ ընդհանրապես չհետաքրքրվողները 18-29 տարեկան կանայք են, ովքեր ապրում են Երևանում ՝ մինչբուհական կրթությամբ:
- Հայաստանի այժմ բախվող խնդիրներից երիտասարդներն առաջին հերթին ընդգծեցին հարևան երկրների հետ հակամարտությունը, տարածքային ինտեգրումը և արտաքին քաղաքական ճնշումները, միայն երկրորդ տեղում շեշտը դնելով այնպիսի սոցիալ-տնտեսական խնդիրների վրա, ինչպիսիք են գործազրկությունը և գների աճը:
- Ռազմական և քաղաքական հարցերը համեմատաբար ավելի կարևոր էին գյուղաբնակ երիտասարդության և իգական սեռի ներկայացուցիչների համար, իսկ սոցիալ-տնտեսական խնդիրների մասին ավելի շատ էին նշում Երևանի բնակիչները և արական սեռի ներկայացուցիչները:
- Երիտասարդների միայն 15.6%-ն է դժվարացել աջ կամ ձախ գաղափարախոսության տեսանկյունից խոսել, իսկ 29.4%-ը իր կարծիքն արտահայտել է ծայրահեղ բևեռների տեսանկյունից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ հայ երիտասարդների մեծամասնությունը (52.4%) համաձայն է, որ ժողովրդավարությունը Հայաստանի կառավարման լավագույն ձևն է, իսկ 24.6%-ը դեմ է արտահայտվել: Հարցվածներին առաջարկվել է գնահատել այսօր ժողովրդավարության փաստացի պրակտիկան: Երիտասարդների 39.9%-ը դրական է գնահատել, 28.5%-ը՝ բացասական, իսկ 31.6%-ը՝ ոչ դրական, ոչ բացասական (Գծապատկեր 12):

Հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր համաձայնել են, որ ժողովրդավարությունը Հայաստանի կառավարման լավագույն ձևն է, հիմնականում ունեցել են ամենացածր կրթական մակարդակը, իգական սեռի, ցածր տարիքի, և գյուղական շրջանում ապրող երիտասարդներ են: Այսօր Հայաստանում ժողովրդավարության փաստացի պրակտիկան դրական են գնահատել գյուղական շրջաններում ապրող ամենացածր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները: (Գծապատկեր 13):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. **ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (%, ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)

Ինչպես եք վերաբերվում այն պնդմանը, որ ժողովրդավարությունը կառավարման լավագույն ձևն է Հայաստանի համար: (Միայն «Աջակցում եմ» և «Լիովին աջակցում եմ» պատասխանները %)



Ինչպես կգնահատեք այսօր Հայաստանում ժողովրդավարության փաստացի պրակտիկան (միայն «Դրական» կամ «Շատ դրական» պատասխանները %)



Սույն հետազոտության որակական բաղադրիչն օգնում է վերհանել երիտասարդների կարծիքը քաղաքականության և ժողովրդավարության վերաբերյալ: Քաղաքական գաղափարախոսությունների մասին հարցին մասնակիցների տեսակետները բավականին բազմազան են: Մասնակիցներից ոմանք նշում են, որ կողմ են սոցիալիզմին, մյուսները՝ լիբերալիզմին, իսկ մյուսները նշում են պահպանողականությունը: Լիբերալիզմի դեպքում ամենացանկալին են համարվում հավասարությունն ու ազատությունը, սոցիալիզմի դեպքում՝ լավ զարգացած սոցիալական տնտեսությունը, պահպանողականության դեպքում՝ ազգային արժեքների պահպանումը:

Ընդհանրապես, եթե ուսումնասիրենք գաղափարախոսությունները բոլոր ազգերի մակարդակում, ես կընտրեմ լիբերալիզմը, բայց հայ ազգի դեպքում ազգայնականությունը համապատասխանում է իմ պատկերացումներին, իհարկե, ռացիոնալիզմի մեջ ազգայնականություն. ազգայնականություն ասելով՝ նկատի չունեմ վերցրեք սուրը և գնացեք ազատագրեք Արևմտյան Հայաստանը, ոչ: Ռացիոնալ մտածողության մեջ ունենալ ազգային մտածողություն: [արական սեռ, 21 տարեկան]

Կարևոր է նշել, որ ամենից հաճախ երիտասարդները հակված են մատնանշելու քաղաքական ռեժիմներ, երբ վերջիններիս հարցնում են նախընտրելի գաղափարախոսությունների մասին: Մեծամասնությունը նշում է ժողովրդավարությունը: Որոշ մասնակիցներ ավելի շատ են աջակցում բռնապետությանը: Հատկապես բարձր տարիքային խմբերում մասնակիցները նշում են բռնապետությունը՝ որպես ներկայիս Հայաստանի համար նախընտրելի տարբերակ: Նրանք որպես բռնապետության դրական կողմերնշում են միասնությունը, օրենքի պահպանումը և քաղաքացիների գիտակցությունը իրենց պարտականությունների մասին:

Մեր ժողովուրդը այսպիսին է. երբ օրենք ես սովորեցնում դրանից հետո էլ չեն կարողանում հասկանալ, որ պարտականություններ ունեն: Կարծում եմ՝ մի փոքր վաղ էր նման զարգացում ունեցող ժողովրդին սովորեցնել, թե որն է իրավունքը… [իգական սեռ, 25 տարեկան]

Ինձ թվում է, որ ժողովուրդը պետք է վախենա պետությունից, քանի որ այսօր ով անելիք չունի կամ դժգոհ է որևէ բանից, վերցնում է պաստառը ու անմիջապես գնում կառավարություն, ինչը չի պատժվում, ճիշտ չէ: Կամ, օրինակ, ով հայհոյանք է գրում երկրի ղեկավարին ուղղված, չի պատժվում: [արական սեռ, 25 տարեկան]

Ինչպես վերը նշվեց, երիտասարդների մեծ մասը հավատում է ժողովրդավարությանը: Նրանք ժողովրդավարությունն ասոցացնում են մի հասարակության հետ, որը բնութագրվում է հավասարությամբ, միասնությամբ, բարձր գիտակցությամբ, հարգանքով, հանդուրժողականությամբ, օրենքին հնազանդությամբ և կրթության բարձր մակարդակով: Մասնակիցների մեծ մասը նշում է ժողովրդավարության հետ կապված հետևյալ ասոցիացիաները. լսելի լինելը և մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների իրագործումը (օրինակ՝ խոսքի ազատությունը, ազատ կամքը և պաշտպանությունը): Մի փոքր խումբ էլ նշում է ազատ շուկան և կոռուպցիայի բացակայությունը, ինչը նույնպես ասոցացվում է ժողովրդավարության հետ: Մասնակիցները հաճախ նշում են ԱՄՆ-ը՝ որպես ժողովրդավարական երկրի օրինակ:

Դե, Ամերիկան է մտքովս անցնում, երբ լսում եմ «ժողովրդավարություն» բառը: [արական սեռ, 17 տարեկան]

Մասնակիցները հաճախ նշում են նաև մի քանի Եվրոպական երկրներ (ավելի հաճախ՝ Գերմանիա և Ֆրանսիա), իսկ մի փոքր խումբ էլ որպես ժողովրդավարական երկրներ նշեցին Կուբան և Չինաստանը:

Մասնակիցների կարծիքով՝ այս երկրների պես ժողովրդավար երկիր դառնալու համար Հայաստանին պակասում է հետևյալը.լավ կառավարություն և առաջնորդություն, արդյունավետ դիվանագիտություն, միջազգային հարաբերություններում արտաքին ազդեցությունից ավելի քիչ կախվածություն, բարձրորակ կրթություն, սոցիալական կապիտալ, ազգային միասնություն և ֆինանսական ռեսուրսներ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր առմամբ, Հայաստանի երիտասարդների մեծ մասը քաղաքական անտարբերություն է ցուցաբերում: Գծապատկեր 14-ը ցույց է տալիս, որ հարցվածների գրեթե երկու երրորդն ասում է, որ իրենք ընդհանրապես չեն հետաքրքրվում քաղաքականությամբ (59.1%): Այստեղ մենք ուսումնասիրում ենք հարցվողների տարիքի, սեռի, զբաղվածության կարգավիճակի, կրթական մակարդակի, աշխարհագրական դիրքի կապը քաղաքականության նկատմամբ հետաքրքրության աստիճանի հետ: Տվյալները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությամբ հարցվածները (ներառյալ թերի բարձրագույն) համեմատաբար ավելի քիչ են հայտնել, որ իրենք չեն հետաքրքրվում քաղաքականությամբ (52.1%), քան նախնական, ոչ լրիվ և ավարտած միջնակարգ կրթություն ունեցողները (63.1%): Անկախ սեռից կամ զբաղվածության կարգավիճակից, մեծամասնությունը գրեթե նույն աստիճանի հետաքրքրություն է հայտնում քաղաքականության նկատմամբ: Հետաքրքիր է, որ մինչև 17 տարեկան հարցվածներն ավելի քիչ են քաղաքականապես անտարբեր (54.7%), քան ավելի բարձր տարիքային խմբերի մարդիկ (61.5% և 62.1%): Երբ դիտարկում ենք աշխարհագրական դիրքերի տարբերությունները, ակնհայտ է, որ մայրաքաղաքի երիտասարդներն ավելի շատ անտարբեր քաղաքականության նկատմամբ (65.3%), քան այլ քաղաքներումև գյուղերում (57.3% և 60.0%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. **ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՎՔԵՐ ԱՍԵԼ ԷԻՆ, ՈՐ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՉԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՎՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)**



Գծապատկեր 15-ը պատկերում է երիտասարդների քաղաքացիական և քաղաքական ներգրավվածության ձևերը: Մոտավորապես տասից երկուսը մասնակցել են իրենց բնակավայրի խնդրի լուծմանը և տասից մեկը մտածել է դա անելու մասին: Երիտասարդների 9.1%-ը հայտնում է, որ նվիրատվություն է արել հասարակական կամ քաղաքական կազմակերպությանը, իսկ 13.3%-ը հնարավոր է համարում դա անելը: 7.1%-ը դադարել է իրեր գնել քաղաքական կամ բնապահպանական նկատառումներով, իսկ 6.6% -ը մտածում է դա անել: Երիտասարդների շատ քիչ մասն է նշում, որ կարծիք է հայտնել առցանց հանրային տարածքում մասնակցել ցույցերի, ստորագրահավաքների կամ մտածել դա անելու մասին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. **ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐ ԿԱՆ: ՎԵՐՋԻՆ ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ԱՐԵ՞Լ ԵՔ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ, ԿԱՄ ԼՈՒՐՋ ԿՄՏԱԾԵԻ՞Ք ԴԱ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (%)**



Ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով հավաքագրված որակական տվյալներն օգնում են ավելի լավ հասկանալ Հայաստանում երիտասարդության քաղաքական ներգրավվածության և քաղաքացիական մասնակցության պրակտիկան: Սկսենք նրանից, որ մասնակիցների մեծամասնությունը բողոքի ակցիաները համարում է կառավարության որոշումների վրա ազդելու արդյունավետ միջոց: Սակայն, նրանք կարծում են, որ բողոքի ակցիաները պետք է լինեն խաղաղ և օրենքներին համապատասխան: Բռնությունն ու գույքի ոչնչացումն անընդունելի են:

Դե, դա կախված է բողոքի տեսակից: Եթե խաղաղ է, ես միշտ կողմ եմ, եթե ավերածություններ կան, ես դեմ եմ:. [արական սեռ, 26 տարեկան]

Եթե իրադարձությունների ժամանակ արյունահեղություն չլինի, և բոլոր իրավական նորմերը պահպանվեն, դա ոչ թե ամոթալի է, այլ հպարտանալու բան: Կարծում եմ՝ մենք կարող ենք հպարտանալ, որ Հայաստանում ժամանակին տեղի է ունեցել թավշյա հեղափոխություն, չգիտեմ, բողոքի ցույցեր, որոնք ազդել են կառավարության գործողությունների վրա: [իգական սեռ, 16 տարեկան]

Ավելի բարձր տարիքով մասնակիցների մեծամասնությունն ասում է, որ մասնակցել է բողոքի ցույցերի՝ հատկապես 2018 թվականի թավշյա հեղափոխության ժամանակ: Մասնակիցների մեծ մասը պատրաստ է մասնակցել բողոքի ակցիայի, որն ուղղված է կառավարության փոփոխությանը կամ կոնկրետ որոշումների, ինչպիսիք են թանկացումները, սահմանների հետ կապված խնդիրները, աշխատավարձերի ու թոշակների բարձրացման պահանջը: Նրանք նաև պատրաստ են բողոքել այնպիսի օրենքների դեմ, ինչպիսին ԼԳԲՏ օրենքն է: Ավելի քիչ թվով մասնակիցներ պատրաստ են մասնակցել մարդու իրավունքների ոտնահարման դեմ բողոքի ակցիաներին (օրինակ՝ դիմակ կրելու պարտադիր բնույթ, պարտադիր թեստավորում կամ պատվաստում, խոսքի ազատության իրավունքի խախտում, քաղբանտարկյալների իրավունքների խախտում): 16-17 տարեկանների խմբում մասնակիցներից մեկն ինքնաբուխ պատրաստակամություն հայտնեց մասնակցել բնապահպանական թեմաներով բողոքի ակցիաներին. խմբի մյուս անդամները համաձայնեցին:

Մասնակիցների մեծ մասը առցանց բողոքի ակցիաները համարում է կառավարության վրա ազդելու անարդյունավետ միջոց: Դրան համահունչ՝ որոշ մասնակիցներ մասնակցել են առցանց արշավներին, որոնք ուղղված էին 44-օրյա պատերազմի ընթացքում միջազգային լսարանի իրազեկվածության բարձրացմանը. որոշ դեպքերում նրանք նաև օգնել են մոբիլիզացնել մասնակիցներին թավշյա հեղափոխության ժամանակ սոցիալական ցանցերի միջոցով և օգտագործել են առցանց ստորագրահավաք՝ բողոքելով անկախության 30-ամյակի միջոցառումների դեմ:

Ես մասնակցել եմ առցանց ստորագրահավաքի: Պատերազմի ժամանակ ես WhatsUp-ով և Viber-ով որքան հնարավոր էր շատ ընկերների հետ կիսվում էի նաև Արցախի մասին մի գերմաներեն երգով: Այս ակցիան Արցախի մասին իրազեկվածությունը բարձրացրեց: [արական սեռ, 27 տարեկան]

Մասնակիցների մեծ մասը կարևորում է քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին անկախ նրանց տարիքից ու կրթական մակարդակից: Մասնակիցներից ոմանք կարծում են, որ ընտրություններին քվեարկելու գնացողները պետք է ունենան բավարար իմացություն քաղաքական գործընթացներից, լրջորեն վերաբերվեն ընտրություններին և ունենան կոնկրետ դիրքորոշում և ձևավորված կարծիք:

Ընդհանուր առմամբ մասնակիցները նախընտրել են համընդհանուր ընտրական իրավունքը՝ 18 տարեկանից բարձր՝ անկախ կրթությունից: Չափահաս մասնակիցներից շատերը նշել են, որ իրենց ավելի ազատ են զգում 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո: 16-17 տարեկանների տարիքային խմբում մասնակիցների մեծ մասը դժվարանում է գնահատել այս խնդիրը՝ համեմատաբար ավելի երիտասարդ տարիքի պատճառով:

Հարցման արդյունքներին համապատասխան (Գծապատկեր 15), ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների մեծ մասն ասում է, որ իրենք չեն փոխել իրենց սպառողական վարքագիծը քաղաքական պատճառներով: Մի փոքր խումբ մերժել է գնել թուրքական արտադրանք Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, որոշ դեպքերում էլ բոյկոտել են նախկին պատգամավորին պատկանող դեղագործական ցանցը: Մասնակիցներից մեկը նշեց, որ իրենք միշտ փորձել են հայկական արտադրանք գնել՝ երկրի տնտեսության զարգացմանը նպաստելու համար:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այստեղ բացահայտվում են Հայաստանի համար ամենակարևոր խնդիրները՝ ըստ երիտասարդների ընկալումների (Գծապատկեր 16): Հարցվածների գրեթե մեկ հինգերորդը (18.6%) որպես կարևորագույն խնդիր նշում է հակամարտությունը հարևան երկրների հետ: Համապատասխանաբար, մի զգալի թիվ անդրադարձել է տարածքային ամբողջականությանը (15.3%), որին հաջորդել է ներքաղաքական լարվածությունը (13.7%): Որոշ տարբերություններ կան, երբ խոսքը վերաբերում է հայ երիտասարդների կողմից ընկալվող երկրորդ կարևորագույն խնդրին: Որպես երկրորդ կարևորագույն խնդիր շատերը նշում են գործազրկությունը (13.9%), որին հաջորդում են ներքաղաքական լարվածությունը (11.0%) և գների աճը (10.7%): Բնապահպանական խնդիրների և կլիմայի փոփոխության մասին պատասխանները գրեթե բացակայում են, որը վկայում է այն մասին, որ հիմնականում հայ երիտասարդներն այդ խնդիրները չեն ընկալում որպես իրենց երկրի համար կարևոր խնդիրներ: Հատկանշական է, որ մեծ թվով մարդիկ (38.0%) նշել են, որ կան նաև այլ կարևոր համարվող խնդիրներ, որոնքցանկում նշված չեն որպես տարբերակներ:

Որակական տվյալները համապատասխանում են հետազոտության արդյունքներին: Երկրի առջև ծառացած հիմնական խնդիրը, ինչպես նշեցին մասնակիցները, երկրի անվտանգությունն է: Անվտանգության շուրջ մտահոգությունը Արցախյան 44-օրյա պատերազմի, դրա վերսկսման վտանգի, Ադրբեջանի Հանրապետության սահմանին տիրող լարված իրավիճակի և սահմանամերձ շրջանների բնակչության անվտանգության բացակայության հետևանք է: Հաճախ հարցվողները նշում են կորոնավիրուսը՝ որպես կարևոր խնդիր (քննարկումները տեղի են ունեցել 2021 թվականի վերջին ամիսներին): Մասնակիցների մի փոքր խումբ էլ նշեց գների աճը, աշխատատեղերի պակասը, ներքաղաքական լարվածությունը, արտագաղթը և անարդյունավետ կառավարումը, ինչպես նաև կրթական և բնապահպանական խնդիրները (աղտոտվածություն):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16. **Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՊԱՀԻՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ/ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԸ (%)**



Տվյալները ցույց են տալիս, որ տարբերություններն ըստ սեռի, տարիքի և բնակավայրի տեսակի այնքան էլ մեծ չեն (գծապատկեր 17): Ինչևէ, որոշ տարբերություններ ուշագրավ են: Օրինակ, գյուղական բնակավայրերում ապրող հարցվողները մի փոքր ավելի հաճախ են կարծում, որ հարևան երկրների հետ հակամարտությունը կարևորագույն խնդիր է (23.3%), քան մայրաքաղաքում ապրողները (18.4%) կամ այլ քաղաքային բնակավայրերում ապրողները (11.6%): Մինչդեռ մայրաքաղաքի երիտասարդներին ավելի շատ է հետաքրքրում գների աճը (9.5%), քան գյուղական (5.3%) կամ այլ քաղաքային բնակավայրերում (3.6%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17. **ՄԻՆ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԱՅՍ ՊԱՀԻՆ. ԸՍՏ ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ, ՄԵԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)**



Ինչպես վերը նշվեց, ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ երիտասարդները հաճախ էին կարևորում կորոնավիրուսը՝ որպես Հայաստանի համար կարևորագույն խնդիր: Մինչդեռ, հարցման տվյալները ցույց են տալիս, որ հայ երիտասարդների 58.2%-ը կարծում է, որ կառավարությունը բավականին կամ շատ արդյունավետ կառավարել է Covid-19 համաճարակը, իսկ մնացածը (41.8%) հակառակ կերպ են մտածում (գծապատկեր 18): Որոշ տարբերություններ կարելի է դիտարկել՝ ելնելով հարցվողների սեռից, տարիքից, կրթությունից և բնակավայրի տեսակից: Մասնավորապես տղամարդ հարցվողներն ավելի շատ են հակված կարծել, որ կառավարությունը համաճարակի դեմ պայքարել է վատ կամ բավականին վատ (44.4%), քան կանայք (39.4%): Բարձրագույն կրթություն ստացած երիտասարդներն ավելի բացասական կարծիք ունեն Covid-19-ի դեմ կառավարության գործողությունների մասին (52.4%-ը նշում է վատ կամ բավականին վատ), քան ավարտած միջնակարգ կրթություն ունեցողները (40.0%) կամ նախնական և թերի միջնակարգ կրթություն ունեցողները (35.1%): 14-17 տարեկան երիտասարդ հարցվողները պակաս բացասաբար են վերաբերվում այս խնդրին, քան ավելի բարձր տարիքային խմբի երիտասարդները. մինչև 17 տարեկան երիտասարդների 68.0%-ը կարծում է, որ կառավարությունը շատ կամ ավելի շուտ արդյունավետ է կառավարել համաճարակը: Ինչ վերաբերվում է հարցվողների տեղաբաշխմանը, ապա այստեղ կարելի է նկատել, որ երևանաբնակները հակված են պատասխանելու այս հարցին ավելի բացասաբար (51.7%-ը նշում է վատ կամ բավականին վատ), քան մարզերի քաղաքային (40.4%) կամ գյուղական (36.4%) բնակավայրերում ապրողները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18. **ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐԵԼ COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (%)**



ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Նախ, քաղաքական գաղափարախոսությունը և հայացքները հետազոտվել են՝ հիմնվելով այն բանի վրա, թե ինչպես են հարցվածներն ընկալում իրենց սեփական համոզմունքները ձախ-աջ սպեկտրում: Արդյունքները ցույց են տալիս, որ 13.4%-ը նույնականացնում է իր քաղաքական հայացքները ծայրահեղ ձախերի, իսկ 16.0%-ը՝ ծայրահեղ աջերի հետ (Գծապատկեր 19): Հատկանշական է, որ 15.6%-ը դժվարանում է պատասխանել՝ ընտրելով «չգիտեմ» տարբերակը: Բացի այդ, 23.3%-ը ընտրում է «5»-ը իրենց առաջարկված 10 բալանոց սանդղակով: Պատճառը կարող է լինել այն փաստը, որ 5-ը հաճախ ընկալվում է որպես նման սանդղակի միջին կետ, և հարցվածները ցանկացել են ընտրել միջին որևէ արժեք, քանի որ ճշգրիտ կողմնորոշված չեն եղել: Հարկ է նշել, որ այս արդյունքները կարող են լինել ոչ այնքան ներկայացուցչական կամ վստահելի կոնկրետ այս դեպքում: Պատճառն այն է, որ հիմնականում հայաստանյան երիտասարդները կարող են դժվարանալ տարբերակել աջ ու ձախ քաղաքականությունը:

Ֆոկուս-խմբային քննարկումները հաստատում են դա: Հիմնականում երիտասարդները դժվարանում են տարբերակել ձախ և աջ քաղաքականության տարբերությունները. նրանք դա կապում են իշխանությունների ու ընդդիմության, ներկա ու անցյալ իշխանությունների, կառավարության ձախողման ու հաջողության հետ:

Երբ ասում ենք Ձախ, ես մտածում եմ ներկայիս կառավարության, ներկա ղեկավարության մասին: Երբ ասում ենք Աջ, ես մտածում եմ ընդդիմության մասին: Իմ կարծիքով, ազգը երկու մասի բաժանելը սխալ է, ինձ համար նախընտրելի է, որ նրանք միավորվեն, քան բաժանվեն երկու մասի: Ահա թե ինչպես են սկսվում քաղաքացիական պատերազմները տարբեր երկրներում, և դա մեզիսկապես պետք չէ մեր երկրում: [արական սեռ, 15 տարեկան]

ԳԾԱՊԱՏԿԵՐ 19. **ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԻՆՉՊԵ՞Ս ԿՊԱՏԿԵՐԵԻՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԱՅՍ ՍԱՆԴՂԱԿԻ ՎՐԱ՝ ՁԱԽԻՑ ԱՋ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Հայ երիտասարդների ընկալումները ձախ-աջ սպեկտրի վերաբերյալ լրացուցիչ չափվել են՝ հիմնվելով ձախակողմյան և աջակողմյան քաղաքականությունը նկարագրող մի շարք դատողությունների վրա: Հարցվողներին առաջարկել են գնահատել, թե ինչպես կբնորոշեն դրանք գաղափարախոսական առումով: Բոլոր պնդումների համար հարցվածների մեկ երրորդից ավելին ընտրել է «երկուսն էլ հավասարապես» տարբերակը (Գծապատկեր 20): Մինչդեռ տասը հարցվողներից առնվազն մեկը պատասխանել է «Չգիտեմ»: Ընդհանուր առմամբ, արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում երիտասարդները ճիշտ չեն տարբերում գաղափարապես ձախ կամ աջ կողմնորոշված քաղաքականությունը:

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին ձախ-աջ բաժանման հիմնական հասկացությունները: Տարբերակմանը ծանոթանալուց հետո նրանք կարող էին ինչ-որ կերպ ներկայացնել իրենց գաղափարական և քաղաքական նախընտրում: Մեծամասնությունը նախընտրում է աջ գաղափարախոսությունը հիմնա-կանումցածր հարկերի պատճառով:

Կարծում եմ՝ կբացառեմ ձախական գաղափարախոսությունը, քանի որ այստեղ առերեսվում ենք մեր նախկին՝ ինչ-որ մեկի կարծիքը հաշվի չառնելու խնդրին: Կարող է լինել մի ընտանիք, որը բավարար չափով հարուստ չէ, և եթե հարկերը բարձրանան, նրանք ի վիճակի չեն լինի վճարել: Այսպիսով, մենք ունենք որևէ մեկի կարծիքը հաշվի չառնելու իրավիճակ: Այդ պատճառով ես կարծում եմ, որ աջական գաղափարախոսությունն ավելի լավ է: [իգական սեռ, 14 տարեկան]

Այնուամենայնիվ, աջն ընդդեմ ձախի նախապատվությունը փոխվում է, երբ ներկայացվում է երկրորդ գաղափարական հակադրությունը՝ ձախակողմյան քաղաքականությունը: Մասնակիցների մեծամասնությունն ընտրում է ձախա-կողմյան քաղաքականությունը: Ձախ կողմն ընտրողները կարևորում են պետական սուբսիդավորումը, սոցիալական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև պետական միջամտությունը տնտեսությանը՝ բարձր հարկերի դեպքում, որոնք, ինչպես ենթադրվում է, դրականորեն կազդեն տնտեսության զարգացման վրա, եթե արդյունավետ բաշխվեն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 20. **ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՆՐԱՆՔ ՀԱՃԱԽ ՆՇՈՒՄ ԵՆ ԱՋԱԿԱՆ ԿԱՄ ՁԱԽԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ: ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ. ՆՇՎԱԾ ՑԱՆԿԻՑ Ո՞Ր ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ Է ՄՈՏ ՁԱԽԻՆ, ՈՐԸ ԱՋԻՆ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Կարծում եմ, որ պետական քաղաքականությունն ամենակարևորն է յուրաքանչյուր պետության համար, և պետության դերը շատ կարևոր է երկրի համար տարբեր ոլորտներում՝ լինի դա կրթական, թե տնտեսական. պետությունն է, որ պետք է կարգավորի ամեն ինչ: [իգական սեռ, 18 տարեկան]

Մասնակիցների մեծամասնությունն ընտրում է կոլեկտիվիզմը՝ ընդգծելով ազգային մշակույթի պահպանման կարևորությունը:

Գիտեք, ինձ թվում է, որ մեր երկիրը, մեր ազգն ընդհանրապես տարբերվում է աշխարհից մեր մշակույթով, մեր պահպանողական մոտեցումներով: Օրինակ, իմ կյանքում ես չեմ ուզում, որ մեր երկրում ԼԳԲՏ-ն սովորական բան դառնա: Ես դա չեմ կարող ընդունել: Կարծում եմ՝ դա կոլեկտիվիզմն է և ավելի պահպանողական: Եթե այստեղ մշակութային բաղադրիչ կա, ապա վերոնշյալը երբեք չի կարող լինել Հայաստանում: Ուղղակի իմ մտքերն են: [արական սեռ, 26 տարեկան]

Մասնակիցների կեսն ընտրել է ձախակողմյան կոլեկտիվիզմը: Որպես այս հատվածին նախապատվություն տալու պատճառներ՝ նշվել են ազգային մշակույթի պահպանությունը և ռազմական մեծ ծախսերը: Որոշ մասնակիցներ գերադասեցին ինդիվիդուալիզմը:

Յուրաքանչյուր չորրորդ մասնակից նախընտրել է աջակողմյան կոլեկտիվիզմը, քանի որ նրանք կարևորում են ազգային մշակույթի պահպանումը և թույլ են տալիս մեծ ռազմական ծախսեր, այստեղ նախընտրելի է նաև պետության ավելի ակտիվ միջամտությունը տնտեսությանը: Նրանք, ովքեր ընտրում են աջակողմյան ինդիվիդուալիզմը, ընդգծում են անհատի դերը, սակայն ավելի բարձր ռազմական ծախսերը ևս նախընտրելի են: Ձախ ինդիվիդուալիզմն ընտրած մասնակիցները կողմ են անձնական ազատություններին, բարձր հարկերին և տնտեսության նկատմամբ պետական վերահսկողությանը: Իգական սեռի մասնակիցներն առավել հաճախ ընտրեցին գաղափարախոսական մոտեցումներ, որոնք պարունակում էին ինդիվիդուալիզմ: 25-29 տարեկան մասնակիցների խմբում ընտրվել են երկու հակադրվող մոտեցումներ՝ ձախակողմյան կոլեկտիվիզմ և աջակողմյան ինդիվիդուալիզմ: Մասնակիցների մեծ մասի կարծիքով իրենց ծնողները կկարևորեն ազգային մշակույթի պահպանումը, ավելի բարձր ռազմական ծախսերը և տնտեսության մեջ պետության ակտիվ միջամտությունը՝ այսպիսով ենթադրելով, որ իրենց ծնողները ամենայն հավանականությամբ կընտրեին ձախականներին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թեև 2018 թվականի «Թավշյա հեղափոխության» շարժիչ ուժը երիտասարդներն էին, ովքեր նույնպես ներգրավվեցին պետական կառավարման համակարգում, այս հետազոտությունը ցույց է տալիս, որ ներկայիս հայ երիտասարդությունը քաղաքականապես պասիվ է և անտարբեր քաղաքականության նկատմամբ: Միևնույն ժամանակ անտարբերությունն առավել բնորոշ էր երևանցի երիտասարդներին, նախահամալսարանական կրթություն ունեցողներին, կանանց և 18-29 տարեկաններին: Ավելին, երիտասարդության քաղաքական մասնակցության ձևերից առավել տարածված է ոչ ուղղակի քաղաքական գործունեությունը, ինչպես օրինակ, նվիրատվությունները հասարակական կամ քաղաքական կազմակերպություններին, և այնպիսի քաղաքացիական պրակտիկաները, ինչպիսին են օրինակ համայնքային խնդիրների լուծմանը մասնակցելը:

Չնայած այս անտարբերությանը, երիտասարդներն ընդհանուր առմամբ սկսեցին ավելի շատ գնահատել քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին, քան վերջին հետհեղափոխական քաղաքական ընտրությունները, որոնք աննախադեպ էին ժողովրդավարական գործընթացներին մասնակցության առումով: Երիտասարդները, սակայն, շեշտը դրեցին գիտակցված քվեարկության վրա: Նրանք ընդգծեցին տեղեկացված որոշումների կայացման կարևորությունը, այսինքն՝ բավարար գիտելիքներ ունենալ քաղաքական գործընթացներից, լուրջ վերաբերվել ընտրություններին, ունենալ կոնկրետ դիրքորոշում և ձևավորված անձնական կարծիք:

Ընդհանուր առմամբ երիտասարդների քաղաքական առաջնահերթությունները համահունչ են երկրի քաղաքական համատեքստին՝ ընդգծելով հարևանների հետ կոնֆլիկտի, տարածքային ինտեգրման և արտաքին քաղաքական լարվածության կարևորությունը: Միայն երկրորդ հերթին նշվեց սոցիալ-տնտեսական խնդիրների կարևորությունը, ինչպիսիք են գործազրկությունն ու գների բարձրացումը: Ավելին, ռազմաքաղաքական խնդիրներին համեմատաբար ավելի մեծ նշանակություն են տվել մարզերի բնակիչները (գյուղաբնակ երիտասարդներ) և կին հարցվողները, մինչդեռ սոցիալ-տնտեսական խնդիրներն ավելի կարևոր են եղել Երևանի բնակիչների և արական սեռի մասնակիցների համար:

Դժվար է ասել, թե հայ երիտասարդները որքանով են տարբերակում աջ և ձախ գաղափարախոսությունները, սակայն հարցման արդյունքում նրանց միայն 15.6%-ն է դժվարացել իրենց տեսակետները տեղավորել աջ-ձախ թևերում: Միևնույն ժամանակ երիտասարդների մոտ 1/3-ն իրենց տեսակետները դրել են ծայրահեղ բևեռներում (աջ կամ ձախ): Հայ երիտասարդության գաղափարական դիրքորոշումներն ավելի հստակ դարձան քննարկումների ընթացքում, երբ արձանագրվեց, որ նրանք նախընտրում են աջ գաղափարախոսությունը հիմնականում դրա հետ ասոցացվող ցածր հարկերի համար:

7

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արևելք, Արևմուտք, Ռուսաստան, ԱՄՆ, թե՞ Եվրոպա. ո՞ր աշխարհաքաղաքական ուղղությունն է արդիական հայոց նորագույն պատմության համար» հարցը հետխորհրդային շրջանում աստիճանաբար վերաիմաստավորվում է: Կոմպլեմենտար քաղաքականության մասին հանրային և պետական դիսկուրսը միշտ կախված է եղել նրանից, թե որ գերտերություններն են հետաքրքրված Կովկասյան տարածաշրջանով և որքանով: Այսօր ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած գլոբալ ճգնաժամը ևս մեկ մարտահրավեր է տարածաշրջանի համար, որտեղ դիսկուրսն արդեն փոխվել է 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո:

Մի կողմից, Ռուսաստանի ռազմական ներկայությունն ու նշանակությունը տարածաշրջանում միանշանակ է, մյուս կողմից՝ չի կարելի ժխտել Եվրամիության դերը Հայաստանի ժողովրդավարացման գործում: Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի արտաքին քաղաքականության մասին հայ երիտասարդների ընկալմանը՝ ընդգծելով Հայաստան-ԵՄ և Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ-ը և պետական անվտանգության մասին պատկերացումները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- Երիտասարդների մեծամասնությունը կարծում է, որ Հայաստանը պետք է անպայման մոտ կանգնի Արևմուտքին (այսինքն՝ Եվրոպա և ԱՄՆ), և ոչ ոք Ռուսաստանի նկատմամբ նման միանշանակություն չի նշել:
- Ռուսաստանի հետ մերձեցումն ընդգծված է երիտասարդների շրջանում, ովքեր կարծում են, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում Արցախյան պատերազմի կրկնության մեծ հավանականություն կա:
- Երիտասարդների մեծամասնությունը համարում է, որ Հայաստանը ցանկալի է մոտ լինի Արևմուտքին:
- Այն համոզմունքը, որ Հայաստանը եվրոպական երկիր է, ավելի շատ հիշատակվում է ցածր կրթական մակարդակ ունեցող իգական սեռի և մարզերում ապրող երիտասարդների կողմից:
- Երիտասարդները Եվրոպան ավելի շատ ընկալում են որպես դրական և/կամ վերացական, քան բացասական երևույթ:
- Երիտասարդների ընկալումներում Եվրոպայի բացասական ենթատեքստը հիմնականում կապված է եվրոպականացման և ավանդական արժեքների բախման հետ:
- Երիտասարդների մոտ կեսը կարծում է, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը կարող է նպաստել Հայաստանի ազգային անվտանգությանը, ԱՄՆ-ն երկրորդ՝ ամե-նահաճախ նշվող երկիրն է համագործակցելու համար:
- Հայաստանի տնտեսական զարգացման տեսանկյունից, երիտասարդները համարում են, որ համագործակցությունը պետք է լինի առաջինը՝ Ռուսաստանի, երկրորդը՝ ԱՄՆ-ի, երրորդը Իրանի հետ:
- Հայկական ազգային արժեքների, ազգային անվտանգության, պետականության, Հայաստանի տնտեսական աճի տեսանկյունից երիտասարդներն առավել վտանգավոր են համարում համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ:
- Բացի Ադրբեջանից ու Թուրքիայից, հայ երիտասարդները Ռուսաստանի հետ համագործակցությունը համարում են Հայաստանի պետականությանն ու ազգային արժեքներին սպառնալիք, իսկ Վրաստանի հետ համագործակցությունը՝ սպառնալիք տնտեսական ու ազգային անվտանգությանը:
- Հայ երիտասարդների կարծիքով Եվրամիության հետ համագործակցությունը կնպաստի Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը և տնտեսական աճին: Այս կարծիքին ավելի հակված էին բարձրագույն կրթական մակարդակ ունեցող երիտասարդները, կանայք և քաղաքաբնակ երիտասարդները:
- Ենթադրվում է, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը նպաստում է Հայաստանի ազգային անվտանգությանը և տնտեսական աճին. այս կարծիքին ավելի հակված էին արական սեռի, առավել բարձր տարիքի մասնակիցները, և քաղաքաբնակ երիտասարդները:

- Ոմանք նշեցին, որ ԱՄՆ-ի հետ համագործակցությունը կնպաստի Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը, ազգային անվտանգությանը և տնտեսական աճին: Այս կարծիքին ավելի հակված էին ցածր կրթական մակարդակ ունեցող քաղաքաբնակ երիտասարդները, իգական սեռի և ավելի ցածր տարիքի երիտասարդները:
- Հայ երիտասարդները հակված են կարծելու, որ ռազմական կառույցները, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն և ՀԱՊԿ-ը, ավելի բացասական դեր են խաղում Հայաստանի համար, իսկ միջազգային ֆինանսական և քաղաքացիական կառույցները՝ ավելի դրական:
- Ավելի երիտասարդ և իգական սեռի ներկայացուցիչնե-ը հակված են ընդգծելու Եվրամիության և միջազգային կազմա-կերպություններ-ի (ՄԱԿ), ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի առավել դրական դերը Հայաստանի համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Հայ երիտասարդության աշխարհաքաղաքական ինքնությունը հասկանալու առանցքային կողմերից մեկը բացահայտվում է վերջինիս կողմնորոշմամբ դեպի Արևմուտք կամ Ռուսաստան: Գծապատկեր 21-ը ցույց է տալիս, որ երիտասարդների գրեթե երկու երրորդը (59.1%) նշում է, որ կցանկանար, որ Հայաստանը մոտ լիներ Արևմուտքին: Եվ հակառակը, ոչ ոք չի նշել որ իրենք գերադասում են, որ Հայաստանն ամբողջովին մոտ լինի Ռուսաստանին: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ Ռուսաստանը կարևոր չի հայ երիտասասարդների համար. հարցվածները ցույց են տալիս Ռուսաստանի հետ նույնականացման կամ հետաքրքրության որոշակի մակարդակ՝ ընտրելով տարբեր թվեր սանդղակի վրա (Գծապատկեր 21):

Տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների ընկալումն արցախյան պատերազմի վերսկսման վտանգի մասին առաջիկա 5 տարիների ընթացքում կապված է նրանց աշխարհաքաղաքական կողմնորոշման հետ դեպի արևմտյան երկրներ կամ Ռուսաստան (Գծապատկեր 22): Նրանք, ովքեր դիտարկում են վերսկսման վտանգը, մի փոքր ավելի հավանական է, որ ցանկանում են ավելի մոտ լինել Ռուսաստանին (16.5%), մինչդեռ նրանք, ովքեր ժխտում են պատերազմի հավանականությունը առաջիկա 5 տարում (13.6%) ավելի հավանական է, որ ցանկանում են մտերմություն Արևմուտքի հետ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 21. **ՈՐՔԱՆ ԿՈՒԶԵՆԱՅԻՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՏ ԼԻՆԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԿԱՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 22. **ՈՐՔԱՆՈՎ ԿՅԱՆԿԱՆԱՅԻՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՏ ԼԻՆԵՐ ԿԱՄ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԿԱՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ (%)**

Առաջիկա 5 տարում Արցախյան պատերազմի վերսկսման վտանգ տեսնում եք



Հարցվողներին այնուհետև հարցրել են՝ համաձայն են, որ Հայաստանը եվրոպական երկիր է թե՞ ոչ: Ընդհանուր առմամբ, մեծամասնությունը կամ կտրականապես (40.7%) կամ մեծ մասամբ (28.6%) համաձայն չէ պնդման հետ (Գծապատկեր 23): Եվ հակառակը, միայն 29.8%-ն է Հայաստանը համարում եվրոպական երկիր:

Ֆոկուս-խմբային քննարկումները ցույց են տալիս, որ մասնակիցների մեծ մասը չի զգում, որ իրենք Եվրոպայի մաս են՝ հիմնականում նշելով, որ եվրոպական ինքնությունը չի համապատասխանում հայկական ազգային արժեքներին և մտածելակերպին:

Որոշ վերապահումներով, կան շատ բաներ, շատ եվրոպական բարքեր, որոնք ընդունելի չեն մեր մշակույթում: [արական սեռ, 26 տարեկան]

Մասնակիցներից ոմանք նշեցին, որ Հայաստանը չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ, համապատասխան իրավական կարգավորումներ կամ սոցիալական հավասարություն Եվրոպայի մաս համարվելու համար: Մյուս մասնակիցները, ովքեր իրենց համարում էին Եվրոպայի մաս, մատնանշեցին հայկական մշակութային կապը Եվրոպայի հետ (օրինակ՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելը, եվրոպական ուրբանիզացիան կամ հագուստը), գաղափարական նմանությունը (ազատ մտածողություն, ազատականություն) և օրենսդրությունը:

Դատելով մեր մշակույթից, լեզվից և քաղաքաշինությունից՝ մենք ավելի մոտ ենք Եվրոպային, քան Ասիային: [իգական սեռ, 15 տարեկան]

ԳԾԱՊԱՏԿԵՐ 23. **ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է (%)**



Կախված հարցվողների տարիքից և կրթական մակարդակից՝ երիտասարդների պատկերացումները՝ Հայաստանը եվրոպական երկիր լինելու կապակցությամբ, տարբեր են: Գծապատկեր 24-ը ցույց է տալիս, որ մայրաքաղաքում ապրող հարցվողներն ավելի հազվադեպ են համաձայնել, որ Հայաստանը եվրոպական երկիր է (22.8%), քան այլ քաղաքային (30.0%) կամ գյուղական բնակավայրերուում ապրողները (36.4%): Բացի այդ, 14-17 տարեկան տարիքային խմբի երիտասարդներն ավելի հաճախ են Հայաստանը եվրոպական երկիր համարում (39.8%), քան 18-24 (29.6%) կամ 25-29 տարեկանները (27.1%): Հատկանշական է, որ արական սեռի երիտասարդների կեսը կտրականապես համաձայն չէ այս պնդման հետ (50.6%), մինչդեռ իգական սեռի երիտասարդների մեկ երրորդից պակասը համաձայն է (31.1%): Ինչ վերաբերում է կրթական մակարդակին, ապա տարրական և թերի միջնակարգ կրթություն ունեցողներն ավելի հաճախ են համաձայնում այն մտքի հետ, որ Հայաստանը եվրոպական երկիր է (37.8%), քան ավարտած միջնակարգ (29.0%) կամ բարձրագույն կրթությամբ (ներառյալ թերի բարձրագույն) երիտասարդները (26.3%):

Հարցումը նաև ցույց է տալիս երիտասարդների ընկալումները Եվրոպայի մասին: Հարցվողներին ներկայացվել են մի շարք պնդումներ և խնդրել ցույց տալ, թե որն է իրենց կարծիքը Եվրոպայի մասին: Մասնակիցներն ավելի հաճախ նշել են դրական ենթատեքստ ունեցող պնդումներ (Գծապատկեր 25), օրինակ՝ «մշակութային և գիտական նվաճումներ» (15.0%), «ամենահարուստ և բարգավաճ տարածաշրջանը» (14.4%) և «ժողովրդավարություն և օրենքի գերակայություն» (14.2%): Երիտասարդների համանման խումբը նաև նշել է ավելի վերացական պնդումներ, ինչպիսիք են. «ուղղակի աշխարհագրական դիրքորոշում» (13.5%) և «անծանոթ աշխարհ իր կանոններով» (12.2%): Հարկ է նշել, որ գրեթե յուրաքանչյուր տասներորդը Եվրոպան կապում է «բարոյական անկման և ավանդական արժեքների կորստի հետ»: .

ԳԾԱՊԱՏԿԵՐ 24. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է. ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵՍԱԿԻ, ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 25. **ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԻՑ ՈՐՆ Է ԱՎԵԼԻ ՇԱՏ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՍԻՆ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բացի Արևմտյան երկրների և Ռուսաստանի աշխարհաքաղաքական բաժանումից, կիրառվել են նաև այլ չափումներ՝ բացահայտելու երիտասարդների ընկալումներն օտար երկրների, Հայաստանի հետ նրանց հարաբերությունների և Հայաստանի համար այդ հարաբերությունների արդյունքներիմասին: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 26-ը, Ռուսաստանը զգալի թվով մարդկանց (49.0%) կողմից ընկալվում է որպես Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանն ամենաշատ նպաստող երկիրը: ԱՄՆ-ն (18.9%) և Իրանը (11.8%) Հայաստանի անվտանգությանը նպաստող մյուս երկրներն են: Ռուսաստանը նշվում է նաև որպես երկիր, որը դրականորեն կազդի Հայաստանի տնտեսական աճի վրա (34.0%) և կօգնի պաշտպանել մարդու իրավունքները Հայաստանում (32.4%): Մարդու իրավունքների պաշտպանության առումով, շատ երիտասարդներ նաև նշում են ԱՄՆ-ն (29.7%) և ԵՄ երկրները (23.4%) որպես նպաստող ուժեր: Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսական աճի խթանմանը, ապա Ռուսաստանին հաջորդում են ԱՄՆ-ը (23.9%), Իրանը (16.8%) և ԵՄ-ն (13.3%): Ընդհանուր առմամբ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության գործում ամենակարևորն է համարվում եվրոպական երկրների դերը: Վրաստանը և Թուրքիան չեն դիտվում որպես երկրներ, որոնք մեծ դրական ազդեցություն ունեն բարելավման երեք ոլորտներից որևէ մեկի վրա: Ինչևէ, 7.1%-ը նշել է, որ Վրաստանը կարող է դրականորեն ազդել Հայաստանի տնտեսական աճի վրա:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 26. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՈՐ ԵՐԿՐԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ... Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ (%, ԲԱՀՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Այլ երկրների հետ շահավետ հարաբերություններին զուգահեռ՝ հարցումը նաև բացահայտում է, թե որ հարաբերություններն են ընկալվում որպես սպառնալիք Հայաստանի համար: Այս համատեքստում Թուրքիան և Ադրբեջանը անհամեմատ ամենաշատ հիշատակվածներն են (Գծապատկեր 27): Այս երկու երկրներն ընկալվում են որպես Հայաստանի ազգային անվտանգության, պետականության, ազգային արժեքների և տնտեսական համակարգի համար սպառնալիք: Հատկանշական է, որ երիտասարդների մի մասը գտնում է, որ Ռուսաստանի հետ Հայաստանի համագործակցությունը սպառնում է նաև Հայաստանի պետականությանը (6.1%), տնտեսական համակարգին (5.5%) և ազգային արժեքներին (4.7%): Քիչ թվով երիտասարդներ կարծում են, որ Վրաստանի հետ համագործակցությունը կսպառնա Հայաստանի տնտեսական համակարգին (5.4%), ազգային արժեքներին (4.3%), ազգային անվտանգությանը (3.7%) և պետականությանը (2.9%): Նմանապես, մի փոքր մասի կարծիքով՝ ԱՄՆ-ն (3.8%), ԵՄ-ն (3.2%) և Իրանը (3.1%) սպառնալիք են Հայաստանի ազգային արժեքների համար:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 27. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՈՐ ԵՐԿՐԻ ՀԵՏ ԿՍՊԱՌՆԱ... Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ, Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ, ԵՎ Դ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Ավելին, ԵՄ երկրների հետ Հայաստանի համագործակցության վերաբերյալ երիտասարդների կարծիքը փոխկապակցված է հարցվողների կրթության, սեռի, տարիքի և բնակավայրի հետ: Տվյալները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի հավանական են համարում, որ ԵՄ երկրների հետ համագործակցությունը կնպաստի Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը (35.6%), Հայաստանում տնտեսական աճին (29.1%) քան նախնական և թերի կամ ամբողջական միջնակարգ կրթություն ունեցողները (Գծապատկեր 28): Իգական սեռի հարցվողներն ավելի հաճախ են այն կարծիքին, որ ԵՄ երկրները կնպաստեն Հայաստանի տնտեսական աճին, ազգային անվտանգությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, քան արական սեռի ներկայացուցիչները: 18-24 տարեկան երիտասարդները համեմատաբար ավելի լավատես են ԵՄ-ի հետ համագործակցության առավելությունների վերաբերյալ, քան բարձր կամ ցածր տարիքային խմբերի երիտասարդները:

Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցների մեծ մասը ցանկանում է, որ Հայաստանը անդամակցի ԵՄ-ին: Նրանք կարծում են, որ ԵՄ-ին միանալը շատ դրական հետևանքներ կունենա՝ ներառյալ անկախության ամրապնդումը, ֆինանսական աջակցության ավելացումը, տնտեսական զարգացմանը նպաստելը և քաղաքական ինստիտուտների բարելավումը: Մասնակիցների մեծամասնությունը, սակայն կարծում է, որ Հայաստանի՝ ԵՄ անդամակցության հնարավորությունները ցածր են: Ամենաերիտասարդ՝ 14-15 տարեկանների խումբն ավելի լավատես է ԵՄ-ին Հայաստանի անդամակցության հնարավորությունների վերաբերյալ, քան տարիքով ավելի մեծ մասնակիցները: Եվրամիության հետ ավելի սերտ հարաբերությունների հիմնական մտահոգությունը ազգային արժեքներին սպառնացող վտանգն է: Նաև, դա կարող է առաջացնել Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի բացասական արձագանքը և նույնիսկ պատերազմի պատճառ դառնալ:

Որովհետև որքան էլ մենք ցանկանանք անդամակցել Եվրամիությանը, նախ Եվրամիությունը չի ընդունի մեր երկիրը, երկրորդ... Եվ երկրորդ...Ռուսաստանը թույլ չի տա մեր երկրին միանալ Եվրամիությանը: [իգական սեռ, 16 տարեկան]

Խնդիրը մենք չենք, մենք կախված ենք Ռուսաստանից, և մենք գիտենք, որ Եվրամիությունը լավ հարաբերությունների մեջ չէ Ռուսաստանի հետ, և Ռուսաստանին դուր չէր գա այդ քայլը: Եվրոպան կարող է մեզ հետաքրքրել ֆինանսական ներդրումներով. ես չեմ ասում, որ ընդհանրապես պետք չէ կապ պահպանել Եվրոպայի հետ, պետք է, բայց պետք չէ անհապաղ ենթարկվել Եվրամիությանը, եվրոպական երկրներին, որովհետև այս տարածաշրջանում նախապատվությունը տրվում է ոչ թե Եվրոպային, այլ Ռուսաստանին: [արական սեռ, 15 տարեկան]

Հարցվածների տարիքը, սեռը, կրթությունը և բնակության վայրը խիստ փոխկապակցված են Ռուսաստանի հետ համագործակցության վերաբերյալ նրանց տեսակետների հետ: Ավելի բարձր տարիքային խմբերի հարցվողները հակված են ավելի լավատեսորեն վերաբերվելու Ռուսաստանի դրական դերին բոլոր երեք բնագավառներում (տնտեսական աճ, ազգային անվտանգություն, մարդու իրավունքներ), քան ցածր տարիքային խմբերի մասնակիցները (Գծապատկեր 29): Արական սեռի ներկայացուցիչները մի փոքր ավելի շատ քան իգական սեռի ներկայացուցիչները, հակված են մտածելու, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները Հայաստանի համար ձեռնտու են: Հատկանշական է, որ բարձրագույն կրթությամբ երիտասարդներն ավելի հազվադեպ են նշում, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը կնպաստի մարդու իրավունքներին (28.5%), քան նախնական և թերի միջնակարգ կրթությամբ (39.2%) կամ լրիվ միջնակարգ կրթությամբ (37.9%) երիտասարդները: Գյուղական բնակավայրերի հարցվածներն ավելի հաճախ են այն կարծիքին լինում, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները դրականորեն կազդեն տնտեսական աճի (57.3%) և մարդու իրավունքների վրա (41.4%), քան մայրաքաղաքում և այլ քաղաքային բնակավայրերում ապրող երիտասարդները: Եվ հակառակը, մայրաքաղաքի և քաղաքային շրջանների երիտասարդներն ավելի հաճախ այդպես են մտածում Հայաստանի ազգային անվտանգության մասին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 28. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ... Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ)ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ)ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 29. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ... Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ. (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Ժողովրդագրական փոփոխականները պայմանավորում են հարցվողների ընկալումը ԱՄՆ-ի հետ հետագա համագործակցության վերաբերյալ (Գծապատկեր 30): Նախնական կամ թերի միջնակարգ կրթությամբ հարցվողները հակված են ընկալելու ԱՄՆ-ի հետ համագործակցությունն ավելի շահավետ Հայաստանի տնտեսական աճի համար (40.7%), քան լրիվ միջնակարգ (33.8%) կամ բարձրագույն կրթություն ունեցողները (34.5%): Կանայք մի փոքր ավելի հաճախ են ԱՄՆ-ի հետ հարաբերությունները դրական գնահատում Հայաստանում տնտեսական աճի և մարդու իրավունքների համար, քան տղամարդիկ: Սա նման է այն բանին, թե ինչպես են հարցվածները վերաբերվում ԵՄ-ի հետ համագործակցությանը: 25-29 տարեկան երիտասարդները պակաս լավատես են, քան ավելի ցածր տարիքային խմբերի երիտասարդները այն հարցի շուրջ, որ ԱՄՆ-ի հետ համագործակցությունը շահավետ է Հայաստանի համար: Հատկանշական է, որ գյուղական բնակավայրերի երիտասարդներն ավելի հազվադեպ են այն կարծիքին, որ ԱՄՆ-ը կնպաստի Հայաստանի ազգային անվտանգությանը (18.2%), քան մայրաքաղաքում (25.7%) կամ այլ քաղաքային բնակավայրերում (23.8%):

Արտաքին քաղաքականության նկատմամբ երիտասարդության վերաբերմունքը այնուհետև բացահայտվել է՝ հիմնվելով միջազգային քաղաքական, ռազմական և ֆինանսական ինստիտուտների դերերի գնահատման վրա: Գծապատկեր 31-ը ցույց է տալիս, որ հարցվածների ավելի քան երկու երրորդը դրական է գնահատում միջազգային ֆինանսական հաստատությունները (76.9%), միջազգային կազմակերպությունները (69.3%), Եվրամիությունը և (65.2%), Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (60.8%): ՆԱՏՕ-ն համեմատաբար ավելի բացասական է ընկալվում. հարցվածների 51.5%-ը կարծում է, որ ՆԱՏՕ-ն բացասական դեր է խաղում Հայաստանում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 30. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ ... Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ. (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 31. **ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ՍՏՈՐԵՎ ԹՎԱՐԿՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Ժողովրդագրական փոփոխականները կանխատեսում են, թե ինչպես են հարցվածները դրական կամ բացասական ընկալում միջազգային կառույցների դերը (Գծապատկեր 32): Հետաքրքիր է, որ բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի հազվադեպ են դրական գնահատում նշված բոլոր հաստատություններին, քան նախնական կամ միջնակարգ կրթություն ունեցողները: Այս տարբերությունը հատկապես ուշագրավ է ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ կապված: Նմանապես 25-29 տարեկան հարցվողներն ավելի հազվադեպ են միջազգային ինստիտուտների դերը դրական գնահատում, քան 25 տարեկանից ցածր անձինք: Կանայք ավելի դրական կարծիք ունեն միջազգային ինստիտուտների դերի մասին, քան տղամարդիկ (հատկապես ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի մասին): Ավելին, մայրաքաղաքի երիտասարդները զգալիորեն ավելի հազվադեպ են դրական գնահատում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, ՆԱՏՕ-ին կամ ԵՄ-ին, քան գյուղական կամ այլ քաղաքային բնակավայրերի երիտասարդները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 32. **ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ՍՏՈՐԵՎ ԹՎԱՐԿՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Համեմատելով միջազգային կազմակերպությունների և Եվրոպական միության նկատմամբ վերաբերմունքը, մենք կարող ենք տեսնել, որ կան նաև որոշ տարբերություններ՝ հիմնված հարցվողների կրթության, տարիքի և սեռի վրա: Ընդհանուր առմամբ, արդյունքները նույնն են երկու հաստատությունների համար: Գծապատկեր 33-ը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի հազվադեպ են այն կարծիքին, որ Եվրամիությունը դրական դեր ունի Հայաստանում (59.5%), քան նախնական և թերի միջնակարգ կրթությամբ (72.4%) կամ լրիվ միջնակարգ կրթությամբ հարցվողները (65.9%): Բացի այդ, 25 տարեկանից բարձր երիտասարդներն ավելի քիչ են դրական դերեր վերագրում ԵՄ-ին և այլ միջազգային կազմակերպություններին, քան 14-17 կամ 18-24 տարեկան տարիքային խմբերի երիտասարդները: Ի տարբերություն տղամարդկանց, երիտասարդ կանայք ավելի հաճախ են ասում, որ Եվրամիությունը և այլ միջազգային կազմակերպությունները դրական դեր են խաղում Հայաստանում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 33. **ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Այնուհետև, մենք համեմատում ենք ընկալումները երկու միջազգային ռազմական ինստիտուտների՝ ՆԱՏՕ-ի և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության նկատմամբ (Գծապատկեր 34): Բոլոր ժողովրդագրական խմբերում ՀԱՊԿ-ն ավելի շատ է ընկալվում որպես Հայաստանում դրական դեր ունեցող, քան ՆԱՏՕ-ն: Բարձրագույն կրթությամբ և ամենաբարձր տարիքային խմբի երիտասարդները (25-29) համեմատաբար ավելի քիչ են հակված դրականորեն մտածել այս երկու ռազմական կազմակերպությունների դերերի մասին, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող կամ ավելի ցածր տարիքային խմբի երիտասարդները: Երիտասարդ կանայք ավելի հակված են դրական կարծիք ունենալու ՆԱՏՕ-ի մասին (54.9%), քան երիտասարդ տղամարդիկ (41.7%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 34. **ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ, %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դասական խնդիրը, թե ինչպես պետք է երկիրը դիրքավորվի ներկայիս աշխարհաքաղաքական ասպարեզում, արդիական է այսօր: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ հայ երիտասարդության մեծամասնությունը Հայաստանը միանշանակ տեսնում է Արևմուտքին մոտ: Երիտասարդների փոքրամասնությունը Հայաստանը համարում է եվրոպական երկիր. այս տրամադրվածությունն առաջին հերթին բնութագրում է ամենացածր կրթական մակարդակ ունեցող երիտասարդներին, իգական սեռի ներկայացուցիչներին և մարզերում ապրողներին: Հայաստանը Արևմուտքին ավելի մոտ տեսնելու պատճառներից են Ռուսաստանի վերաբերյալ հարցվողների ոչ միանշանակ տեսակետները:

Ընդհանրապես, մենք տեսնում ենք, որ հայ երիտասարդները երկիրը տեսնում են ռազմական առումով կախված Ռուսաստանից, նույնիսկ եթե դա երբեմն ընկալվում է որպես սպառնալիք: Նրանք, ովքեր շեշտում են Հայաստանի մտերմությունը Ռուսաստանի հետ, դա անում են, քանի որ առաջիկա հինգ տարում Արցախյան պատերազմի վերսկսման հավանականություն են տեսնում: Ռուսաստանի իրական «ներկայության» և կենսական «անհրաժեշտության» համատեքստում Եվրոպան երիտասարդների ընկալումներում դրսևորվում է նույն վերացական ձևով: Չնայած Եվրոպայի վերացական նկարագրին, երիտասարդները դրա մասին հիմնականում ունեն դրական պատկերացումներ: Երիտասարդների ընկալման մեջ Եվրոպայի բացասական նկարագիրը հիմնականում պայմանավորված է Եվրոպայի՝ ավանդական արժեքների հակադրմամբ:

Արևմուտքի հավաքական իմիջի շրջանակներում առանձնանում է ԱՄՆ-ը, քանի որ այն Ռուսաստանից հետո իր կարևորությամբ երկրորդն է Հայաստանի ազգային անվտանգությանը նպաստելու տեսանկյունից: ԱՄՆ-ը Ռուսաստանի և Իրանի հետ միասին, նաև Հայաստանի տնտեսական զարգացման տեսանկյունից կարևորագույն երեք երկրների թվում է:

Եթե Ադրբեջանն ու Թուրքիան համարվում են ամենավտանգավորները ազգային արժեքների, ազգային անվտանգության, պետականության և տնտեսական աճի առումով, ապա հայ երիտասարդությունը Ռուսաստանի հետ համագործակցությունը համարում է սպառնալիք պետականության և ազգային արժեքների տեսանկյունիցկետից: Վրաստանի հետ համագործակցությունը դիտվում է որպես սպառնալիք տնտեսական համակարգի և ազգային անվտանգության տեսանկյունից:

Կարևոր է նշել, որ ընդհանուր առմամբ Ռուսաստանի ընկալումը բավականին երկիմաստ է և հակասական: Մի կողմից՝ Հայաստանի ազգային անվտանգությունը և մյուս կողմից՝ նրա ազգային պետականությանը սպառնացող վտանգը ձևավորում են երկատվություն, որն առանցքային է այս անորոշության դեպքում: Ավելի ճիշտ, երիտասարդները Հայաստանում հակված են աջակցելու Ռուսաստանի հետ համագործակցությանը, երբ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը և տնտեսական զարգացմանը: Դրան հակառակ՝ պետականության ու ազգային արժեքների առումով կան որոշակի մտավախություններ ու մտահոգություններ: Ռուսաստանի շփոթեցնող ու անորոշ պատկերն ընդգծվում է նաև մարդու իրավունքների տեսանկյունից:

Հետաքրքիր է, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը Հայաստանի ազգային անվտանգության և տնտեսական աճի համա-տեքստում ավելի կարևոր է արական սեռի և տարիքով ավելի մեծ երիտասարդների համար, քան իգական սեռի և ավելի երիտասարդների համար, ովքեր ընդգծեցին ԱՄՆ-ի դերն այս հարցում:

Ընդհանրապես, հայ երիտասարդությունը վտանգավոր և անցանկալի է համարում որևէ ռազմական կառույցի (և ՆԱՏՕ-ի, և ՀԱՊԿ-ի) հետ համագործակցությունը, իսկ միջազգային ֆինանսական և քաղաքացիական կառույցների հետ համագործակցությունը՝ առավել բարենպաստ:

8

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ: ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԿՐՈՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանել «երիտասարդը», որպես անհատականություն, ով ակտիվորեն ներգրավված է անձնային զարգացման գործընթացում՝ հասարակության մեջ տեղ փնտրելով, ով սկսում է ստանձնել սոցիալական պատասխանատվությունը, նշանակում է, որ անհրաժեշտ է անդրադառնալ նրա արժեքանորմատիվ համակարգին: Սա նշանակում է հասկանալ այս արժեհամակարգը ձևավորող ավելի լայն սոցիալ-մշակութային միջավայրը և նրա արժեքավոր համարվող գործունեության ձևերը: Նախկին հետազոտությունները ցույց են տվել, որ ինքնորոշման գործընթացում հայ երիտասարդները կարևոր չեն համարում քաղաքացիական պատկանելությունը: Այնուամենայնիվ, մշակույթի այն ասպեկտները, որոնք ասոցացվում են ազգային ինքնության, էթնիկական, կրոնի և ընտանեկան պատկանելության հետ, առանցքային նշանակություն ունեն հայ երիտասարդության ինքնորոշման գործում (Մկրտիչյան և այլոք, 2016): Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հասկանալ, հայ երիտասարդության ինքնորոշումը և անձնական շահերը գնահատելու և հանրային բարիքը թերագնահատելու միտումը, որը բնորոշ է հետխորհրդային հասարակություններին (Սկրիբայթ և այլոք 2016): Չնայած հետխորհրդային համատեքստին, հարկ է նշել, որ հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտ այսօր արմատապես փոխակերպվում է համաշխարհային զարգացումների ազդեցությամբ, ինչը նպաստել է արևմտյան արժեքների տարածմանը (Գասպարյան, 2020): Այսօր Հայաստանում կրոնական և լեզվամշակութային ինքնության, սոցիալական վստահության և հանդուրժողականության հիմնախնդիրները գնալով ավելի են կարևորվում և ունեն ընդգծված կամ եզակի դրսևորումներ:

Ընտանեկան միջավայրի և ընտանիքի՝ որպես սոցիալական ֆենոմենի ժամանակակից ըմբռնումներն առանցքային են ժամանակակից հայ երիտասարդների արժեհամակարգի ձևավորման համար: Մեր տարածաշրջանում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդներն ունեն ամուր ընտանեկան կապեր, և նրանց վարքագիծը հիմնականում վերահսկվում է ընտանիքի կողմից (Մկրտիչյան և այլոք, 2016, Ռոբերթս Փոլոք, Ռուստամովա և այլոք, 2009): Ընտանիքի դերը երիտասարդների կյանքում և նրանց պատկերացումները ամուսնական և ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ այլ կարևոր խնդիրներ են, որոնց պետք է անդրադառնալ այս համատեքստում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- Հայ երիտասարդների ճնշող մեծամասնությունը շեշտում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ որպես ինքնորոշման հիմք, որի ազգային ինքնության էթնիկական և կրոնական կողմերը չափազանց կարևոր են:
- Հայաստանում երիտասարդների ճնշող մեծամասնությունը հակված չէ ինքնորոշվել որպես եվրոպացի:
- Կրթության բարձր մակարդակ ունեցող երիտասարդները, արական սեռի և տարիքով ավելի մեծ երիտասարդները միանշանակ հակված են իրենց համարելու Հայաստանի քաղաքացիներ և հիմնականում հակված չեն իրենց եվրոպացիներ համարելու:
- Հայ երիտասարդների մոտ կեսը միանշանակ համաձայն է, որ էթնիկ փոքրամասնությունների երեխաները պետք է իրավունք ունենան սովորելու իրենց մայրենի լեզուն հայերենի կանոնավոր պարապմունքներից բացի (ավելի շատ երիտասարդ իգական սեռի ներկայացուցիչները հայտնեցին այս կարծիքը), և, որ մարդիկ պետք է ավելի շատ պատասխանատվություն ստանձնեն իրենց կարիքների համար և հույսը չդնեն կառավարության վրա:
- Հայ երիտասարդների ճնշող մեծամասնությունը համաձայն չէ, որ Հայաստանի համար լավ կլիներ, եթե Հայաստանում լինեին խառը մշակույթներ և կրոններ:
- Արական սեռի և գյուղաբնակ երիտասարդներն ավելի հաճախ են այն կարծիքին, որ մարդիկ պետք է ավելի շատ պատասխանատվություն ստանձնեն իրենց կարիքների համար և հույսը չդնեն կառավարության վրա:
- Երիտասարդ տղամարդիկ ավելի հակված են մտածելու, որ հայերն ունեն նույն մշակութային առանձնահատկությունները, ինչ շատ այլ երկրներ և պետք է բաց լինեն այլ ազդեցությունների համար:

- Այն գաղափարը, որ Հայաստանի համար լավագույն տարբերակ կլիներ, եթե լինեին խառը կրոններ և մշակույթներ, ավելի հավանական է, որ կընդունվեր երիտասարդ կանանց և Երևանում բնակվող երիտասարդների կողմից:
- Այն, որ ներգաղթյալները պետք է հարմարվեն հայկական մշակութային ավանդույթներին, օր.՝ կրոնական տոներին, ավելի հավանական է, որ բարձրաձայնվեր բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդների, իգական սեռի ներկայացուցիչների, ավելի բարձր տարիքով մարդկանց և մարզերում ապրողների կողմից:
- Այն, որ կրոնական կառույցները հատուկ դեր ունեն մեր հասարակության մեջ ավելի շատ շեշտվել է առավել ցածր կրթական մակարդակ ունեցող երիտասարդների կողմից, ովքեր ապրում են Հայաստանի մարզերում:
- Խոսքի ազատությունը, որը ենթադրում է, որ բոլոր կրոնները կարող են քննադատության ենթարկվել, ավելի շատ ընդունվել է իգական սեռի և մարզաբնակ երիտասարդների կողմից:
- Հայաստանյան երիտասարդության արժեհամակարգում առաջին տեղում անձնային որակներն ու առաքինություններն են, երկրորդում՝ ընտանեկան արժեքները:
- Քաղաքացիական մասնակցության և/կամ ներգրավվածության արժեքները գրեթե չեն ընդգծվել հայաստանյան երիտասարդների արժեքային կողմնորոշումների մեջ:
- Ընտանեկան արժեքներն ավելի կարևոր են համարվել արական սեռի հարցվողների, տարիքով ավելի մեծ երիտասարդների և մարզաբնակ երիտասարդների շրջանում, իսկ քաղաքացիական գործունեության և/կամ ներգրավվածության արժեքները ավելի կարևոր են համարվել տարիքով ավելի մեծ երիտասարդների և գյուղաբնակների կողմից:
- Երիտասարդների արժեքներից առաջին հերթին նշվել են անձնական արժանապատվությունը, հարգանքը, հավատարմությունը և մարտական ոգին:
- Ամենապակաս կարևոր արժեքներն էին նորարարական ոգին, ալտրուիզմը, հումորի զգացումը և պարկեշտությունը:
- Ամենավստահելի կառույցներից էին բանակը, եկեղեցին և ոստիկանությունը, իսկ ամենաանվստահելիները՝ քաղաքական կուսակցությունները , ՀԼՄ-ները և նախագահը:
- Հինվորականները, եկեղեցին, ոստիկանությունը, դատարանը և արհմիությունները ամենաշատն արժանացել են քիչ կրթվածների, արական սեռի, ավելի երիտասարդ հարցվողների և գյուղաբնակ երիտասարդների վստահությանը:
- Նախագահը, ՀԼՄ-ները, քաղաքական կուսակցությունները, ՔԿԿ-ները և կառավարությունը վստահություն չեն ստացել արական սեռի և երևանաբնակ տարիքով բարձր երիտասարդների կողմից:
- Սոցիալական հեռավորության տեսանկյունից, ադրբեջանցիները, թմրամոլները և համասեռամոլները հայ երիտասարդությունից ամենահեռու խմբերն են, իսկ միայնակ մայրերը, օտարերկրյա ուսանողները և փախստականները՝ ամենամոտ:
- Հայ երիտասարդները հիմնականում ապրում են ծնողների կամ կնոջ/ամուսնու հետ:
- Հայաստանյան երիտասարդները հիմնականում լավ հարաբերությունների մեջ են իրենց ծնողների հետ:
- Երիտասարդները, հատկապես արական սեռի ներկայացուցիչները, գրեթե համընդհանուր նշում են իրենց ծնողների հետ լավ հարաբերություններ ունենալու մասին:
- Թեև իգական սեռի ներկայացուցիչներն իրենց ծնողների հետ կոնկրետ խնդիրներ չունեն, նրանք հաճախ ունենում են տարաձայնություններ:
- Երիտասարդ զույգերը հիմնականում ցանկանում են երեխաներ ունենալ:
- Տղամարդիկ ավելի հակված են ցանկանալու տղա երեխա ունենալ, քան կանայք:
- Մոտ ապագայում երեխա չունենալու հիմնական պատճառներից էին պատասխանատվությունից խուսափելը, ֆինանսապես պատրաստ չլինելը և կարիերայի առաջնահերթությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնորոշման առումով, հայ երիտասարդները հիմնականում իրենց համարում են Հայաստանի քաղաքացիներ (78.3%-ն ընտրում է «շատ» կամ «ամբողջովին») (Գծապատկեր 35): Այսպիսով, գերիշխող է քաղաքացիական ազգային ինքնությունը: Միայն դրանից հետո է հաջորդում էթնիկ ինքնությունը, քանի որ հարցվածների կեսից ավելին իրենց շատ կամ լիովին էթնիկական խմբին պատկանող են համարում (62.1%): Համեմատաբար տարածված է նաև ինքնորոշումը որոշակի քաղաքի/գյուղի կամ շրջանի հետ (57.0%): Հարցվածների մի մասն էլ իրենց լիովին կամ շատ ներկայացնում են որպես աշխարհի քաղաքացիներ (42.1%) և Կովկասին պատկանող (36.1%): Կարևոր է նշել, որ Եվրոպական ինքնանույնականացումը հայ երիտասարդների շրջանում բավականին հազվադեպ է հանդիպում: Հարցվածների կեսից ավելին (57.4%) նշում են, որ իրենք իրենց եվրոպացի չեն համարում, իսկ 23.1%-ը հայտնում է, որ միայն «մի փոքր» են եվրոպացի համարում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 35. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ԴՈՒՔ ՁԵԶ ՏԵՍՆՈՒՄ ՈՐՊԵՍ... (%)**



Հարցվողների կրթության, սեռի, տարիքի, բնակության տեսակի և որպես Հայաստանի քաղաքացի կամ եվրոպացի նրանց ինքնորոշման միջև կապերը ներկայացված են Գծապատկեր 36-ում: 14-17 տարեկան երիտասարդները հազվադեպ են հայտարարում, որ իրենց լիովին Հայաստանի քաղաքացիներ են համարում և ոչ Եվրոպայի: Իգական սեռի հարցվողներն ավելի քիչ են հակված իրենց լիովին Հայաստանի քաղաքացի և ոչ եվրոպացի համարել, քան արական սեռի ներկայացուցիչները: Կրթության և բնակավայրի տեսակի վրա հիմնված տարբերություններն այնքան էլ ուշագրավ չեն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 36. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ԴՈՒՔ ՁԵԶ ՏԵՍՆՈՒՄ ՈՐՊԵՍ...**
(%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հարցվողներին առաջարկվել է գնահատել մի քանի պնդումներ, որոնք վերաբերում են կրոնի, պետության, ներգաղթի, փոքրամասնությունների և մշակույթի նկատմամբ վերաբերմունքին: Հատկանշական է, որ հարցվածների մեծ մասը (88.8%) համաձայն չի այն պնդման հետ, որ «Հայաստանի համար լավ կլինի, եթե խառը կրոններ ու մշակույթներ լինեն» (Գծապատկեր 37): Այսպիսով, հայ երիտասարդներն այնքան էլ կողմ չեն մշակութային կամ կրոնական տարասեռությանը: Դրան համապատասխան՝ հարցվածների երկու երրորդից ավելին կամ լիովին կամ ավելի շուտ համաձայն է, այն պնդման հետ, որ «Հայաստանի համար լավագույնն այն է, որ գրեթե բոլորը պահպանեն նույն սովորույթներն ու ավանդույթները» (70.1%), և նրանց երկու երրորդն ասում է, որ ամբողջովին կամ ավելի շատ համաձայն են այն պնդման հետ, որ «ներգաղթյալները պետք է հարմարվեն հայկական մշակութային ավանդույթներին, օրինակ՝ կրոնական տոների հետ կապված» (61.9%): Այնուամենայնիվ, երիտասարդների գրեթե նույն մասը (62.4%) նաև աջակցում է մշակութային առումով բաց լինելուն՝ ընդունելով այն գաղափարը, որ «մենք ընդհանրություններ ունենք այլ երկրների մշակույթների հետ և պետք է բաց լինենք իրենց ազդեցության համար»: Նաև, ծնշող մեծամասնությունը (91.2%) լիովին կամ ավելի շուտ համաձայնում են, որ «էթնիկ փոքրամասնությունների երեխաները պետք է իրավունք ունենան ուսուցանվելու իրենց մայրենի լեզուն՝ ի լրումն հայերենի պարտադիր դասերին»: Սա նշանակում է, որ հայաստանյան երիտասարդները բավականին կողմ են լեզվական տարասեռությանը: Երբ խոսքը վերաբերում է կրոնին կամ կրոնական ինստիտուտներին, տվյալները ցույց են տալիս, որ հարցվողների ավելի քան երկու երրորդը (63.3%) լիովին կամ ավելի շատ համաձայնում են հետևյալ պնդման հետ. «կրոնական հաստատությունները հատուկ դեր ունեն մեր հասարակությունում»: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է բոլոր կրոնների և խոսքի ազատության քննադատությանը, հակասական կարծիքներ են երևում. երիտասարդների 53.6%-ը կարծում է, որ խոսքի ազատությունը ենթադրում է, որ բոլոր կրոնները կարող են ենթարկվել քննադատության, մինչդեռ մնացածը այլ կերպ են մտածում: Եվ վերջապես, երբ դիտարկում ենք կառավարության նկատմամբ վերաբերմունքը, կարող ենք նկատել, որ երիտասարդության մի զգալի տոկոսը (80.8%) համաձայն է, որ մարդիկ պետք է ավելի շատ պատասխանատվություն ստանձնեն իրենց կարիքները հոգալու համար և հույսը չդնեն կառավարության վրա: Այսպիսով, երիտասարդները Հայաստանում իրենց հիմնականում ընկալում են որպես կառավարությունից անկախ և իրենց համար պատասխանատու:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 37. ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ, ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑԱԿԻՑ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ, ԻՆՉԻ՞ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ (%)



Կառավարության, կրոնական կառույցների, ներգաղթյալների և մշակութային տարասեռության նկատմամբ վերաբերմունքը տարբեր է ժողովրդագրական խմբերի միջև: Գծապատկեր 38-ը ցույց է տալիս, որ այն գաղափարը, որ մարդիկ պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց կարիքները հոգալու համար և կառավարության վրա հույս չդնեն, համեմատաբար ավելի տարածված է երիտասարդ տղամարդկանց շրջանում (72.2%) քան երիտասարդ կանանց (68.1%): Ինչպես նաև ավելի շատ նույն կերպով են մտածում գյուղական բնակավայրերում ապրողները (72.6%), քան մայրաքաղաքում (68.7%) կամ այլ քաղաքային բնակավայրերում ապրողները (67.8%): Գծապատկերն այնուհետև ցույց է տալիս, որ մայրաքաղաքում ապրող երիտասարդներն ավելի քիչ են հակված մտածել, որ Հայաստանի համար լավ է, երբ բոլորը պահպանում են նույն սովորույթներն ու ավանդույթները (86.9%) քան գյուղական բնակավայրերում (91.5%) կամ այլ քաղաքային բնակավայրերում ապրողները (95.3%): Հետևաբար, մայրաքաղաքում ապրող երիտասարդները համեմատաբար ավելի քիչ են աջակցում մշակութային միատարրությանը: 25-29 տարեկան երիտասարդները նույնպես ավելի քիչ են հակված կիսելու այս գաղափարը, քան այլ տարիքային խմբերի երիտասարդները: Ինչ վերաբերում է մշակութային առումով բաց լինելուն՝ երիտասարդ տղամարդիկ (82.0%) ավելի հաճախ, քան կանայք (79.8%) այն կարծիքին են, որ մենք շատ այլ երկրների հետ ունենք մշակութային ընդհանրություններ և պետք է բաց լինենք նրանց ազդեցությունների համար: Եվ հակառակը, կանայք (64.7%) ավելի հաճախ, քան տղամարդիկ (60.0%), կողմնակից են այն գաղափարին, որ էթնիկ փոքրամասնությունների երեխաները պետք է իրավունք ունենան դպրոցում հայերենի կանոնավոր դասերին զուգահեռ իրենց մայրենի լեզուն սովորել: Մինչև 17 տարեկան երիտասարդները նույնպես հիմնականում ավելի հակված են այս կարծիքին՝ (66.9%) 18-24 տարեկանների (59.7%) կամ 25 -29 տարեկանների համեմատությամբ (62.7%):

Գծապատկեր 39-ը այնուհետև ցույց է տալիս, թե ինչպես են երիտասարդները գնահատել պնդումների ցանկը՝ ելնելով իրենց ժողովրդագրական տարբերություններից: Ակնհայտորեն, իգական սեռի հարցվողներն ավելի հակված են կարծելու, որ Հայաստանի համար լավ է, եթե առկա է տարբեր մշակույթների և կրոնների խառնուրդ (13.2%), քան արական սեռի հարցվողները (9.1%): Մայրաքաղաքում ապրող երիտասարդները նույնպես ավելի շատ հակված են համաձայնելու այս պնդմանը (16.9%), քան գյուղական բնակավայրերում (9.1%) կամ քաղաքային բնակավայրերում ապրողները (8.6%): Եվ նորից, սա վկայում է այն մասին, որ Երևանի երիտասարդությունն ավելի բաց և հանդուրժող է մշակութային և կրոնական տարասեռության նկատմամբ: Հետաքրքիր է, որ ավելի բարձր տարիքային խմբի երիտասարդները (25-29) ավելի քիչ են միտված կողմ լինել մշակութային և կրոնական տարասեռությանը (9.2%), քան ավելի ցածր տարիքային խմբերի երիտասարդները: Բացի այդ, 25-29 տարեկան երիտասարդներն ավելի հաճախ են պնդում, որ ներգաղթյալները պետք է հարմարվեն հայկական մշակութային ավանդույթներին, օրինակ՝ կապված կրոնական տոների հետ (60.5%), քան 18-24 տարեկանները (50.2%) և մինչև 17 տարեկանները (47.4%): Այս գաղափարն ավելի հաճախ ողջունում են իգական սեռի ներկայացուցիչները՝ արական սեռի հարցվողների համեմատ: Մայրաքաղաքում բնակվողները նույնպես ավելի հազվադեպ են այս գաղափարի կողմնակից լինում: Բարձրագույն կրթությամբ (57.2%) և լրիվ միջնակարգ կրթությամբ երիտասարդները (55.7%) ավելի շատ միտված են համաձայնել այս պնդման հետ, քան ավելի ցածր կրթություն ունեցողները (47.1%): Այն պնդումը, որ կրոնական կառույցները հատուկ դեր ունեն մեր հասարակության մեջ, ավելի տարածված է երիտասարդ տղամարդկանց (67.4%) քան կանանց շրջանում (56.5%): Բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի հազվադեպ են համաձայնում այս գաղափարի հետ (56.3%), քան միջնակարգ կրթություն ստացած (64.4%) կամ նախնական ու թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդները (62.9%): Մայրաքաղաքում բնակվողները նույնպես համեմատաբար ավելի հազվադեպ են այդպես կարծում, քան գյուղական բնակավայրերի կամ մարզային այլ քաղաքների երիտասարդները: Կանայք ավելի հաճախ (67.1%), քան տղամարդիկ (59.3%) համաձայնում են, որ խոսքի ազատությունը ենթադրում է, որ բոլոր կրոնները կարող են ենթարկվել քննադատության: 25-29 տարեկան ավելի բարձր տարիքային խմբում գտնվողները և մայրաքաղաքում բնակվողներն ավելի հազվադեպ են այս գաղափարի հետ համաձայնում՝ այլ տարիքային խմբերի և բնակության վայրերի համեմատությամբ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 38. ՀԵՏԵՎՅԱԼ ՑԱՆԿԻՑ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՎ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ: (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ԵՎ «ԼԻՈՎԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %)



- Էթնիկ փոքրամասնությունների երեխաները պետք է իրավունք ունենան սովորելու բոլոր հանրակրթական առարկաներն իրենց մայրենի լեզվով
- Մարդիկ պետք է ավելի շատ պատասխանատվություն ստանձնեն իրենց կարիքները հոգալու համար և հույսը չդնեն կառավարության վրա:
- Մենք մշակութային ընդհանրություններ ունենք այլ երկրների հետ և պետք է բաց լինենք նրանց ազդեցության համար:
- Հայաստանի համար լավ կլիներ, եթե տարբեր մշակույթների ու կրոնների խառնուրդ լիներ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 39. **ՀԵՏԵՎՅԱԼ ՑԱՆԿԻՑ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՎ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ: (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ԵՎ «ԼԻՈՎԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %)**



- Հայաստանի համար լավ կլիներ, եթե տարբեր մշակույթների ու կրոնների խառնուրդ լիներ:
- Ներգաղթյալները պետք է հարմարվեն հայկական մշակութային ավանդույթներին, օրինակ՝ կրոնական տոների հետ կապված:
- Կրոնական հաստատություններն առանձնահատուկ դեր ունեն մեր հասարակության մեջ:
- Խոսքի ազատությունը ենթադրում է, որ բոլոր կրոնները կարող են ենթարկվել քննադատության:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Երիտասարդների արժեքները գնահատվել են՝ ելնելով նրանց պատասխաններից 12 պնդումներին, որոնք խմբավորված են 4 հիմնական կատեգորիաներով՝ ընտանեկան արժեքներ, անձնական հաջողություններ/արտաքին տեսք, քաղաքացիական մասնակցություն և անձնական հատկանիշներ/առաքինություններ (Գծապատկեր 40): Արդյունքների համաձայն՝ անձնական հատկանիշները/առաքինությունները հայ երիտասարդների համար ամենակարևոր արժեքներն են: Ավելի կոնկրետ, հարցվածների ճնշող մեծամասնությունը (96.8%) կարծում է, որ շատ կամ բավականին կարևոր է հավատարիմ լինել զուգընկերոջը (տասից ինը համաձայն է, որ սա շատ կարևոր է): Նմանապես, մեծ մասը կարծում է, որ շատ կամ բավականին կարևոր է պատասխանատվություն վերցնելը (96.3%), անկախ լինելը (94.2%), և հաջողված կարիերա ունենալը (93.8%): Այսպիսով, անձնական հատկանիշները գերիշխող արժեքներ են: Երկրորդ կատեգորիան ընտանեկան արժեքներն է: Ինչ վերաբերում է ընտանեկան արժեքներին, 88.2%-ը համաձայն է, որ երեխաներ ունենալը շատ կամ բավականին կարևոր է, և 81.5%-ը նույն կերպով կարծում է ամուսնանալու մասին: Երբ դիտարկում ենք անձնական հաջողության/ֆիզիկական տեսքի տվյալները նկատելի է, որ մասնակիցները կարևոր են համարում առողջ սնվելը (91.5%) և լավ տեսքը (86.6%): Սպորտով զբաղվելը և հարստանալը/հարուստ լինելը համեմատաբար քիչ արժևորված են, հատկապես երբ համեմատում ենք միայն նրանց, ովքեր գնահատել են որպես «շատ կարևոր»: Այստեղ քննված չորս հիմնական կատեգորիաների մեջ քաղաքացիական մասնակցությունը դասվում է որպես ամենաքիչ կարևորը: Հայաստանում երիտասարդների 70.4%-ը կարծում է, որ քաղաքացիական ակցիաներին/նախաձեռնություններին մասնակցելը ավելի շուտ կարևոր չէ կամ բավականին կարևոր չէ: 66.3%-ը կարծում է նույն կերպով քաղաքական ակտիվության մասին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 40. **ՄԵՆՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆՔ ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ: ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՏԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՁԵԶ ՀԱՄԱՐ (%)**



Հարցվողների սեռը, տարիքը և բնակության վայրը որոշում են նրանց վերաբերմունքը ընտանեկան արժեքների և քաղաքացիական մասնակցության նկատմամբ (Գծապատկեր 41): Արական սեռի հարցվողները, ավելի շատ քան իգական սեռի, հակված են ընտանեկան արժեքները շատ կարևոր համարելու: Ավելի հստակ՝ արական սեռի երիտասարդների 80.9%-ը կարծում է, որ երեխա ունենալը շատ կարևոր է, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչների միայն 70.8%-ն է այդպես կարծում: Համապատասխանաբար արական սեռի հարցվողների 73.2%-ը կարծում է, որ ամուսնանալը կամ ամուսնացած լինելը շատ կարևոր է, իսկ իգական սեռի ներկայացուցիչների միայն 57.2%-ն է այդպես կարծում: Ընտանեկան արժեքներն ավելի կարևոր են 25-29 տարեկան երիտասարդների շրջանում: Գյուղական բնակավայրերում նույնպես ավելի հակված են ընտանիքն արժևորելու: Գյուղական երիտասարդության 80.5%-ը կարծում է, որ երեխաներ ունենալը շատ կարևոր է, իսկ 69.5%-ը նույն կարծիքին է ամուսնության մասին: Ավելի բարձր տարիքային խմբերի հարցվողները բարձր են գնահատում քաղաքացիական մասնակցությունը, մինչև 17 տարեկանների հ համեմատ: Հետաքրքիր է, որ ի տարբերություն մայրաքաղաքի կամ այլ քաղաքների երիտասարդների, գյուղական բնակավայրերի երիտասարդները կարծում են, որ քաղաքացիական ակցիաներին մասնակցելը և քաղաքականության մեջ ակտիվությունը շատ կարևոր են:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 41. **ՄԵՆՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆՔ ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ: ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՏԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՁԵԶ ՀԱՄԱՐ (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ «ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ %)**



Հայ երիտասարդների արժեքների գնահատման համար, մասնակիցներին առաջարկվել է ևս տասներկու պնդումների ցանկ: Հարցվողներին խնդրել ենն ընտրել ամենակարևոր կետերը: Այստեղ պնդումները ներառում են հինգ հիմնական կատեգորիաներ. հեղինակություն և հարստություն, կարեկցանք, նպատակներ, էթիկա և պատիվ: Գծապատկեր 42-ը ցույց է տալիս արդյունքները՝ հիմնվելով բազմակի ընտրության վերլուծության վրա: Անձնական արժանապատվությունն ամենահաճախ ընտրված արժեքն է (22.8%): Այնուհետև հաջորդում են ազնվությունը (16.7%), հավատարմությունը (12.2%) և մարտական ոգին (10.4%): Հատկանշական է, որ նորարարական ոգին ամենաքիչ գնահատված կետն է (1.9%): Ալտրուիզմը, հումորը և կոռեկտությունը/պարկեշտությունը/ազնվությունը նույնպես ամենաքիչն են գնահատվում:

Երբ մենք ուսումնասիրում ենք արժեքների դասակարգման վրա հիմնված տվյալները, (հաշվի առնելով, թե ինչպես են հարցվածները ընտրել առաջին, երկրորդ և երրորդ կարևորագույն արժեքները), ակնհայտ է, որ հարցվածների կեսից ավելին անձնական արժանապատվությունը գնահատում է որպես ամենակարևոր արժեք (Գծապատկեր 43): Բացի այդ, յուրաքանչյուր տասը հարցվողներից մեկը կարևորագույն արժեք է համարում կամ ազնվությունը (12.9%) կամ հավատարմությունը (11.3%): Հեղինակություն և հարստություն, կարեկցանք և նպատակ արժեքները հազվադեպ են ընտրվել որպես ամենակարևորը: Ինչ վերաբերվում է երկրորդ և երրորդ կարևոր կետերին, ամենից հաճախ գնահատվում է ազնվությունը հավատարմությունը և մարտնչող ոգին: Հատկանշական է, որ Հայաստանում երիտասարդների 11.4%-ը որպես երկրորդ կարևորագույն արժեք նշում է հանդուրժողականությունը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 42. **ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻՑ ՈՐ ԵՐԵՔՆ ԵՔ ԴՈՒՔ ԱՄԵՆԱԲԱՐՁՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ, %)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 43.ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵՔՆԵՐԻՑ Ո՞Ր ԵՐԵՔՆ ԵՔ ԴՈՒՔ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԱՄԵՆԱՇԱՏԸ (%)



ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տարբեր հաստատությունների նկատմամբ վստահությունն ու անվստահությունը բացահայտվում է չորս բալանոց սանդղակով (Գծապատկեր 44): Բանակն ամենավստահելի կառույցն է ըստ հայաստանյան երիտասարդների, քանի որ հարցվածների կեսից ավելին (56.7%) ասում է, որ լիովին վստահում է բանակին, և նրանց գրեթե մեկ քառորդը (23.6%) բավականին մեծ վստահություն ունի: Երկրորդ ամենամեծ վստահություն ունեցող կառույցը եկեղեցին է, քանի որ 34.0% լիովին վստահում է եկեղեցուն, իսկ 28.4%-ը բավականին շատ: 37.4%-ը նշում է, որ վստահում է ոստիկանությանը և 24.0%-ը վստահում է դատական համակարգին: Այնուամենայնիվ, իրավապահ մարմինների նկատմամբ վերաբերմունքը հակասական է: Հարցվողների մեկ քառորդը (25%) ընդհանրապես չի վստահում ոստիկանությանը: Երիտասարդների նույնիսկ ավելի մեծ մասն է (35.8%) հայտնում անվստահություն այս մարմնի նկատմամբ: Արհմիությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության նկատմամբ վստահության աստիճանը զգալիորեն ցածր է: Այնուամենայնիվ, քաղաքական կուսակցությունները, ՀԼՄ-ները և նախագահը ամենացածր վստահության աստիճանն ունեցողներն են: Հայաստանի երիտասարդների 45.2%-ը նշում է, որ բացարձակապես չի վստահում նախագահին: Հարցվածների գրեթե կեսը (51.6%) Հայաստանի լրատվամիջոցներին լիովին անվստահություն է հայտնում և մոտավորապես երկու երրորդը (59.5%) հայտնում է լիակատար անվստահություն քաղաքական կուսակցությունների նկատմամբ:

Տարբեր հաստատությունների նկատմամբ վերաբերմունքը և վստահության մակարդակը տարբեր են ժողովրդագրական խմբերի մեջ: Գծապատկեր 45-ը ներկայացնում է ևս հինգ հաստատությունների նկատմամբ վստահության մակարդակների տարբերությունը՝ կապված հարցվողի սեռի, տարիքի, կրթության և բնակության վայրի հետ: Այստեղ ակնհայտ է, որ տարրական և թերի միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներն ավելի բարձր վստահություն ունեն բանակի, կրոնական հաստատությունների, ոստիկանության, դատական համակարգի և արհմիությունների հանդեպ, քան լրիվ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն ունեցողները: Տղամարդիկ, համեմատաբար ավելի շատ են վստահում բանակին (81.8%) և եկեղեցուն (64.8%), քան կանայք, (համապատասխանաբար 78.9% և 60.2%): Հետաքրքիր է, որ երիտասարդ կանայք ավելի շատ են վստահում ոստիկանությանը (43.2%), քան երիտասարդ տղամարդիկ (31.5%): Մինչև 17 տարեկան հարցվողները բոլոր հինգ հաստատությունների նկատմամբ վստահության ավելի բարձր աստիճան են ցուցաբերել, քան 17 տարեկանից բարձր տարիքի երիտասարդները: Ինչ վերաբերում է բնակության վայրին, ապա Հայաստանի գյուղերում և մարզերի քաղաքներում ապրող երիտասարդները շատ ավելի են վստահում այս հաստատություններին, քան Երևանում ապրող երիտասարդները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 44. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 45. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ (ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ՇԱՏ» ԵՎ «ԼԻՈՎԻՆ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՄ » ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ %)**



Տարբեր է վերաբերմունքը նաև վստահության ամենացածր աստիճանն ունեցող ինստիտուտների վերաբերյալ: Գծապատկեր 46-ը ցույց է տալիս ժողովրդագրական խմբերի միջև այս տարբերությունները: Երիտասարդ տղամարդիկ ավելի հաճախ են անվստահություն հայտնում նախագահի (60.7%), ՁԼՄ-ների (55.8%), քաղաքական կուսակցությունների (47.0%), ՀԿ-ների (44.3%) և ազգային կառավարության (39.8%) հանդեպ, քան կանայք: 17 տարեկանից բարձր հարցվողներն ավելի հաճախ պատասխանում են, որ իրենք ընդհանրապես չեն վստահում այս ինստիտուտներին: Բարձրագույն կամ միջնակարգ կրթությամբ երիտասարդները նույնպես հակված են անվստահություն հայտնելու այս հաստատությունների հանդեպ, քան նախնական և թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդները: Այդպես են կարծում նաև մայրաքաղաքում բնակվող երիտասարդները, ի տարբերություն մարզերում բնակվողներին: Օրինակ, Երևանում բնակվող հարցվածների կեսից ավելին (56.0%)-ը ասում է, որ ընդհանրապես չի վստահում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, մինչդեռ այս պատասխանով հարցվածների տոկոսը համեմատաբար ցածր է գյուղական (33.0%) և այլ քաղաքային բնակավայրերում (38.4%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 46. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ (ՄԻԱՅՆ «ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՉԵՄ ՎՍՏԱՀՈՒՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ %)**



Բացի այս չափումներից, թե որքան մեծ է հայ երիտասարդների վստահությունը տարբեր քաղաքացիական և քաղաքական ինստիտուտների նկատմամբ, օգտագործվել է նաև ուրիշների նկատմամբ ներառականության չափում: Մասնակիցներին տրվել է տասը տարբեր սոցիալական խմբերի ցուցակ: Նրանց խնդրել են նշել, թե ինչպիսի սոցիալական հարաբերություններ են նրանք պատրաստ ունենալ այդ խմբերի անդամների հետ: Այստեղ սոցիալական հեռավորությունը չափվում է Բոգարդուսի առաջարկած դասական սանդղակի հիման վրա: Սանդղակը բաղկացած է յոթ միավորից՝ սկսած խմբի որոշակի անդամի ամբողջական բացառումից մինչև որպես ընտանիքի անդամ ընդունելը: Գծապատկեր 47-ը ցույց է տալիս, որ հարցվածների մեծամասը (87.3%) ասում է, որ կբացառի Ադրբեջանից որևէ անձի մուտքը Հայաստան, և միայն 8.2%-ն է պատրաստ ընդունել նրան որպես այցելու իրենց երկրում: Սոցիալական մտերմության ավելի բարձր մակարդակներում Ադրբեջանից մարդկանց ընդունումը գրեթե բացակայում է: Բավականին բացառված են նաև թմրամոլները և համասեռամոլները: Երիտասարդների 78.1%-ն ասում է, որ կբացառի այս երկու խմբերի մուտքը Հայաստան: Տասից մեկը (10.7%) պատրաստ է համասեռամոլներին ընդունել որպես այցելու, և միայն 4.11%-ն է պատրաստ նրանց ընդունել որպես Հայաստանի քաղաքացի: Հարցվածների 39.6%-ը կբացառեր նախկին դատապարտվածների մուտքը Հայաստան: Հատկանշական է, որ սոցիալական հեռավորությունը համեմատաբար մեծ է նաև հրեա ժողովրդի նկատմամբ: Մեծամասնությունը կամ կբացառեր նրանց մուտքը Հայաստան (30.5%), կամ կընդուներ նրանց միայն որպես այցելու (41.9%): Մասնակիցները նույն կարծիքն ունեին նաև խիստ կրոնական մարդկանց նկատմամբ, 27.7%-ը նրանց մուտքը լիովին կբացառեր, իսկ 36.1%-ը նրանց կընդուներ որպես այցելու: Որոշ երիտասարդներ, այնուամենայնիվ, պատրաստ են ընդունել Միջազգայնորեն տեղահանված անձանց (ՄՏԱ) նույնիսկ որպես հարևաններ (14.9%): Սոցիալական հեռավորության առումով հայ երիտասարդների համար ամենամոտ խմբերն են միայնակ բազմազավակ մայրերը, օտարազգի ուսանողները և փախստականները: Հարցվածների գրեթե մեկ քառորդը (24.8%) պատրաստ է որպես հարևան ընդունել միայնակ բազմազավակ մայրերին, իսկ 16.5%-ը պատրաստ է փախստականներին ընդունել որպես հարևան: Տասը հարցվողներից մեկը (11.1%) պատրաստ է ընդունել օտարերկրյա ուսանողներին որպես գործընկեր կամ կուրսընկեր:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 47. **ՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՐԴԿԱՆՑ... (%)**



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԿՅԱՆՔ

Այստեղ ուսումնասիրվում է հայ երիտասարդների ընտանեկան միջավայրը՝ որպես նրանց սոցիալական միջավայրի առանցքային բաղադրիչներից մեկը: Տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդները Հայաստանում շատ հաճախ նշում են, որ ապրում են իրենց մայրերի (26.7%), հայրերի (22.2%), քրոջ կամ եղբոր հետ (19.8%) (Գծապատկեր 48): Նաև, յուրաքանչյուր տասից մեկը (10.0%) հայտնում է, որ ապրում է տատիկի և պապիկի հետ, որը կարող է ցուցիչ լինել, որ մեծ ընտանիքները որոշ չափով տարածված են Հայաստանում: Միայնակ ապրող երիտասարդների մասնաբաժինը գրեթե բացակայում է (0.9%):.

Ընտանեկան միջավայրը հետագայում նկարագրվում է միջանձնային հարաբերությունների տեսանկյունից: Ժողովրդագրական բոլոր խմբերի հարցվածների մեծ մասը նշում է, որ լավ հարաբերությունների մեջ է իր ծնողների հետ (գծապատկեր 49): Այնուամենայնիվ, խմբերի մեջ կան որոշ նկատելի տարբերություններ: Արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են պատասխանում, որ լավ հարաբերություններ ունեն իրենց ծնողների հետ (72.4%) քան իգական սեռի ներկայացուցիչները (58.1%): Իգական սեռի ներկայացուցիչները հաճախ նշում են, որ լավ են հարաբերվում իրենց ծնողների հետ՝ միաժամանակ ունենալով տարաձայնություններ (41.4%): Ի տարբերություն 18-24 տարեկան (63.2%) և 25-29 տարեկան երիտասարդների (71.0%)՝ 17 տարեկանից ցածր երիտասարդներն այնքան էլ հաճախ չեն լավ հարաբերությունների մեջ լինում ծնողների հետ(58.5%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 48 . ՀԵՏԵՎՅԱԼ ԱՆՁԱՆՑԻՑ ՈՎ Է ԱՊՐՈՒՄ ՁԵԶ ՀԵՏ ՆՈՒՅՆ ՏԱՆԸ (%)



ԳԱՊԱՏԿԵՐ 49. ՀԵՏԵՎՅԱԼ ՊՆԴՈՒՄՆԵՐԻՑ ՈՐՆ Է ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻԴ ՀԵՏ ՔՈ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (%)



Ինչպես արդեն նշվել է, երեխաներ ունենալը հայ երիտասարդների ընտանեկան ամենակարևոր արժեքներից է: Գծապատկեր 50-ը ցույց է տալիս, որ Հայաստանում երիտասարդների ավելի քան 90%-ը հաստատ (73.1%) կամ հավանաբար (19.7%) մտադիր է ապագայում երեխա ունենալ: Երիտասարդների այն խումբը, որը նման մտադրություն չունի , 5%-ից ցածր է:

Մասնակիցներին նաև հարցրել են, թե որ տարիքում են մտադիր երեխաներ ունենալ: Գծապատկեր 51-ը ցույց է տալիս միջին պատկերը տարբեր տարիքային և սեռային խմբերում: Գենդերային տարբերություններն այնքան էլ էական չեն: Տարիքային խմբերի միջև կան որոշ ուշագրավ տարբերություններ: Ցածր տարիքային խմբերի հարցվողները, ի տարբերություն բարձր տարիքային խմբերի, նշել են, որ ցանկանում են երեխա ունենալ վաղ տարիքում: Ընդհանուր առմամբ, 25-29 տարեկան և՛ տղամարդիկ, և՛ կանայք ասում են, որ մտադիր են երեխա ունենալ մոտ 29 տարեկանում: 14-24 տարեկան իգական սեռի ներկայացուցիչները և 14-17 տարեկան արական սեռի ներկայացուցիչները միջինում ցանկանում են երեխա ունենալ 25 տարեկանում: 18-24 տարեկան տղամարդիկ մտադիր են երեխա ունենալ 26 տարեկանում:

Վերլուծությունը նաև բացահայտել է հարցվողների վերաբերմունքը երեխաների սեռի նկատմամբ (Գծապատկեր 52): Հատկանշական է, որ տղամարդկանց (56.3%) և կանանց (56.9%) կեսից ավելին ասում են, որ անտարբեր են երեխաների սեռի նկատմամբ: Երիտասարդ տղամարդիկ ավելի շատ են նախընտրում ունենալ տղա երեխաներ (34.7%), քան կանայք (23.6%): Երիտասարդ տղամարդկանց միայն 13.5% -ը, իսկ երիտասարդ կանանց միայն 20.3% -ն է նախընտրում աղջիկ երեխա ունենալ: Սրա հետ մեկտեղ, հարկ է շեշ, որ իգական սեռի երեխաները ավելի քիչ նախընտրելի են տղամարդ հարցվողների շրջանում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 50. **ՄՏԱԴՐՎԱԾ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ ԱՊԱԳԱՅՈՒՄ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 51. **ՈՐ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՔ ՄՏԱԴԻՐ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՆԱԼ (ՄԻՋԻՆ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 52. **ԻՆՉ ՍԵՌԻ ԵՐԵԽԱ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 53. **ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ՈՐ ՉՑԱՆԿԱՆԱՔ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ (%)**



Հարցվողներին, ովքեր նշել են, որ չեն ցանկանում երեխա ունենալ, հարցրել են պատճառների մասին: Ինչպես ներկայացված է գծապատկեր 53-ում, երիտասարդներն ամենից հաճախ նշում են, որ չեն ցանկանում երեխա ունենալ՝ առանց որևէ կոնկրետ պատճառի (28.6%): Հարցվածների մեկ հինգերորդը նշում է, որ վախենում է նման պատասխանատվությունից: 14.3%-ը նշում է ֆինանսական պատրաստվածության պակասը, իսկ 11.4%-ն ասում է, որ իրենց առաջնահերթությունները կրթությունն ու կարիերան են:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Եթե 2015 թվականի հայ երիտասարդության ուսումնասիրության տվյալները (Մկրտիչյան և այլոք, 2016, էջ 124) ցույց են տվել, որ ինքնորոշման հիմնաքարը էթնիկության բաղադրիչներն են եղել, այլ ոչ թե պետականությունն ու քաղաքացիությունը, ապա ամեն ինչ շատ է փոխվել: Այժմ Հայաստանի երիտասարդների ճնշող մեծամասնությունը շեշտում է իր ինքնորոշումը որպես ՀՀ քաղաքացի, և միայն դրանից հետո ընդգծում էթնիկ և կրոնական պատկանելությունը: Քաղաքացիության շուրջ դիսկուրսի փոփոխությունը, թերևս, որոշ չափով կարելի է բացատրել 2018 թվականից ի վեր թափ հավաքած քաղաքացիական ակտիվությամբ և քաղաքացի հասկացության ապաառասպելականացմամբ: 2015 թվականի վերլուծության հետ նմանություններ կան: Երիտասարդների ճնշող մեծամասնությունը դեռ իրեն չի նույնացնում որպես եվրոպացի: Միևնույն ժամանակ բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները, արական սեռի ներկայացուցիչներն ընդհանրապես և բարձր տարիքի երիտասարդները միանշանակ հակված են իրենց համարելու ՀՀ քաղաքացիներ: Այն երիտասարդները, ովքեր ընդհանուր առմամբ իրենց եվրոպացի չեն համարում, մատնանշում են ազգային արժեքների և մտածելակերպի անհամապատասխանությունը եվրոպական արժեքներին: Նրանցից ոմանք որպես եվրոպական հասարակությանը չինտեգրվելու պատճառ ընդգծեցին Հայաստանի իրավական, սոցիալական անկարողությունը/խնդիրները:

Չնայած քաղաքացիական ինքնության գերակայությանը, հայ երիտասարդությունը ցանկանում է ունենալ սոցիալական կառուցվածք, որը գնահատում է մոնոէթնիկ միջավայրը: Մասնավորապես, հայ երիտասարդության ճնշող մեծամասնությունը համաձայն չէ, որ Հայաստանի համար լավագույն սցենարը խառը կրոնների ու մշակույթների առկայությունն է: Եվ հակառակը, ավելի հանդուրժող են իգական սեռի, ավելի ցածր տարիքի երիտասարդները և Երևանում ապրողները:

Չնայած ուժեղ քաղաքացիական ինքնորոշմանը, քաղաքացիությունը հիմնականում ընկալվում է որպես կոշտ, ստատիկ ձև, և քաղաքացիական մասնակցության և/կամ ներգրավվածության արժեքները գրեթե չեն ընդգծվում հայ երիտասարդության արժեհամակարգում: Ընդհանրապես, հայ երիտասարդի համար առաջին տեղում անձնային որակներն ու առաքինություններն ընդգծող արժեքներն են, երկրորդում՝ ամուսնությունն ու ընտանիքը: Ամուսնությանը և ընտանիքին մեծ նշանակություն են տալիս արական սեռի ներկայացուցիչները, ավելի բարձր տարիքի և մարզաբնակ/գյուղաբնակ երիտասարդները, և հակառակը, քաղաքացիական ակտիվության և/կամ ներգրավվածության արժեքներին ավելի շատ կարևորություն են տալիս իգական սեռի ներկայացուցիչները: Հարկ է նշել, որ հայ երիտասարդները հիմնականում ապրում են ծնողների հետ՝ լավ հարաբերություններ պահպանելով նրանց հետ: Երիտասարդ տղամարդիկ, հատկապես ավելի ցածր տարիքի երիտասարդները, լավ հարաբերություններ ունեն իրենց ծնողների հետ, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են տարաձայնություններ ունենում:

Թեև երիտասարդների մեծ մասը ցանկանում է երեխա ունենալ, սակայն մոտ ապագայում երեխա չունենալու հիմնական պատճառներն են պատասխանատվությունից խուսափելը, ֆինանսապես պատրաստ չլինելը և կարիերային առաջնահերթություն տալը: Ավելին, արական սեռի ներկայացուցիչները, ի տարբերություն իգական սեռի ներկայացուցիչների, ավելի շատ նախընտրություն են տալիս տղա երեխա ունենալուն:

Անձնական արժանապատվության արժեքը Հայաստանում երիտասարդության համար որպես կանոն առաջին տեղում է, և ամենաքիչ կարևոր արժեքը նորարարական ոգին է: Հատկանշական է, որ ալտրուիզմը անկարևոր ընկալվող արժեքներից է, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է երկրորդ գլխում արված ընդհանրացումը երիտասարդների կամավորական պրակտիկայի շահադիտական (կարելի է նաև ասել «եսասիրական») բնույթի մասին:

Առավել վստահելի են համարվում բանակը, եկեղեցին և ոստիկանությունը, իսկ ամենաանվստահելիները՝ քաղաքական կուսակցություններն ու լրատվամիջոցները: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների նկատմամբ վստահությունը բավականին ցածր է, և միայն 1/5-ն է վստահում այդ հաստատություններին:

Սոցիալական հեռավորության տեսանկյունից, հայ երիտասարդները ադրբեջանցիներին, թմրամոլներին և ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցողներին համարում են ամենահեռավորը/օտարը: Ավելին, որակական տեղեկատվության արդյունքները վկայում են այն մասին, որ երիտասարդները պատրաստ են մասնակցել ԼԳԲՏ օրենքի ընդունման դեմ բողոքի ակցիաներին:

9

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ. ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԳՏՈՒՄՆԵՐ. ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ ԵՎ ԱՊԱԳԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների սոցիալական և քաղաքական ցնցումները ոչ միայն աշխարհաքաղաքական և/կամ անվտանգության խնդիրներ են առաջացրել, այլև միկրոմակարդակով փոխել են հայ երիտասարդների առօրյա կյանքի կառուցվածքները՝ ձևավորելով նոր ընկալումներ, սոցիալական տրամադրություններ, տագնապներ, պատերազմի և խաղաղության վերաբերյալ մոտեցումներ: Այս փոփոխությունների հետևանքները ամենաշատը կրում են ժամանակակից հայ երիտասարդները, որոնց կրթությունն ու սոցիալականացումը, քաղաքական կողմնորոշումը և ապագայի պլանավորումը զարգացել են հասարակական-քաղաքական ցնցումների ֆոնին: Ըստ վերլուծաբանների, ժամանակակից հասարակության մեջ հանրային ռիսկերի շարունակական «անհատականացման» պայմաններում երիտասարդները պետք է համապատասխան հմտություններ ձեռք բերեն (Furlong & Cartmel, 1997): Երիտասարդների ձգտումների վրա էականորեն ազդում է նրանց իրազեկվածությունն իրենց միկրո և մակրո (հատկապես էկոլոգիական) միջավայրում տիրող իրավիճակի մասին: Երիտասարդների սոցիալական և քաղաքական տրամադրությունների ըմբռնումը որպես զգացումների, համոզմունքների և գործողությունների համակարգ (Bosse և այլոք, 2013) խորը պատկերացում է տալիս բազմաթիվ սոցիալական խնդիրների մասին՝ ապահովելով ինչպես լավատեսական, այնպես էլ հոռետեսական հեռանկարներ ապագայի նկատմամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

- Երիտասարդների գրեթե կեսը Խորհրդային Միության փլուզումը վատ երևույթ է համարում:
- Խորհրդային Միության փլուզումը ավելի հաճախ վատ երևույթ են համարում արական սեռի, գյուղաբնակ երիտասարդները, ովքեր ունեն ցածր կրթական մակարդակ:
- Ավելի երիտասարդ արական սեռի ներկայացուցիչները հակված են կարծելու, որ 90-ականները ավելի շուտ լավը բերեցին երկրին:
- Երիտասարդների մեծամասնությունը հակված է կարծելու, որ 90-ականների համեմատ այժմ ավելի հեշտ է փող վաստակել ու ապրել ապահով, մինչդեռ ավելի բարդ է ազատ արտահայտվելը, կրոնական կյանքի մասին որոշում կայացնելը և անկախ ապրելը:
- Չնայած արական սեռի քաղաքաբնակ երիտասարդները առավել հաճախ են արտերկիր մեկնում, գյուղաբնակ երիտասարդները ավելի շատ են արտերկիր մեկնում կրթական և/կամ աշխատանքի նպատակներով:
- Արական սեռի երիտասարդներն ավելի հակված են մեկնելու արտերկիր կրթական կամ աշխատանքի նպատակով:
- Առավել երիտասարդ և Երևանում բնակվող կանայք նախընտրում են գնալ ԱՄՆ, մինչդեռ ավելի բարձր տարիքի, բայց և երիտասարդ, գյուղաբնակ տղամարդիկ նախընտրում են գնալ Ռուսաստան:
- Հայ երիտասարդները հիմնականում հակված են կարծելու, որ կլիմայական փոփոխությունները գլոբալ սպառնալիք են:
- Կլիմայական փոփոխությունը որպես գլոբալ սպառնալիք դիտվում է հիմնականում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների, կանանց, տարիքով ավելի մեծ մասնակիցների և գյուղաբնակ երիտասարդների կողմից:
- Լսելով կլիմայի փոփոխության և դրանով վազեցման ուղղված ջանքերի մասին՝ երիտասարդները հիմնականում զգում են զազրույթ, անօգնականություն, անտարբերություն, վախ և զգալիորեն պակաս հույս ու վստահություն:
- Տղամարդիկ ու գյուղաբնակ երիտասարդներն ավելի շատ են կողմ Ամուլսարի հանքավայրի շահագործմանը:
- Հայ երիտասարդների մեծամասնությունն ավելի հակված է մտածել, որ Արցախյան պատերազմը հնարավոր է վերսկսվի մոտակա մի քանի տարիներին:
- Արցախյան պատերազմի վերսկսումը հատկապես հնարավոր է թվում բարձրագույն կրթությամբ երիտասարդների, իգական սեռի և բարձր տարիքային խմբի մարդկանց շրջանակներում:
- Երիտասարդների մեծամասնությունը լավատես է ապագայի հանդեպ՝ հավատալով, որ իրենց ընտանիքների կենսապայմաններն ավելի լավ են լինելու հինգ տարի հետո:

- Ավելի բարձր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող երիտասարդները, արական սեռի և ավելի երիտասարդ տարիքի մարդիկ ավելի լավատես են ապագայի հանդեպ:
- Երիտասարդներն առավել լավատես են հինգ տարի անց սեփական ընտանիքի կենսամակարդակի, քան Հայաստանում ընդհանուր կենսամակարդակի առումով:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ

Անցյալ իրադարձությունների նկատմամբ ընկալումները և վերաբերմունքը կարող են մեկնարկային կետ լինել մարդկանց ներկա իրավիճակն ու ապագա հեռանկարները հասկա-նալու համար: Ոչ վաղ անցյալի կենտրոնական իրադարձություններից մեկը Խորհրդային Միության փլուզումն էր: Հայ երիտասարդության վերաբերմունքը ԽՍՀՄ-ի փլուզման վերաբերյալ երևում է գծապատկեր 54-ում: Հատկանշական է, որ հարցվածների մի զգալի մասը կարծում է, որ ԽՍՀՄ-ի ավարտը վատ բան էր (43.4%): Համեմատաբար երիտասարդների ավելի փոքր մասն այս անցումը որպես լավ երևույթ է դիտարկում (21.6%): Նրանց մեկ քառորդից ավելին նշում է, որ ԽՍՀՄ-ի փլուզումը ոչ լավ էր, ոչ վատ (27.9%), իսկ 7.2%-ը դժվարանում է պատասխանել:

Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքներն ինչ-որ առումով տարբեր են: Քննարկումների ժամանակ մասնակիցների մեծամասնությունը Խորհրդային Միության փլուզման մասին խոսում էր որպես դրական իրադարձություն՝ նշելով ազգային անկախությունը որպես ամենակարևոր դրական հետևանք:

Ինչ վերաբերում է ինձ, շատ հակիրճ կասեմ, քանի որ կա Հայաստանի Հանրապետություն, կա անկախություն... Անկախությունն ամենաբարձր արժեքն է, մենք չպետք է որևէ մեկից կախված լինենք, քանի որ մենք դարեր շարունակ երկիր ենք եղել ու եկել ենք դարերով: [իգական սեռ, 22 տարեկան]

Մյուս դրական հետևանքներից նշվել են հետևյալները. խոսքի և կրոնի ազատություն, կրթության ազատականացում, ազատ կերպով արտերկիր գնալու հնարավորություն, ազգային մշակույթի կարևորություն՝ ներառյալ Ցեղասպանության ճանաչման գործընթացը և սեփական օրենքների և արժույթի մշակումը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 54. **ԽՍՀՄ-Ը ՓԼՈՒԶՎԵՑ ՄՈՏ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ: ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՏԵՂՅԱԿ ԽՍՀՄ-Ի ՄԱՍԻՆ, ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԼԱՎ ԷՐ, ԹԵ՞ ՎԱՏ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ):**



Բացասական հետևանքների թվում առանձնացվել են տնտեսության փլուզումը, արդյունաբերական գործարանների փակվելը և աշխատատեղերի անհետացումը, խորհրդային կրթական համակարգի առավելությունների կորուստը (որակ, բոլորի համար անվճար), աճող սոցիալական անհավասարությունը և քաղաքական դաշնակիցների կորուստը: Որոշ մասնակիցներ Արցախյան հակամարտության սրումը կապում են ԽՍՀՄ-ի փլուզման հետ՝ նշելով, որ Խորհրդային Միության ներսում պատերազմը չէր կարող տեղի ունենալ, քանի որ Խորհրդային Միության կազմում գտնվող երկրների սահմաններն ավելիի քիչ կարևորություն ունեին: Ուստի սահմանային վեճերը պատերազմի չէին հասցնի: Այս մտածելակերպն ավելի գերիշխող է 25-29 տարեկանների տարիքային խմբում: Մասնակիցները, այնուամենայնիվ, մտահոգություն հայտնեցին, որ Խորհրդային Միության ներսում Արցախյան հիմնախնդրի լուծումը կարող էր ի վնաս Հայաստանի լուծվել, վերջինս էլ ձայնի իրավունք չէր ունենա կոնֆլիկտի կարգավորման գործընթացում:

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը պայմանավորում են նրանց ընկալումները Խորհրդային Միության փլուզման վերաբերյալ (Գծապատկեր 55): Բարձրագույն կրթությամբ հարցվողները ավելի հակված են կարծելու, որ ԽՍՀՄ-ի փլուզումը լավ բան էր (30.8%), քան ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցողները (16.2% և 22.1%): Արական սեռի հարցվողները համեմատաբար ավելի հաճախ են կարծում (50.1%), որ ԽՍՀՄ-ի փլուզումը վատ բան էր, քան իգական սեռի հարցվողները (36.8%): Գյուղական բնակավայրերում ապրող երիտասարդները նույնպես հակված են բացասական կարծիք ունենալու այս իրադարձության մասին (48.9%), քան մայրաքաղաքում (40.3%) կամ այլ քաղաքային բնակավայրերում բնակվողները (37.8%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 55. **ԽՍՀՄ-Ը ՓԼՈՒԶՎԵՑ ՄՈՏ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ: ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՏԵՂՅԱԿ ԽՍՀՄ-Ի ՄԱՍԻՆ, ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ ԼԱՎ ԷՐ, ԹԵ՞ ՎԱՏ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



Երիտասարդների ընկալումներն ու մտքերը 90-ականների վերաբերյալ նույնպես ուսումնասիրված են: Հարցվածների 43.2%-ը կարծում է, որ 90-ականները ավելի լավ բաներ են բերել Հայաստան, մինչդեռ 41.6%-ը այս տարիներն ընկալում է որպես բավականին վատ (Գծապատկեր 56): Հարցվածների մնացած մասը դժվարանում է պատասխանել (15.2%): Որոշ տարբերություններ կարող են ընդգծվել ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբավորումների: Տարրական կամ թերի միջնակարգ կրթությամբ հարցվողները ավելի հաճախ են այն կարծիքին, որ 90-ականները բավականին լավ էին երկրի համար (49.3%), քան լրիվ միջնակարգ (39.3%) կամ բարձրագույն կրթությամբ երիտասարդները (43.4%): 25 տարեկանից բարձր երիտասարդները պակաս դրական վերաբերմունք ունեն 90-ականների նկատմամբ (36.5%), քան 18-24 տարեկանները (45.1%) կամ մինչև 17 տարեկանները (51.8%): Երիտասարդ կանայք ավելի հաճախ են դժվարանում հարցին պատասխանել (17.5%) քան երիտասարդ տղամարդիկ (12.8%)

Գծապատկեր 57-ում ներկայացված են երիտասարդության գնահատականը 90-ականների և վերաբերմունքը Խորհրդային Միության փլուզման նկատմամբ: Այստեղ մենք տեսնում ենք, որ այն երիտասարդները, ովքեր կարծում են, որ ԽՍՀՄ-ի փլուզումը լավ էր, ավելի հաճախ 90-ականները դրական են համարում (46.1%), քան նրանք, ովքեր բացասական (43.4%) կամ նրանք, ովքեր չեզոք կարծիք ունեն (43.0%) Խորհրդային Միության փլուզման մասին: Նրանք, ովքեր դժվարացել են պատասխանել ԽՍՀՄ-ի փլուզման վերաբերյալ հարցին, հիմնականում դժվարացել են պատասխանել նաև 90-ականների վերաբերյալ հարցին (45.3%):

90-ականների վերաբերյալ երիտասարդների ընկալումը վերլուծելու համար նրանց խնդրել են համեմատել ներկայիս Հայաստանն այդ ժամանակաշրջանի հետ: Հարցվողներին ներկայացվել են մի շարք գործողություններ, և նրանց առաջարկվել գնահատել դրանք 90-ականների համեմատ: Համեմատաբար ավելի շատ երիտասարդներ ասում են, որ այսօր շատ կամ որոշ չափով ավելի հեշտ է գումար վաստակելը (35.0%) և ապահով զգալը (29.6%) քան 90-ականներին էր (Գծապատկեր 58): Մասնակիցները գնահատել են մնացած բոլոր կետերը որպես ավելի դժվար կատարվող, քան 90-ականներին: Մասնավորապես, հարցվածների կեսից ավելին (51.7%) ասում է, որ այսօր շատ ավելի դժվար է ասել այն, ինչ ուզում ես, քան 90-ականներին: Երիտասարդների մի զգալի մաս կարծում է, որ այսօր շատ ավելի դժվար է որոշել կրոնական կյանքը (48.7%) կամ անկախ ապրելը (45.3%): Հարցվածների կարծիքով քաղաքական կյանքին մասնակցելը (32.4%) և որակյալ բժշկական օգնություն ստանալը (41.8%) նույնպես բավականին ավելի դժվար է այսօր, քան 90-ականներին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 56. **ԻՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ 90-ԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԿՐԻՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԼԱՎ, ԹԵ՞ ՎԱՏ ԲԱՆ ԵՆ ԲԵՐԵԼ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 57. **90-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ԱՐԴՅՈՔ ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ ԼԱՎ, ԹԵ՞ ՎԱՏ ԲԱՆ ԷՐ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 58. **ԵՐԲ ՄՏԱԾՈՒՄ ԵՔ ԱՅՍՕՐՎԱ ԵՎ ՁԵՐ ԻՄԱՑԱԾ ԿԱՄ ՊԱՏԿԵՐԱՑՐԱԾ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՐԴՅՈՔ ԴԱՐՁԵԼ Է ԱՎԵԼԻ ՀԵ՞ՇՏ, ԹԵ՞ ԴԺՎԱՐ... (%)**



ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ: ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹ

Հայաստանում երիտասարդների մոտ երկու հինգերորդը (39.6%) նշում է, որ եղել է արտերկրում (Գծապատկեր 59): Որոշ տարբերություններ են նկատվում սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև: Տղամարդ հարցվողներն ավելի հավանական է, որ եղել են արտերկրում (48.4%), քան կանայք (31.1%): Գյուղական բնակավայրերում ապրող հարցվողներն ավելի քիչ են հայտնել, որ եղել են արտերկրում (31.0%), քան քաղաքային բնակավայրերում (44.2%) կամ մայրաքաղաքում բնակվողները (48.6%): Բարձրագույն կրթությամբ երիտասարդներն ավելի հաճախ են նշել, որ եղել են արտերկրում (49.1%), քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները (37.7% և 34.5%):

Տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների 33.6%-ը հայտնում է, որ եղել է արտերկրում սովորելու և/կամ աշխատելու նպատակով (Գծապատկեր 60): Ի տարբերություն ընդհանուր առմամբ արտերկրում գտնվելու մասին տվյալների, գյուղաբնակ երիտասարդներն ավելի հաճախ են արտերկրում գտնվել աշխատանքի կամ կրթության նպատակով (44.3%), քան մայրաքաղաքում (22.9%) կամ այլ քաղաքային բնակավայրերում բնակվողները (33.1%): Աշխատանքի և կրթության առումով երիտասարդ տղամարդիկ ավելի հաճախ են հայտնում արտերկիր գնալու մասին (40.8%) քան երիտասարդ կանայք (22.1%): Հարցվողների կրթական կարգավիճակից ելնելով՝ տարբերություններն այնքան էլ ուշագրավ չեն: Ինչ վերաբերում է տարիքային խմբերին, 25 տարեկանից բարձր տարիքային խմբի երիտասարդներն ավելի հաճախ են նշում, որ Հայաստանից դուրս են գտնվել սովորելու կամ աշխատելու նպատակով (45.4%), քան 18 - 24 (31.8%) կամ մինչև 17 (12.8%) տարեկանները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 59. **ԵՐԲԵՎԷ ԵՂԵ՞Լ ԵՔ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 60. **ԳՆԱՑԵ՞Լ ԵՔ ԱՐՏԵՐԿԻՐ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ (%)**



Ըստ Գծապատկեր 61-ի՝ Հայաստանում երիտասարդների մեծամասնությունը նշում է, որ միանշանակ կամ հավանաբար կցանկանար մեկնել արտերկիր սովորելու կամ աշխատելու նպատակով (63.2%): Մինչև 17 տարեկաններն ավելի հաճախ են հայտնում, որ միանշանակ կցանկանային գնալ արտասահման սովորելու կամ աշխատելու (48.8%), քան 18-24 (41.9%) կամ 25-ից բարձր տարիքի երիտասարդները (31.0%): Այս ցանկությունը համեմատաբար ավելի մեծ է նախնական կամ թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդների շրջանում (44.5%), քան լրիվ միջնակարգ (38.8%) կամ բարձրագույն կրթությամբ երիտասարդների շրջանում (34.5%): Երիտասարդ տղամարդիկ ավելի հակված են նշելու, որ կցանկանային գնալ արտերկիր՝ սովորելու կամ աշխատելու (42.5%) քան երիտասարդ կանայք (37.0%): Տարբերություններն ըստ բնակության վայրի նշանակալի չեն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 61. **ԿՑԱՆԿԱՆԱՅԻ՞Ք ՄԵԿՆԵԼ ԱՐՏԵՐԿԻՐ՝ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ (%)**



Դիտարկելով այլ երկիր տեղափոխվելու պատճառները՝ կարող ենք նշել, որ առավել հաճախ նշված պատճառներն են ավելի բարձր աշխատավարձերը (25.4%), ավելի լավ կրթությունը (20.5%) և բիզնես սկսելու ավելի լավ հնարավորությունները (20.0%) (Գծապատկեր 62): Տասը հարցվածներից մեկը նշում է այնպիսի անձնական պատճառներ, ինչպիսիք են հարազատ մարդկանց կողքին լինելը (10.3%) կամ այլ մշակույթում ապրել փորձելը (9.7%): Մշակութային բազմազանության ավելի բարձր աստիճանի (6.5%) և իրենց երկրում քաղաքական մթնոլորտի (6.4%) մասին պատճառները նշվել են հարցվողների միայն մի փոքր խմբի կողմից:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 62. **ՄԻՐՆ Է ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԱՐՏԵՐԿԻՐ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ: (%)**



Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում մասնակիցների միայն փոքր մասն է այն կարծիքն արտահայտել, որ քաղաքական փոփոխությունները կազդեն արտագաղթի իրենց որոշման վրա: Նման փոփոխությունների օրինակ կարող են լինել իշխանության եկող հնարավոր հակաժողովրդավարական քաղաքական կուսակցությունը կամ տնտեսական նոր սահմանափակումները՝ Կորոնավիրուսից ելնելով: Մասնակիցների կարծիքով՝ երիտասարդներին արտագաղթից հետ պահելու համար կառավարությունը պետք է զարգացնի երկրի տնտեսությունը, ստեղծի նոր աշխատատեղեր, սահմանափակի գների բարձրացումը, տրամադրի մատչելի բիզնես վարկեր, ապահովի սահմանային անվտանգություն և բարձրացնի կրթության որակը:

Այն հարցին, թե որքան ժամանակ կցանկանան անցկացնել արտերկրում, պատասխանները բավականին տարբեր են: Ընդհանուր առմամբ, Հայաստանի երիտասարդների 41.6%-ը կնախընտրեր մնալ արտերկրում մեկ տարուց էլ քիչ (Գծապատկեր 63): Հարցվածների մոտ մեկ քառորդն ասում է, որ կցանկանար մնալ մեկ այլ երկրում մեկից հինգ տարի (25.6%): Հատկանշական է, որ երիտասարդների մի զգալի մասը (19.1%) հայտնում է, որ կցանկանար մնալ արտերկրում ընդմիշտ: Որոշ տարբերություններ նկատվում են կախված սեռից, տարիքից և բնակավայրից: Երիտասարդ կանայք ավելի հաճախ են հայտնում (46.0%), քան տղամարդիկ (37.0%), որ կմնային արտերկրում մեկ տարուց քիչ: Բացի այդ, երիտասարդ տղամարդիկ ավելի հաճախ են նշում, որ կմնային մեկ այլ երկրում մեկից հինգ տարի (28.8%): 14-17 տարեկան հարցվողներն ավելի քիչ են նշել, որ ընդմիշտ կմնային արտերկրում (11.7%), քան այլ տարիքային խմբերի երիտասարդները (19.2% and 23.7%): Մայրաքաղաքում ապրող երիտասարդներն ավելի քիչ են նշում, որ կմնային արտերկրում մեկ տարուց քիչ (35.3%), քան գյուղական (43.0%) կամ քաղաքային (45.2%) բնակավայրերում ապրող երիտասարդները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 63. ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿՅԱՆԿԱՆԱՅԻՔ ՄՆԱԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ (%)



Հայ երիտասարդների կարծիքով՝ տեղափոխման համար առավել նախընտրելի երկիր է համարվում ԱՄՆ-ը (36.4%) (Գծապատկեր 64): Երկրորդ տեղում է Ռուսաստանը (21.6%): Որոշ երիտասարդներ նաև նշում են Ֆրանսիան (11.0%): Մյուս տարբերակներն այնքան էլ շատ չնշվեցին: Օրինակ, ընդհանուր առմամբ հայ երիտասարդների ընդամենը 6.1%-ն է նշում, որ կնախընտրեր տեղափոխվել Գերմանիա: Հետաքրքիր է, որ սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը կանխատեսում են հարցվողի նախընտրած երկրի ընտրությունը: Օրինակ, արական սեռի հարցվողները ավելի հաճախ նշում են Ռուսաստանը որպես տեղափոխման նախընտրելի երկիր, (28.5%) ի տարբերություն իգական սեռի հարցվողների (14.9%): Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն ավելի հազվադեպ են նշում, որ կտեղափոխվեին Ռուսաստան (14.9%) քան լրիվ միջնակարգ կրթությամբ (25.3%) կամ նախնական ու թերի միջնակարգ կրթությամբ (21.7%) երիտասարդները: Մինչև 17 տարեկան երիտասարդներն ավելի հակված են տեղափոխվելու ԱՄՆ (44.4%) քան 18-24 տարեկան (35.1%) կամ 25-ից բարձր տարիքի երիտասարդները (32.5%): Բնակավայրի տեսակը նույնպես որոշում է տեղափոխման նախապատվությունները: Մայրաքաղաքում բնակվող երիտասարդները մոտ երկու անգամ ավելի քիչ են հայտնում, որ կնախընտրեին տեղափոխվել Ռուսաստան (11.7%) քան այլ քաղաքներում (26.1%) կամ գյուղական բնակավայրերում ապրողները (24.7%): Բացի այդ, Երևանում բնակվող երիտասարդները համեմատաբար ավելի հաճախ են նշում Գերմանիան, որպես վերաբնակեցման նախընտրելի երկիր (9.6%), քան մայրաքաղաքից դուրս բնակվողները (6.4% and 3.7%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 64. **ՄԻՐՆ Է ԱՅՆ ՄԵԿ ԵՐԿԻՐԸ, ՈՐՏԵՂ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ: ՆՇԵՔ ԱՅՆ ՄԵԿԸ, ՈՐՏԵՂ ԱՄԵՆԱՇԱՏԸ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ: (%)**



ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞Ո ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երևում է Գծապատկեր 16-ում, շատ քիչ հայ երիտասարդներ են կլիմայական փոփոխությունը համարում լուրջ խնդիր երկրի համար: Թվում է, որ հայ երիտասարդներն այնքան էլ մտահոգված չեն այս խնդրով: Այնուամենայնիվ, երբ նրանց կոնկրետ և ուղիղ հարց է տրվում, թե արդյոք նրանք կլիմայական փոփոխությունը համարո՞ւմ են գլոբալ արտակարգ իրավիճակ, նրանց մեծ մասը դրական պատասխան է տալիս (72.1%) (Գծապատկեր 65): Կլիմայական փոփոխության նկատմամբ վերաբերմունքը տարբերվում է ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի: Բարձրագույն կրթությամբ երիտասարդներն ավելի հաճախ են այն կարծիքին, որ կլիմայի փոփոխությունը համաշխարհային մարտահրավեր է (77.6%) քան ավարտած միջնակարգ (73.5%) կամ նախնական ու թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդները (64.9%): Կանայք ավելի հաճախ են այդպես մտածում (76.0%), քան տղամարդիկ (68.0%): Ինչ վերաբերվում է տարիքային խմբերին, 25-29 ավելի բարձր տարիքի երիտասարդներն ավելի հաճախ են նշում, որ կլիմայական փոփոխությունը գլոբալ մարտահրավեր է (78.2%) քան 18 - 24 (71.1%) կամ մինչև 17 տարեկանները (62.7%): Գյուղաբնակ երիտասարդներն ավելի հաճախ են կլիմայական փոփոխությունը գլոբալ մարտահրավեր համարում (76.3%) քան մայրաքաղաքում (67.4%) կամ այլ քաղաքներում բնակվող երիտասարդները (70.1%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 65. **Ո՞ՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ, ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ Է (%)**



Բացի այդ, մասնակիցներին հարցրել են, արդյոք նրանք կաջակցեն Հայաստանի կառավարությանը կոշտ միջոցներ կիրառել կլիմայական փոփոխությունների դեմ: Օրինակ, հին մեքենաները, որոնք զգալիորեն աղտոտում են շրջակա միջավայրը, արգելվել են օգտագործել որոշ երկրներում՝ ստիպելով մարդկանց գնել նոր մեքենաներ, որոնք ավելի քիչ բենզին են օգտագործում: Հարցվածների մեծ մասը (74.0%) ասում է, որ միանշանակ կամ ավելի շուտ կհամաձայնվի նման սահմանափակումների հետ (Գծապատկեր 66): Հատկանշական է, որ կանայք զգալիորեն ավելի հաճախ են համաձայնվում (միանշանակ կամ ավելի շուտ այո) նման սահմանափակումների հետ (81.1%), քան տղամարդիկ (66.7%): Այլ ժողովրդագրական խմբերի միջև տարբերություններն այդքան էլ հատկանշական չեն:

Ֆոկուս-խմբային քննարկումները նաև ցույց են տալիս, որ մասնակիցների մեծ մասը կարծում է, որ պետությունը պետք է միջամտի էկոլոգիական խնդիրների կարգավորմանը և անհրաժեշտության դեպքում որոշ սահմանափակումներ մտցնի քաղաքացիների իրավունքների վրա: 14-15 տարեկանների տարիքային խումբը նշում է, որ պետությունը պետք է ֆինանսապես խրախուսի բնակչությանը դուրս գալ փողոց և մաքրել աղբը ու ներդնի ավելի մաքուր տեխնոլոգիաներ և սարքավորումներ բիզնեսի համար:

Ինձ թվում է՝ քաղաքացիների համար ֆինանսապես գայթակղիչ կարող է լինել շաբաթօրյակներ (համայնքային աշխատանքների օրեր) կազմակերպելը, որի դիմաց նրանք կարող են որոշակի գումար ստանալ: [արական սեռ, 14 տարեկան]

Հակառակ կարծիքն այն է, որ անընդունելի է պետության ցանկացած միջամտություն, որը կարող է հանգեցնել քաղաքացիների ազատությունների ոտնահարման, այսինքն՝ պետությունը չպետք է սահմանափակումներ դնի, այլ նպաստի էկոլոգիական խնդիրների լուծմանը՝ քաղաքացիների տեղեկացվածության և մասնակցության բարձրացմամբ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 66. **ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ Է ԿԻՐԱՌՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ՕՐԻՆԱԿ, ՀԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ԵՎ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ ԱՅԼԵՎՍ ԴՐԱՆՔ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՒ ՍՏԻՊՎԱԾ ԵՆ ԳՆԵԼ ԱՎԵԼԻ ՔԻՉ ՎԱՌԵԼԻՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ: ՀԱՄԱՁԱՅՆ ԿԼԻՆԵՔ, ԵԹԵ ԱՅՍՊԻՍԻ ԵՎ/ԿԱՄ ՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌՎԵԻՆ ՁԵՐ ԵՐԿՐՈՒՄ: (%)**



Կրկնում եմ, իմ կարծիքով պետք չէ մարդկանց ստիպել ինչ որ բան անել: Անհրաժեշտ է աշխատել այնպես, որ ժողովուրդն ինքը գիտակցի: Այս դեպքում, այս ամենը չի համարվի մարդու հիմնարար ազատության խախտում: Այսինքն, մարդիկ այդ քայլերը պետք է անեն ինքնուրույն, այլ ոչ թե պետության պարտադրանքով: [իգական սեռ, 22 տարեկան]

Այնուհետև դուրս է բերվել, որ կլիմայի փոփոխության հետ կապված մարդկանց զգացողությունները հիմնականում բացասական են: Շատ հաճախ հարցվածներն ասում են, որ գլոբալ տաքացման ուայն մեղմելուն ուղղված ջանքերի մասին լսելիս զգում են զազրույթ (68.4%), անօգնական վիճակ (62.3%), վախ (57.1%) և անտարբերություն (63.4%) (Գծապատկեր 67): Ինչպես և կարելի էր ակնկալել, գլոբալ տաքացում ասելով՝ հույսի և վստահության ասոցիացիաներ չեն առաջանում, մեծ թվով երիտասարդներ չունեն հույս (67.2%) կամ վստահություն (60.5%):

Այնուհետև երիտասարդներին հարցրել են կլիմայական փոփոխությունների պատճառների վերաբերյալ իրենց կարծիքը: Ըստ տվյալների, համեմատաբար ավելի շատ հարցվածներ կարծում են, որ կլիմայական փոփոխությունների պատճառ է մարդկային գործունեությունը (26.5%), քան որ դրա համար պատասխանատու են բնական գործընթացները (13.9%) (Գծապատկեր 68): Այնուամենայնիվ, հարցվածների մեծ մասը կարծում է, որ պատճառը երկուսի համադրությունն է է: Ավելի հստակ՝ հարցվածների 30.2%-ը կարծում է, որ բնական գործընթացներն են հանդիսանում կլիմայական փոփոխության հիմնական պատճառը, սակայն մարդկային գործունեությունը նույնպես դեր է խաղում, և 29.5%-ը համաձայն է, որ մարդկային գործունեությունը կլիմայական փոփոխության հիմնական շարժիչ ուժն է, սակայն բնական գործընթացները նույնպես դեր են խաղում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 67. **ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՊՆԴՄԱՆ ՀԵՏ: ԵՐԲ ԼՍՈՒՄ ԵՄ ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ ԵՎ ԱՅՆ ՄԵՂՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵՍ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԶԳՈՒՄ ԵՄ... (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 68. **ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՆՐԱՆՔ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՄԲ: ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԱՐԲԵՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԿԱՆ: ՈՐՆ Է ԱՎԵԼԻ ՄՈՏ ՁԵՐ ԿԱՐԾԻՔԻՆ (%)**



Ցանկացած տարբերություն ներկայացման մեջ տասնորդականի չցուցադրման արդյունք է:

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում մասնակիցների մեծ մասը համաձայնել է, որ մարդկային գործունեությունը կլիմայական փոփոխության հիմնական պատճառն է: Նրանք վկայակոչել են շրջակա միջավայրի աղտոտումը թափոններով, մեքենաներից արտանետվող գազերով, պլաստիկով և բնական ռեսուրսների անկայուն օգտագործումով (այսինքն՝ ծառահատումներով): Այնուամենայնիվ, նրանք չեն բացառում նաև բնական գործընթացները: Ընդհանրապես մասնակիցները հակված են նշելու, որ երկու գործոններն էլ որոշակի դեր ունեն:

Անկեղծ ասած, ես երկու կարծիքների հետ էլ համամիտ եմ: Կարծում եմ՝ կլիման փոխվում է թե մարդու գործունեությունից, թե ինքնին: Մարդկանց կողմից աղտոտման տարբեր ձևեր կան՝ պլաստիկ և CO2 արտանետումներ: Եվ այն ինքնին փոխվում է Երկրի շարժման, մագնիսական փոփոխության պատճառով: Այս բոլոր գործոնները միասին ազդում են մեր մոլորակի վրա: [իգական սեռ, 17 տարեկան]

Մասնակիցներն ավելի արդյունավետ են համարում գոյատևման նոր տեխնոլոգիաների մշակումը, քան կլիմայի փոփոխության դեմ պայքարը: Նրանք հակված են մատչելի ռեսուրսներ ներդնելու գոյատևման այս տեխնոլոգիաները զարգացնելու համար, սակայն նրանք նշում են, որ դրանք պետք է լինեն ապահով կլիմայի պահպանման տեսանկյունից:

Քննարկումների ժամանակ յուրաքանչյուր երրորդ մասնակիցը նշել է, որ փոխել է իր վարքագիծը, քանի որ մտահոգվում է կլիմայի փոփոխությամբ և էկոլոգիական խնդիրներով, մասնավորապես նրանք հրաժարվել են կամ կրճատել են պլաստիկի և թղթի օգտագործումը, սկսել են տեսակավորել աղբը, մաքրել և/կամ ծառեր տնկել: Նրանց մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչներ էին:

Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործումը վիճահարույց ծրագիր է Հայաստանում բնապահպանական, էկոլոգիական, և մարդու իրավունքների տեսանկյունից: Այս նախագծի վերաբերյալ երիտասարդների կարծիքը բաժանվում է երկու մասի. 41.6%-ը հավանություն է տալիս, իսկ 36.7%-ը դեմ է (Գծապատկեր 69): Հատկանշական է, որ հարցվածների մեկ հինգերորդից ավելին (21.7%) նշում է, որ դժվարանում է պատասխանել, կամ երբեք

ԳԾԱՊԱՏԿԵՐ 69. **ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԻՍ ԵՔ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊՐՈՅԵԿՏԻՆ: (%)**



չի լսել Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագրի մասին: Ծրագրի վերաբերյալ տեսակետների տարբերություններն ընդգծվում են հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի հիման վրա: Կան որոշ նկատելի տարբերություններ սեռի և բնակավայրի տեսակի վերաբերյալ: Երիտասարդ տղամարդիկ ավելի հակված են հավանություն տալու Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագրին (45.3%), քան երիտասարդ կանայք (37.8%): Գյուղական բնակավայրերում ապրողներն ավելի հաճախ են աջակցում հանքարդյունաբերական ծրագրին (47.7%), քան մայրաքաղաքում (39.2%) կամ այլ քաղաքներում բնակվողները (36.0%):

Ֆոկուս-խմբային քննարկումները ցույց են տալիս, որ մասնակիցների մեծամասնությունը նշում է, որ ծանոթ է Ամուլսարի ծրագրի հետ կապված խնդիրներին և դեմ է եղել դրա շահագործմանը՝ գործընթացում բնությանը պատճառվող հնարավոր վնասների պատճառով:

Կարծում եմ, որ այն չպետք է շահագործվի: Իհարկե, մենք գիտենք, որ ոսկու հանքից ստացվող մեծ գումարից կշահեր պետական բյուջեն/գանձարանը, այնուամենայնիվ, այն կհասցնի շատ ավելի մեծ վնաս հանքի շրջակա տարածքին/միջավայրին, որն իր ազդեցությունը կունենա… Այս հանքի շահագործման ընթացքում տարբեր քիմիական և պայթուցիկ նյութեր կօգտագործվեն, և մենք գիտենք, որ մոտակայքում է գտնվում Ջերմուկ քաղաքը, որը Հայաստանի ամենահայտնի առողջարանային քաղաքն է, ու չարժե այս ամենը ոչնչացնել այդ ոսկու, այդ գումարի համար: Եկեք մտածենք մեր հարստության մասին: [արական սեռ, 15 տարեկան]

Մասնակիցներից մեկը նշում է, որ շահագործող կազմակերպությունը մասնավոր է, ոչ տեղական, այսպիսով շահագործման արդյունավետությունը ցածր է:

Այս հարցը ես խորությամբ չեմ ուսումնասիրել, սակայն լսել եմ երկու կողմերի տեսակետները, այսպես ասած, միանգամայն տարբեր դեպքերում: Իմ կարծիքով՝ առաջին բանը, որին համաձայն չեմ, այն է, որ գործող ընկերությունը բրիտանական ընկերություն է լինելու: Նկատի ունեմ, եթե այն մեր երկրի կողմից շահագործվեր, ինչ-որ կերպ կհասկանայի, այն առումով, որ այն որոշակի եկամուտ կապահովեր: Սակայն ամբողջ եկամուտն ակնկալվում է, կլինի մասնավոր ընկերության վճարած հարկերից: Այսինքն՝ այլ բան է, եթե մենք կարողանայինք անձամբ կառավարել մեր հարկերը: Երկրորդ՝ ամենահամոզիչ փաստն այն է, որ բնապահպանները խաբելու պատճառ չունեն, իրենք պարզապես մարդիկ են, իրենք հետազոտողներ են և բավականին լավ համբավ ունեն, նրանք ասում են, որ դա դարերով անդառնալի հետևանք կունենա: Երրորդ, կարծում եմ, որ ըստ հանքարդյունաբերության, հարկերը կկազմեն տարեկան 30 մլն ԱՄՆ դոլար, և դա այնքան էլ հսկայական գումար չէ, որի համար արժե առնվազն 50-100 տարով ոչնչացնել Վայոց ձորի գեղեցիկ բնությունը: [արական սեռ, 21 տարեկան]

Կան նաև որոշ մասնակիցներ, ովքեր աջակցում են հանքարդյունաբերական այս ծրագրին: Շահագործման կողմնակիցները նշում են տնտեսական զարգացման հեռանկարը, որը հատկապես կարևոր է 44-օրյա պատերազմի հետևանքով ներկայիս տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Տեսեք, հիմա մեր երկրին ավելի շատ գումար է պետք, տնտեսությունը հարստացնելու միջոցներ և ռեսուրսների կարիք կա, քան մաքուր օդի: Եվ եթե մենք կարծում ենք, որ Ամուլսարը չշահագործելով մենք պետք է օդը մաքուր պահենք, փոխարենը մենք կարող ենք միջոցներ ձեռնարկել ազդեցությունը նվազեցնելու համար: Օրինակ՝ մեր երկրում մեքենաները չունեն օդափոխման համակարգ: [արական սեռ, 27 տարեկան]

Կրկնում եմ, մենք հիմա շատ ծանր վիճակում ենք, հետևաբար, թեկուզ փոքր տնտեսական աճի համար մեզ անպայման անհրաժեշտ է արտադրություն, կարծում եմ, որ դա մեզ պետք է: Ճիշտ է, մեծ վնասներ են լինելու, բայց ամեն դեպքում, առաջնային են պետության շահերը: [իգական սեռ, 22 տարեկան]

ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼՈՎ ԱՊԱԳԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ

Արցախյան պատերազմի հնարավոր վերսկսումը հայ երիտասարդների համար տագնապալի խնդիր է: Հայաստանի երիտասարդների 81.8%-ը նշում է, որ տեսնում է Արցախում պատերազմի վերսկսման ռիսկ առաջիկա հինգ տարում (Գծապատկեր 70 և 71): Ընդ որում, նրանց 39.7%-ը կարծում է, որ հստակ ռիսկ կա: Վերսկսման ռիսկը ժխտող երիտասարդների տոկոսը համեմատաբար ցածր է» նրանցից 7.7%-ը ընտրել է «որոշ չափով ոչ» իսկ 7.1%-ը պատասխանել է «միանշանակ ոչ»:.

Հարցվածների կրթական մակարդակը, սեռը և տարիքը կանխատեսում են, թե ինչպես են նրանք գնահատում Արցախյան պատերազմի վերսկսման ռիսկն առաջիկա 5 տարում: Բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի հաճախ են պատերազմի վերսկսման վտանգ տեսնում (85.4%), քան տարրական (79.1%) կամ միջնակարգ կրթությամբ երիտասարդները (81.6%) (Գծապատկեր 71): Նույն պատկերն է նաև ավելի բարձր տարիքային խմբում՝ (84.5%) 18-24 (79.8%) կամ մինչև 17 տարեկանների (80.6%) համեմատ: Իգական սեռի հարցվողները համեմատաբար ավելի հակված են կարծելու, որ պատերազմի վերսկսման ռիսկ կա(83.7%), քան արական սեռի երիտասարդները (79.9%):

Որակական տվյալները նույնպես վկայում են այն մասին, որ երիտասարդները Հայաստանում բավականին անհանգստացած են Արցախյան պատերազմի վերսկսմամբ: Որոշ դեպքերում այն նշվում է որպես Հայաստանի առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 70. **ՏԵՍՆՈՒՄ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԻԿԱ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ (%)**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 71. **ՏԵՍՆՈՒՄ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ (%)**



...որովհետև չես կարող գուշակել, թե որ վայրկյանին կարող է վերսկսել պատերազմը, կամ էլ ինչ խնդիրներ կարող են առաջանալ: Ես ինքս Կապանից եմ, և դա այս պահին մեզ համար իրական խնդիր է, մեր քաղաքը սահմանին մոտ է, ու վտանգը շատ մեծ է: [իգական սեռ, 26 տարեկան]

Ընդհանուր առմամբ, հայ երիտասարդները լավատես են իրենց ընտանիքների ապագա կենսամակարդակի նկատմամբ: Հարցվածների 44.2%-ը կարծում է, որ 5 տարում իրենց ընտանիքների կենսամակարդակը զգալիորեն կբարձրանա (Գծապատկեր 72): Բացի այդ, 37.4%-ը կարծում է, որ այն փոքր-ինչ կբարձրանա: Որոշակի կապ կա տնային տնտեսությունների ֆինանսական ինքնագնահատման մակարդակի և ապագա կենսամակարդակի ընկալումների միջև: Երիտասարդները, ովքեր գտնվում են ֆինանսական վիճակի ամենաբարձր՝ 4-րդ մակարդակում, ավելի հակված են ասելու, որ իրենց ապագա կենսապայմանները զգալիորեն կբարձրանա (56.5%), քան ավելի ցածր մակարդակում գտնվողները: Ավելի ցածր ֆինանսական կարգավիճակ (առաջին և երկրորդ) ունեցող երիտասարդներն ավելի հաճախ նշում են, որ իրենց կենսամակարդակը կմնա նույնը 5 տարի հետո (22.2% և 20.7%) բարձր կարգավիճակ ունեցողների համեմատ: Երիտասարդ տղամարդիկ հակված են զգալիորեն ավելի լավատես լինելու իրենց ապագա կենսամակարդակի նկատմամբ (52.6%), քան երիտասարդ կանայք (36.2%): Տարիքը նույնպես ազդում է ապագայի նկատմամբ այս դիրքորոշումների վրա: Ավելի բարձր տարիքային խմբի երիտասարդները (24-29) ավելի հազվադեպ են այն կարծիքին, որ իրենց ընտանիքների կենսապայմանները զգալիորեն (39.6%) կամ աննշան կբարձրանան (36.5%), համեմատած մինչև 24 տարեկանների հետ: Բացի այդ 24 - 29 տարեկան երիտասարդներն ավելի հակված են կարծելու, որ իրենց կենսամակարդակը կմնա նույնը առաջիկա 5 տարիներին (19.0%): Ոչ մի էական տարբերություն չի նկատվում կրթության և բնակավայրի տեսակի հետ կապված:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 72. **ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ... (%)**



Երիտասարդները պակաս լավատես են, երբ խոսքը վերաբերում է Հայաստանում ապագա կենսամակարդակին: Հարցվածների ընդամենը 19.2%-ն է կարծում, որ Հայաստանում կենսամակարդակը զգալիորեն կբարձրանա առաջիկա 5 տարիներին (Գծապատկեր 73): 38.0%-ը կարծում է, որ կենսամակարդակը մի փոքր կբարձրանա, իսկ երիտասարդների մեկ քառորդը կարծում է, որ այն կմնա նույնը: Մնացածը (17.8%) գտնում է, որ կենսամակարդակը կիջնի կամ զգալիորեն կիջնի: Այստեղ կրկին, ինչպես ընտանիքի դեպքում էր, տնային տնտեսությունների ֆինանսական վիճակի 4-րդ կամ ամենաբարձր մակարդակի հարցվողները հակված են ավելի լավատես լինելու, քան ավելի ցածր ֆինանսական վիճակում գտնվողները: Իգական սեռի ներկայացուցիչները մի փոքր ավելի հակված են կարծելու, որ Հայաստանում կենսապայմանները նույնը կմնան (27.4%) ի տարբերություն արական սեռի ներկայացուցիչների (22.7%): Տարրական կամ թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդներն ավելի լավատես են, քան ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները: Երևանաբնակ հարցվողներն ավելի բացասական են վերաբերվում Հայաստանի ապագա կենսամակարդակին, քան գյուղական կամ մարզերի քաղաքային բնա-կավայրերում ապրողները: Ընդհանուր առմամբ, հայ երիտասարդներն ավելի լավատես են իրենց ընտանիքների ապագա կենսամակարդակի նկատմամբ, քան երկրի ապագա կենսապայմանների:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 73. **Ի՞ՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՐԿՐՈՒՄ... (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)**



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երիտասարդության գրեթե կեսը (հիմնականում ամենաքիչ կրթված, արական սեռի և գյուղաբնակ) բացասական կարծիք ունեն Խորհրդային Միության փլուզման մասին: Հատկանշական է, որ հարցված երիտասարդները (ծնված 1993-2008 թվականներին) հետխորհրդային Հայաստանի սոցիալական միջավայրից ամենաշատն են տուժել: Նրանց պատկերացումները Խորհրդային Միության և մասամբ 90-ականների մասին լավագույնս ձևավորվել է մտերիմների պատմություններով, իսկ ավելի հաճախ տարածված ու շրջանառվող հավաքական առասպելներով: Այս տեսանկյունից, հետաքրքիր է, որ նրանք հիմնականում հակված են կարծելու, որ 90-ականների հետ համեմատ այժմ ավելի հեշտ է գումար վաստակելն ու անվտանգ ապրելը, իսկ ազատ արտահայտվելը, կրոնական կյանքը որոշելն ավելի է դժվարացել: Թերևս երիտասարդներին, ովքեր չափահաս են դարձել 90-ականներին, բարդ կլինի համաձայնել վերջին երեք պնդումների հետ:

Ընդհանրապես, երբ հարց էր ուղղվում վերջին երեսուն տարիներին Հայաստանի պատմության վերաբերյալ, երիտասարդները առանձնացնում էին մի շարք քաղաքական խնդիրներ: Դրանց թվում են կոռուպցիան՝ ընտրակեղծիքների և հովանավորչության տեսքով, վատ զինված բանակը և վերջին պատերազմում կրած պարտությունը՝ թշնամուն հողի հետագա հանձնմամբ: Արցախյան առաջին պատերազմից ի վեր, քաղաքական սխալները ներառում են խաղաղության ապահովման անարդյունավետ բանակցությունները, անկախությունից հետո արդյունաբերական կազմակերպությունների սեփականաշնորհում, պարտքի դիմաց պետական գույքի փոխանցում Ռուսաստանի Դաշնությանը, ինչպես նաև բանակում և օրենսդիր մարմնում ոչ ճիշտ կադրային քաղաքականությունը:

Ընդհանրապես, հետաքրքիր է անցյալի վերամաստավորումները զուգահեռել ներկայի գլոբալ նշանակալի խնդիրների վերաբերյալ երիտասարդների պատկերացումներին: Այս համատեքստում, անդրադառնալով կլիմայի փոփոխությանը, հայ երիտասարդներն այն համարում են ակտիվ գլոբալ սպառնալիք: Միևնույն ժամանակ, կլիմայական փոփոխությունը ավելի հավանական է, որ դիտվի որպես գլոբալ սպառնալիք բարձրագույն կրթություն ունեցողների, իգական սեռի, առավել ավագ սերնդի ներկայացուցիչների և գյուղաբնակ երիտասարդների կողմից: Ավելին, լսելով կլիմայական փոփոխության և դրա նվազեցման ջանքերի մասին, երիտասարդները հիմնականում զազրույթ, անօգնականություն, անտարբերություն և վախ են զգում, նրանք շատ ավելի քիչ հույս ու վստահություն են հայտնում: Նշենք, որ չնայած բնապահպանական խնդիրների նկատմամբ երիտասարդների զգայունությանը, նրանց միայն 1/3-ն է դեմ արտահայտվել Ամուլսարի հանքի շահագործմանը, ինչին հավանություն են տալիս տղամարդիկ և գյուղաբնակ երիտասարդները: Չնայած քանակական հետազոտության արդյունքներին, որակական հետազոտությունը ցույց է տվել, որ երիտասարդների մեծ մասը ծանոթ է Ամուլսարի խնդրին և դեմ է շահագործմանը՝ բնությանը հասցվող հնարավոր վնասների պատճառով:

Ընդհանուր առմամբ, երիտասարդներին լրջորեն մտագոհում է առաջիկա հինգ տարիների ընթացքում Արցախյան պատերազմի վերսկսման հավանականությունը: Թեև երիտասարդների ընկալումներն առաջիկա հինգ տարիներին երկրում կենսապայմանների մասին քիչ լավատեսական են, նրանք հիմնականում ավելի լավատեսական են իրենց անձի ապագայի վերաբերյալ՝ հավատալով, որ իրենց ընտանիքի կենսապայմանները կբարելավվեն հինգ տարի հետո: Ավելի բարձր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող երիտասարդները, արական սեռի և ավելի կրտսեր տարիքի երիտասարդներն ավելի լավատես են իրենց ապագայի նկատմամբ:

10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը բացահայտեց ժամանակակից հայ երիտասարդության յուրահատուկ և բազմազան հավաքական կերպարը: Ընդհանուր առմամբ, հայ երիտասարդների աշխարհայացքն ու վերաբերմունքը տարբերվում են՝ կախված սեռից (իգական, արականտղամարդ/կին), բնակության վայրից (գյուղ/քաղաք), տարիքային միջակայքից (14-17, 18-24, 25-29), կրթական մակարդակից և ամուսնական կարգավիճակից: Այսօրվա երիտասարդության կարծիքներում տեղական և գլոբալ սոցիալական հարթությունները խառնված են, դրանք կարելի է բնութագրել երերուն բնույթով և արժեքների անորոշությամբ: Մի դեպքում, նրանք արժևորում են արևմտյան արժեքները՝ արտահայտելով ազատական դիրքորոշումներ, մեկ այլ դեպքում Եվրոպային ընդդիմադիր դիրք են գրավում՝ իրենց չհամարելով եվրոպացի: Հաճախ հակասական են նաև երիտասարդների և նրանց օբյեկտիվ կենսապայմանների սուբյեկտիվ գնահատականները: Չնայած նրանք սուբյեկտիվ բարեկեցության սանդղակով իրենց ավելի բարձր են դասում, քան մյուս երիտասարդները, իրականում նրանց միայն 1/3-ն ունի անձնական եկամուտ, իսկ 1/2-ից ավելին ֆինանսական և սոցիալական այլ հարցերում կախված է ծնողներից ու բարեկամներից :

Թեև 2015 թվականի հարցման արդյունքների համեմատ Հայաստանի երիտասարդներն ավելի շատ են սկսել արժևորել ընտրություններին մասնակցությունը, սակայն շարունակում են մնալ քաղաքականապես պասիվ և անտարբեր քաղաքականության նկատմամբ: Նրանք նաև բավականին պասիվ են կամավորական գործունեության առումով, և նրանց ակտիվությունն ավելի շատ ռացիոնալ է և ինքնամոտիվացված, քան ալտրուիստական: Ավելին, նրանց վստահությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նկատմամբ բավականին ցածր է:

Ռազմաքաղաքական ճգնաժամերի համատեքստում երիտասարդների քաղաքական առաջնահերթություններն առաջին հերթին կապված են հարևանների հետ հակամարտության, տարածքային ինտեգրման և արտաքին քաղաքական լարվածության հետ: Մասնակիցները միայն երկրորդ տեղում են քննարկում սոցիալ-տնտեսական խնդիրները: Այս ֆոնին, երիտասարդների վստահությունը հատկապես քաղաքական կուսակցությունների և լրատվամիջոցների նկատմամբ շատ ցածր է:

Մեծացած լինելով հետխորհրդային Հայաստանում, երիտասարդներն ունեն հակասական ու ոչ միանշանակ պատկերացումներ սովետական անցյալի և 90-ականների մասին: Նրանց ընկալումները լավագույն դեպքում պայմանավորված են հարազատների պատմություններով, ավելի հաճախ՝ ընդհանուր և շրջանառվող հավաքական առասպելներով: Անցյալի մասին հակասական պատկերացումները զուգորդվում են ներկայի գլոբալ խնդիրների վերաբերյալ անհանգստությունների ու վախերի հետ: Մասնավորապես, կլիմայական փոփոխությունը և այն նվազեցնելու ջանքերը զազրույթ, անօգնա-կանություն, անտարբերություն և վախ են առաջացնում, հազվադեպ են հույս ու վստահություն ներշնչում:

Ընդհանուր առմամբ երիտասարդները լուրջ մտահոգություններ ունեն ապագայի վերաբերյալ՝ նկատի ունենալով մոտ ապագայում պատերազմի վերսկսման հավանականությունը: Չնայած դրան, երիտասարդները սոցիալ-տնտեսական առումով ավելի լավատես են ապագայի նկատմամբ, և նրանց մեծ մասը մտադիր չէ երկարաժամկետ կամ ընդմիշտ հեռանալ երկրից:

Ընդհանրացնելով երիտասարդների հավաքական կերպարը և առանձնացնելով նրանց ըստ սոցիալ ժողովրդագրական ցուցանիշների՝ ստանում ենք հետևյալ պատկերը:

Սեռ	
Արական	**Իգական**
Սոցիալական ներառականություն	Սոցիալական մեկուսացում
Ֆինանսական անկախություն	Ֆինանսական կախվածություն
Հիմնականում ռուսամետ	Հիմնականում ամերիկամետ
Տարիք	
Ցածր	**Բարձր**
Լավատեսություն	Հոռետեսություն
Հիմնականում ամերիկամետ	Հիմնականում ռուսամետ
Հանդուրժողականություն	Անհանդուրժողականություն
Ընտանեկան արժեքներ	Քաղաքացիական արժեքներ
Բնակություն	
Գյուղ	**Քաղաք**
Ֆինանսական կախվածություն	Ֆինանսական անկախություն
Կրթական առումով ակտիվ	Կրթական առումով պասիվ
Կրթություն	
Ցածր	**Բարձր**
Լավատեսություն	Հոռետեսություն

11

ՀՂՈՒՄՆԵՐ

Bosse, T., Hoogendoorn, M., Klein, M. C. A., Treur, J., van der Wal, C. N., & van Wissen, A. (2013). Modelling collective decision making in groups and crowds: Integrating social contagion and interacting emotions, beliefs and intentions. *Autonomous Agents and Multi-Agent Systems*, 27(1), 52–84. https://doi.org/10.1007/s10458-012-9201-1

Cote, J. E. (2018). Youth Development in Identity Societies: *Paradoxes of Purpose*. Taylor & Francis.

Furlong, A., & Cartmel, F. (1997). *Young people and social change: Individualization and risk in late modernity*. Open university press.

Furlong, A., & Cartmel, F. (2006). *Young people and social change.* McGraw-Hill Education (UK).

Gasparyan, N. (2020). Globalization and Armenian Identity. Challenges and Integration (Armenia and Artsakh). *Armenian Folia Anglistika*, 16(1 (21)), Article 1 (21). https://doi.org/10.46991/AFA/2020.16.1.157

Hurrelmann, K., & Quenzel, G. (2015). Lost in transition: Status insecurity and inconsistency as hallmarks of modern adolescence. *International Journal of Adolescence and Youth*, 20(3), 261–270.

Jukneviėius, S., & Savicka, A. (2003). From restitution to innovation. *Volunteering in Postcommunist Countries, În Paul Dekker [i Loek Halman, Editori, 2003: 127-142].*

Karamyan, L. (2020). *Employment issues in RA and related state programs.* Open Society Foundations – Armenia. https://www.osf.am/wp-content/uploads/2020/08/ՀՀ-ում-զբաղվածության-հիմնահարցերն-ու-դրանց-հետ-կապված-պետական-ծրագրերը.pdf

Manukyan, S. (2011). *National Youth Report of Armenia* (Vol 1). RA Ministry of Sports and Youth Affairs.

Mkrtichyan, A., Vermishyan, H., & Balasanyan, S. (2016). Independence Generation. *Youth Study*, 15–16.

Musick, M. A., & Wilson, J. (2007). *Volunteers: A social profile.* Indiana University Press.

Roberts, K., Pollock, G., Rustamova, S., Mammadova, Z., & Tholend, J. (2009). Young adults' family and housing life-stage transitions during post-communist transition in the South Caucasus. *Journal of Youth Studies*, 12(2), 151–166.

Roberts, K., Pollock, G., Tholen, J., & Tarkhnishvili, L. (2009). Youth leisure careers during post-communist transitions in the South Caucasus. *Leisure Studies*, 28(3), 261–277.

Scott, J., & Marshall, G. (Eds.). (2005). *A dictionary of sociology* (3rd ed). Oxford University Press.

Skrebyte, A., Garnett, P., & Kendal, J. R. (2016). Temporal relationships between individualism–collectivism and the economy in Soviet Russia: A word frequency analysis using the Google Ngram corpus. *Journal of Cross-Cultural Psychology*, 47(9), 1217–1235.

Strauß, S. (2008). Volunteering and social inclusion. *Interrelations between Unemployment and Civic Engagement.*

The State Program of Employment Regulation 2022. (2021). State Employment Agency of the Ministry of Labour and Social Issues of the RA. https://employment.am/am/405/LinkPage.html

Vermishyan, H., & Darbinyan, T. (2021). IDEOLOGICAL FOUNDATIONS AND CULTURAL MANIFESTATIONS OF YOUTH VOLUNTEERING IN ARMENIA. *Studies*, 14(2), 239–262.

Vermishyan, H., Michikyan, S., & Ghalamdaryan, A. (2021). *Labour conditions in Armenian service sector.* Friedrich-Ebert-Stiftung.

Woodman, D. (2012). *Youth Studies: An Introduction.* Routledge. https://doi.org/10.4324/9780203862094

12

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՈՒ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ. տվյալները ներկայացված են կլորացման կանոններին համապատասխան: Եթե որոշ դեպքերում արժեքների հանրագումարը 100% չէ, դա կամայական որոշման արդյունք չէ. նախնական արժեքները պահպանված են և ներկայացված տվյալներում որոշ տարբերությունները տասնորդական արժեքների չներկայացման արդյունք են: Սրանով են պայմանավորված գրաֆիկներում արտահայտված որոշ (ոչ նշանակալի) շեղումները:

ԷՋ 16 ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.ԸՆԿԱԼՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԻՋԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ (ԼՐԱՑՎԱԾ ՕՐԻՆԱԿ, ՈՎՔԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԷԻՆ «ՉԳԻՏԵՄ» ԿԱՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԷԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԻՆ)

ԷՋ 17 ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԵԹԵ ՄՏԱԾԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՊՐՈՒՄ ԵՆ..., ԻՆՉՊԵՍ Է ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՄԵՄԱՏՎՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԵՏ (%)

ԷՋ 18 ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ՈՐՊԵՆՔ ԵՆ ՁԵՐ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (%, ԲԱՁՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ԷՋ 19 ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԽՄԲԵՐԻ (%)

ԷՋ 22 ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԽՄԲԻ (%)

ԷՋ 23 ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ԳՈՀ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՑ, ՈՐ ՍՏԱՆՈՒՄ ԵՔ/ՍՏԱՑԵԼ ԵՔ (% ՇԱՏ ԳՈՀ ԵՄ և ԻՆՉ ՈՐ ԱՌՈՒՄՈՎ ԳՈՀ ԵՄ, ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԽՄԲԵՐԻ)

ԷՋ 23 ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ԳՈՀ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՑ, ՈՐ ՍՏԱՆՈՒՄ ԵՔ/ՍՏԱՑԵԼ ԵՔ (% ՇԱՏ ԳՈՀ ԵՄ ԵՎ ԻՆՉ ՈՐ ԱՌՈՒՄՈՎ ԳՈՀ ԵՄ, ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԽՄԲԵՐԻ)

ԷՋ 24 ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԽՈՇՈՐ ԴԵՄՈԳՐԱՖԻԿ ԽՄԲԵՐԻ ((%)

ԷՋ 25 ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. «ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ՉԻ ՍՈՎՈՐՈՒՄ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՉ ԽՄԲԵՐԻ (%)

ԷՋ 25 ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. ՎԵՐՋԻՆ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉՎՃԱՐՎՈՂ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ ԵՔ (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)

ԷՋ 26 ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. ՈՐՏԵՂ ԵՔ ԿԱՏԱՐԵԼ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՎԵՐՋԻՆ 12 ԱՄԻՍՆԵՐԻՆ (%, ԲԱՁՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ)

ԷՋ 30 ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (%)

ԷՋ 31 ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ)

ԷՋ 33 ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՎՔԵՐ ԱՍԵԼ ԷԻՆ, ՈՐ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՉԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՎՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ (%, ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԽՄԲԵՐԻ)

ԷՋ 34 ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐ ԿԱՆ: ՎԵՐՋԻՆ ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ԱՐԵԼ ԵՔ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ, ԿԱՄ ԼՈՒՐՋ ԿՄՏԱԾԵԻՔ ԴԱ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (%)

ԷՋ 36 ԳԾԱՊԱՏԿԵՐ 16. . ՊՐՆ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՊԱՀԻՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ/ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԸ (%)

ԷՋ 37 ԳԾԱՊԱՏԿԵՐ 17. ՊՐՆ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԱՅՍ ՊԱՀԻՆ. ԸՍՏ ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ, ՄԵԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ԷՋ 38 ԳԾԱՊԱՏԿԵՐ 18. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐԵԼ COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (%)

ԷՋ 39 ԳԾԱՊԱՏԿԵՐ 19. ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԻՆՉՊԷՍ ԿՊԱՏԿԵՐԵԻՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԱՅՍ ՍԱՆԴՂԱԿԻ ՎՐԱ՝ ՁԱԽԻՑ ԱՋ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 40 FԳԾԱՊԱՏԿԵՐ 20. ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՆՐԱՆՔ ՀԱՃԱԽ ՆՇՈՒՄ ԵՆ ԱՋԱԿԱՆ ԿԱՄ ՁԱԽԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ: ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ. ՆՇՎԱԾ ՑԱՆԿԻՑ ՊՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ Է ՄՈՏ ՁԱԽԻՆ, ՈՐԸ ԱՋԻՆ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 46 ԳԾԱՊԱՏԿԵՐ 21. ՈՐՔԱՆ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՏ ԼԻՆԵՐ ԱՐԱՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԿԱՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ (%)

ԷՋ 47 ԳԾԱՊԱՏԿԵՐ 22. ՈՐՔԱՆՈՎ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՏ ԼԻՆԵՐ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԿԱՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ (%)

ԷՋ 47 ԳԾԱՊԱՏԿԵՐ23. ՈՐՔԱՆՊՎ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է (%)

ԷՋ 48 ԳԾԱՊԱՏԿԵՐ 24. ՈՐՔԱՆՊՎ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է: ԸՍՏ ԲՆԱԿՈՒԹՅ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵՍԱԿԻ, ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 49 ԳԾԱՊԱՏԿԵՐ 25. ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԻՑ ՊՐՆ Է ԱՎԵԼԻ ՇԱՏ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՍԻՆ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 50	ԳԾԱՊԱՏԿԵՐ 26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՊՐ ԵՐԿՐԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ… Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ (%, ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 51	ԳԾԱՊԱՏԿԵՐ 27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՇՎԱԾՆԵՐԻՑ ՊՐ ԵՐԿՐԻ ՀԵՏ ԿՍՊԱՌՆԱ … Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ, Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ, ԵՎ Դ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (%, ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 53	ԳԾԱՊԱՏԿԵՐ 28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ… Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ)ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ (%, ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 53	ԳԾԱՊԱՏԿԵՐ 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ… Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. (%, ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 54	ԳԾԱՊԱՏԿԵՐ 30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՊԱՍՏԻ... Ա)ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, Բ) ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ Գ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ. (%, ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 55	ԳԾԱՊԱՏԿԵՐ 31. ՈՐՔԱՆՊՎ ԵՆ ՈՏՈՐԵՎ ԹՎԱՐԿՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 55	ԳԾԱՊԱՏԿԵՐ 32. ՈՐՔԱՆՊՎ ԵՆ ՍՏՈՐԵՎ ԹՎԱՐԿՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 56	ԳԾԱՊԱՏԿԵՐ 33. ՈՐՔԱՆՊՎ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)
ԷՋ 57	ԳԾԱՊԱՏԿԵՐ 34. ՈՐՔԱՆՊՎ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ԴՐԱԿԱՆ» ԵՎ «ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 63	ԳԾԱՊԱՏԿԵՐ 35. ՈՐՔԱՆՊԻՎ ԵՔ ԴՈՒՔ ՁԵԶ ՏԵՍՆՈՒՄ ՈՐՊԵՍ … (%)
ԷՋ 64	ԳԾԱՊԱՏԿԵՐ 36. ՈՐՔԱՆՊԻՎ ԵՔ ԴՈՒՔ ՁԵԶ ՏԵՍՆՈՒՄ ՈՐՊԵՍ…(%, ԸՍՏ ԽՈՇՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)
ԷՋ 65	ԳԾԱՊԱՏԿԵՐ 37. ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ, ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑԱԿԻՑ ԻՆՉԻ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ, ԻՆՉԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ (%) (%)
ԷՋ 67	ԳԾԱՊԱՏԿԵՐ 38. ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ, ՀԵՏԵՎՅԱԼ ՑԱՆԿԻՑ ԻՆՉԻ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՎ ԻՆՉԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ: (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ԵՎ «ԼԻՈՎԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %)
ԷՋ 68	ԳԾԱՊԱՏԿԵՐ 39. ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ, ՀԵՏԵՎՅԱԼ ՑԱՆԿԻՑ ԻՆՉԻ ՀԵՏ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՎ ԻՆՉԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ: (ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ՄԻԱՅՆ «ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ԵՎ «ԼԻՈՎԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ %)
ԷՋ 69	ԳԾԱՊԱՏԿԵՐ 40. ՄԵՆՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆՔ ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ: ՈՐՔԱՆՊԻՎ ԵՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՏԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՁԵԶ ՀԱՄԱՐ(%)
ԷՋ 70	ԳԾԱՊԱՏԿԵՐ 41. ՄԵՆՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆՔ ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ: ՈՐՔԱՆՊԻՎ ԵՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՏԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՁԵԶ ՀԱՄԱՐ? (ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ «ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ%)
ԷՋ 71	ԳԾԱՊԱՏԿԵՐ 42. ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻՑ ՊԻՐ ԵՐԵՔՆ ԵՔ ԴՈՒՔ ԱՄԵՆԱԲԱՐՁՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԲԱԶՄԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ, %)
ԷՋ 72	ԳԾԱՊԱՏԿԵՐ 43. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵՔՆԵՐԻՑ ՊԻՐ ԵՐԵՔՆ ԵՍ ԴՈՒ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԱՄԵՆԱՇԱՏԸ (%)
ԷՋ 73	ԳԾԱՊԱՏԿԵՐ 44. ՈՐՔԱՆՊԻՎ ԵՔ ՎԱՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ? (%)
ԷՋ 74	ԳԾԱՊԱՏԿԵՐ 45. ՈՐՔԱՆՊԻՎ ԵՔ ՎԱՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ (ՄԻԱՅՆ «ԲԱՎԱԿԱՆԻՆ ՇԱՏ» և «ԼԻՈՎԻՆ ՎԱՏԱՀՈՒՄ ԵՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ %)
ԷՋ 75	ԳԾԱՊԱՏԿԵՐ 46. ՈՐՔԱՆՊԻՎ ԵՔ ՎԱՏԱՀՈՒՄ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆՐԻՆ (ՄԻԱՅՆ «ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՉԵՄ ՎԱՏԱՀՈՒՄ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ %)
ԷՋ 76	ԳԾԱՊԱՏԿԵՐ 47. ՊԻՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԵՏԱՅԱԼ ՄԱՐԴԿԱՆՑ… (%)
ԷՋ 77	ԳԾԱՊԱՏԿԵՐ 48. ՀԵՏԱՅԱԼ ԱՆՁԱՆՑԻՑ ՊԻՎ Է ԱՊՐՈՒՄ ՁԵԶ ՀԵՏ ՆՈՒՅՆ ՏԱՆԸ (%)

ԷՋ 77 ԳԾԱՊԱՏԿԵՐ 49. ՀԵՏԱՀԱԼ ՊՆԴՈՒՄՆԵՐԻՑ ՊՐՆ Է ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻԴ ՀԵՏ ՔՈ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (%)

ԷՋ 78 ԳԾԱՊԱՏԿԵՐ 50. ՄՏԱԴՐ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ ԱՊԱԳԱՅՈՒՄ (%)

ԷՋ 78 ԳԾԱՊԱՏԿԵՐ51. ՊՐ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՔ ՄՏԱԴԻՐ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՆԱԼ (ՄԻՋԻՆ)

ԷՋ 78 ԳԾԱՊԱՏԿԵՐ 52. ԻՆՉ ՍԵՌԻ ԵՐԵԽԱ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ ՈՒՆԵՆԱԼ

ԷՋ 79 ԳԾԱՊԱՏԿԵՐ 53. ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ՈՐ ՉՑԱՆԿԱՆԱՔ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ (%)

ԷՋ 84 ԳԾԱՊԱՏԿԵՐ 54. ԽՍՀՄ-Ը ՓԼՈՒՀՎԵՑ ՄՈՏ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ: ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՏԵՂՅԱԿ ԽՍՀՄ-Ի ՄԱՍԻՆ, ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԽՍՀՄ ՓԼՈՒՀՈՒՄԸ ԼԱՎ, ԹԵ՞ ՎԱՏ ԲԱՆ ԷՐ (%, ԼԻԱՐԺԵՔ ՆՄՈՒՇ)

ԷՋ 85 ԳԾԱՊԱՏԿԵՐ 55. ԽՍՀՄ-Ը ՓԼՈՒՀՎԵՑ ՄՈՏ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ: ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՏԵՂՅԱԿ ԽՍՀՄ-Ի ՄԱՍԻՆ, ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԽՍՀՄ ՓԼՈՒՀՈՒՄԸ ԼԱՎ ԹԵ՞ ՎԱՏ ԲԱՆ ԷՐ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 86 ԳԾԱՊԱՏԿԵՐ 56. ԻՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ 90-ԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԿՐԻՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԼԱՎ, ԹԵ ՎԱՏ ԲԱՆ ԵՆ ԲԵՐԵԼ (%, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՄՈՒՇ)

ԷՋ 87 ԳԾԱՊԱՏԿԵՐ 57. 90-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ԱՐԴՅՈՔ ԽՍՀՄ-Ի ՎԵՐՋԸ ԼԱՎ ԹԵ ՎԱՏ ԲԱՆ ԷՐ (%)

ԷՋ 87 ԳԾԱՊԱՏԿԵՐ 58. ԵՐԲ ՄՏԱԾՈՒՄ ԵՔ ԱՅՍՕՐՎԵՎ և ՁԵՐ ԻՄԱՑԱԾ ԿԱՄ ՊԱՏԿԵՐԱՑՐԱԾ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՐԴՅՈՔ ԴԱՐՁԵԼ Է ԱՎԵԼԻ ՀԵՇՏ, ԹԵ՞ ԴԺՎԱՐ…(%)

ԷՋ 88 ԳԾԱՊԱՏԿԵՐ 59. ԵՐԲԵՎԷ ԵՂԵԼ ԵՔ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ (%)

ԷՋ 89 ԳԾԱՊԱՏԿԵՐ 60. ԳՆԱՑԵԼ ԵՔ ԱՐՏԵՐԿԻՐ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ (%)

ԷՋ 90 ԳԾԱՊԱՏԿԵՐ 61. ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՄԵԿՆԵԼ ԱՐՏԵՐԿԻՐ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ (%)

ԷՋ 91 ԳԾԱՊԱՏԿԵՐ 62. ՊՐՆ Է ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՔ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԱՐՏԵՐԿԻՐ:ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ: (%)

ԷՋ 92 ԳԾԱՊԱՏԿԵՐ 63. ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՄՆԱԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ? (%)

ԷՋ 93 ԳԾԱՊԱՏԿԵՐ 64. ՊՐՆ Է ԱՅՆ ՄԵԿ ԵՐԿԻՐԸ, ՈՐՏԵՂ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ: ՆՇԵՔ ԱՅՆ ՄԵԿԸ, ՈՐՏԵՂ ԱՄԵՆԱՇԱՏԸ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ: (%)

ԷՋ 94 ԳԾԱՊԱՏԿԵՐ 65. ԻՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ՞Ն է (%)

ԷՋ 95 ԳԾԱՊԱՏԿԵՐ 66. ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ Է ԿԻՐԱՌՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ՕՐԻՆԱԿ, ՀԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ԵՎ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ ԱՅԼԵՎՍ ԴՐԱՆՔ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՒ ՍՏԻՊՎԱԾ ԵՆ ԳՆԵԼ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԲԵՆԶԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ: ՀԱՄԱՁԱՅՆ ԿԼԻՆԵ՞Ք ԵԹԵ ԱՅՍՊԻՍԻ ԵՎ/ԿԱՄ ՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌՎԵԻՆ ՁԵՐ ԵՐԿՐՈՒՄ: (%)

ԷՋ 96 ԳԾԱՊԱՏԿԵՐ 67. ՈՐՔԱՆ՞Վ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՂՄԱՆ ՀԵՏ: ԵՐԲ ԼՍՈՒՄ ԵՄ ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ և ԱՅՆ ՄԵՂՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵՍ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԶԳՈՒՄ ԵՄ… (%)

ԷՋ 96 ԳԾԱՊԱՏԿԵՐ68. ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ; ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՆՐԱՆՔ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՆ ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԱՐԲԵՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԿԱՆ: Ո՞ՐՆ Է ԱՎԵԼԻ ՄՈՏ ՁԵՐ ԿԱՐԾԻՔԻՆ (%)

ԷՋ 97 ԳԾԱՊԱՏԿԵՐ 69. ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԻ՞Մ ԵՔ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊՐՈՅԵԿՏԻՆ: (%)

ԷՋ 99 ԳԾԱՊԱՏԿԵՐ 70. ՏԵՍՆՈՒ՞Մ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԻԿԱ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ (%)

ԷՋ 99 ԳԾԱՊԱՏԿԵՐ 71. ՏԵՍՆՈՒ՞Մ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԻԿԱ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ (%)

ԷՋ 100 ԳԾԱՊԱՏԿԵՐ 72. ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ… (%)

ԷՋ 101 ԳԾԱՊԱՏԿԵՐ 73. Ի՞ՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՐԿՐՈՒՄ… (%, ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ)

13

ՖԷՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս հրապարակումը ՖԷՀ միջազգային երիտասարդական ուսումնասիրությունների շարքի մաս է կազմում: 2009թ.-ից ի վեր ՖԷՀ-ն իրականացրել է բազմաթիվ երիտասարդական հետազոտություններ ողջ աշխարհում: 2018 թ.-ից սկսած ՖԷՀ երիտասարդական հետազոտությունների առանցքում են մասնավորապես Հարավ-արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի, Արևելյան Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան երկրները: Հետագայում նախատեսվում են իրականացնել ուսումնասիրություններ Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի, ինչպես նաև այլ երկրներում: Երիտասարդության շրջանում միջազգային ուսումնասիրությունները Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կարևորագույն ծրագրերից է՝ ապագայի ժողովրդավարությունը ուսումնասիրելու, ձևավորելու և ամրապնդելու համար: Ուսումնասիրությունը նպատակ ունի նպաստել եվրոպական խոսույթին այն մասին, թե ինչպես են երիտասարդ սերունդները տեսնում իրենց հասարակությունների զարգացումը, իրենց անձնական ապագան ազգային և համաշխարհային վերափոխումների ժամանակաշրջանում: Ներկայացուցչական ուսումնասիրությունները համատեղում են հետազոտության որակական և քանակական գործիքներ՝ նպատակ ունենալով տեղական թիմերի հետ սերտ համագործակցության շնորհիվ իրականացնել բարձր որակի հետազոտություն՝ զգայուն վերաբերվելով անչափահասների վարքագծին և ակնկալիքներին:

Խորհրդատվական խորհուրդը (դոկտոր Միրան Լավրիչ, համալսարանի պրոֆ. դոկտոր Մարիուս Հարրինգ, Դանիելա Լամբի, Անդրաս Բիրո-Նագին և դոկտոր Մարթինշ Կապրանս) աջակցում է Երիտասարդական ուսումնասիրությունների մեթոդաբանական և հայեցակարգային ձևավորման աշխատանքներին:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Հարություն Վերմիշյանը (ս.գ.թ.) Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչն է (2017թ.), ինչպես նաև ««Սոցիես» փորձագիտական կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիրն (2009թ.) ու նախագահը (2020թ.): Հարությունն ունի ավելի քան 15 տարվա դասավանդման և հետազոտական աշխատանքի փորձ տեղական և միջազգային կազմակերպություններում: Նրա հետազոտական հետաքրքրությունների ոլորտները ներառում են սոցիոլոգիայի տեսությունը և պատմությունը, նարատիվ մեթոդաբանությունը, ինքնության հիմնահարցերը, գյուղի և քաղաքի սոցիոլոգիան: Հարությունը հեղինակ է երեսունից ավելի գիտական և մեթոդական հրապարակումների, որոնց շարքում են՝ «Գյուղականության ծգնաժամը Հայաստանում» (2022թ.), «Անկախության սերունդ» (2016թ.), «Լոկալ ինքնությունները Երևանում. քաղաքային տարածության կառուցվածքները» (2015թ.), «Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները Հայաստանի գյուղական համայնքներում» (2013թ.) մենագրությունները:

Սոնա Բալասանյանը Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող է և Հայաստանում հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի գործադիր տնօրենը: Սոնան մագիստրոսի (2009թ.) և ասպիրանտուրայի (2012թ.) աստիճաններ է ստացել ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետում, ինչպես նաև մագիստրոսի աստիճան Օքսֆորդի համալսարանի կրթության ֆակուլտետում (Մեծ Բրիտանիա, 2015թ.): Ներկայումս Վիեննայի համալսարանի կրթության ֆակուլտետի ասպիրանտ է: Սոնան ներգրավված է եղել տեղական և միջազգային բազմաթիվ նախագծերում՝ համագործակցելով ԱՄՆ Պետդեպարտամենտի, ՄԱԿ Զարգացման ծրագրերի, «Բաց հասարակության հիմնադրամի», Գիտության պետական կոմիտեի և «Հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի» (Մատենադարան) հետ: Սոնան եղել է Հայնրիխ Բյոլլ հիմնադրամի կրթաթոշակառու, ինչպես նաև ՀԲԸՄ գիտաշխատող և «Լույսի» հիմնադրամի շրջանավարտ: Հեղինակ է մենագրությունների, գիտական հոդվածների, էսսեների և վերլուծական զեկույցների:

Տատյանա Դարբինյանը Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանություն» կրթական ծրագրի մագիստրանտ է և «Սոցիես» փորձագիտական կենտրոն» ՀԿ-ի ծրագրերի և հաղորդակցության համակարգողը (2022թ.): Տատյանան ստացել է ԵՊՀ Սոցիոլոգիայի բակալավրի աստիճան (2021թ.): Մասնակցել է Էրազմուս+ Ուսանողների փոխանակման ծրագրին (2022թ.)՝ սովորելով Գերմանիայի Լյուդվիգսհաֆենի համալսարանի «Տնտեսություն և հասարակություն» բաժնում: «Սոցիես» փորձագիտական կենտրոնում ստացել է գիտահետազոտական կրթաթոշակ (2021թ.) «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (DATA) ծրագրի շրջանակում, որը ստեղծվել և աջակցություն է ստանում ԱՄերիկայի Միացյալ Նահանգների զարգացման գործակալության կողմից: Նրա հետազոտական հետաքրքրությունները ներառում են կամավորականության և մասնակցայնության հիմնախնդիրները քաղաքացիական հասարակության և երիտասարդության ոլորտներում, երիտասարդների ինքնության ուսումնասիրությունները, նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը: Տատյանան գիտական հոդվածի և վերլուծական զեկույցների հեղինակ է: